

ՀՈՂՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՃԵՌՏՎԱԳՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ - 2013

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՄԱՐԱՆ

ՀՈՂՄԻԿ ՍԱՐԳԱՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԵԹՈԴՆԵՐԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵԽԱՐԿ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2013



178669

ՀՏԴ 551 (07)
ԳՄԴ 26.3 ց 7
Ա 259

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ աշխարհագրության ու երկրաբա-
նության ֆակուլտետի գիտական խոր-
հուրդը

ՍԱՐԳԱՅԱՆ Հ.

Երտագրական ուսումնասիրությունների մեթոդնե-
րը: Ուսումնական ձեռնարկ / Հ.Հ. Սարգսյան, Ա.Գ.
Գրիգորյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2013, 116 էջ

Զեննարկում շարադրված են ապարների հարաբերա-
կան և բացարձակ հասակների որոշման, երկրաբանական
կտրվածքների կազմման, հասակային մասնատման ու
համահարաբերակցման մեթոդները: Առանձնահատուկ
ուշադրություն է դարձված հենակետային ու տիպային
կտրվածքների բնութագրմանը: Քննարկված են երկրաբա-
նական ժամանակագրության հիմնադրույթները, ներկա-
յացված են ընդհանուր (միջազգային) և տեղական շեր-
տագրական ստորաբաժանումների առանձնացման շա-
փանիշները և ընդհանուր շերտագրական սանդղակը:

ՀՏԴ 551 (07)
ԳՄԴ 26.3 ց 7

ISBN 978-5-8084-1778-6

© ԵՊՀ հրատարակչություն, 2013
© Սարգսյան Հ.Հ., 2013
© Գրիգորյան Ա.Գ., 2013

ԸՆԴԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՍԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Շերտագրությունը որպես գիտություն ծագել է XVIII-XIX դարերի սահմանում, երբ երկրաբանության մեջ կիրառվեց ուսումնասիրությունների հներանական մեթոդը: Սակայն մինչ այդ ապարների շերտերի հասակային փոխարարքերության հարցերը հետաքրքրել են շատ բնախույզների: Այսպես, դեռևս XVII դարում Նիկոլաոս Ստեննը (1638-1687 թթ.) լինելով բժիշկ, գրադիմում էր նաև երկրաբանական դիտարկումներով Բուլղարի հյուսիսում և առաջինն էր, ով իր հրատակած աշխատանքում նկարագրեց նստվածքային շերտերի առաջացման գործընթացը և բաժանեց երիտասարդ, միջին և հին շերտերի: Հետաքրքրի է նշել, որ դեռևս այդ ժամանակ իր կողմից ձևակերպվեցին շերտագրության մի քանի հիմնական սկզբունքներ՝ 1) շերտադասվածքի հաջորդականություն, ամեն նոր շերտ երիտասարդ է ստորինից և հին է վերդիմից, 2) սկզբնական շերտերը հորիզոնական են եղել, 3) ջրային միջավայրում սկզբնական նստվածքաշերտերն անընդհատ են, որոնք սեպանման վերանում են ավազանի եզրային մասերում:

Ֆրանսիացի գիտնական-բնախույզ Ժ.Լ.Բյուֆոնն (1707-1788 թթ.) առաջինը նշեց, որ օրգանական մնացորդները հանդիսանում են պարփակող ապարների հասակի ցուցիչ: Նա իր «Երկրի տեսություն» աշխատությունում շարադրեց Երկրի երկրաբանական պատմության մասին իր տեսակետը:

Ջ.Արրուիխոն (1714-1795 թթ.), շարունակելով Ստեննի աշխատանքները, Հյուսիսային Բուլղարի երկրաբանական կտրվածքում առաջին անգամ տվեց ապարների մասնատման սխեման և ըստ հասակի առանձնացրեց ապարների չորս համային՝ բյուրեղային ապարներ՝ խիստ ծալքավորված, առանց բրածոների; 2) երկրորդային՝ մարմարներ՝ բրածո մնացորդներով; 3) երրորդային՝ թույլ ամրացված շերտավոր ապարներ՝ հարուստ բրածո կեն-

դանիների և բույսերի մնացորդներով; 4) դարավանդների և ժամանակակից գետահովտի ողողահուն, փխրուն նստվածքներ, որտեղից էլ բխում է չորրորդական ժամանակաշրջանի անվանումը:

Ա.Գ.Վեռները (1749-1817 թթ.), Ֆրայբուրգի լեռնային ակադեմիայի պրոֆեսորը, մեծ ճանաչում ուներ ժամանակակիցների մոտ և հանդիսանում էր նեպտունիստների գիտական դպրոցի հիմնադիրը: Նա համարում էր, որ ապարների զգալի մասը ձևավորվել է ծովերում նստվածքակուտակման շնորհիվ, իսկ քարարանական կազմով տարբեր կտրվածքների համանման ապարները նույն հասակի են, և այդ առումով անշափ կարևորում էր ռեգիոնալ շերտագրական ստորաբաժնումների դերը:

Եթե շերտերի հարաբերական հասակի մասին հասկացությունը մինչ 19-րդ դարն առավելապես հիմնված էր քարարանական հատկանիշների վրա, ապա 18-19-րդ դարերի սահմանագծում սկսվեց կիրառվել հնէարանական մեթոդը: Այդ մեթոդն առաջին անգամ կիրառվեց Վիլյամ Սմիթի կողմից Անգլիայում, իսկ ժորժ Կյուլեի ու Ալեքսանդր Բրոնյարի կողմից՝ Ֆրանսիայում, ապարների հարաբերական հասակի որոշման և համահարաբերակցման համար:

Վ.Սմիթը՝ անգլիական երկրաբանության հայրը (1769-1839 թթ.), ինժեներ-հետախուզ էր, աշխատում էր հարավ-արևմտյան Անգլիայում Սոմերսեթի ածխի ավագանում: Նա հետազոտեց հարավ-արևելյան Անգլիայի զգալի մասը և ուշադրություն դարձրեց մերկացող ապարների հետևյալ բնական օրինաշափ հատկանիշների վրա.

1. Տարբեր ապարներ ներփակում են տարբեր օրգանական մնացորդներ, ըստ որում՝ ուղղաձիգ կտրվածքում միմյանց մոտ տեղադրված ապարները պարունակում են նման օրգանական մնացորդներ, իսկ ավելի հեռու տեղադրված ապարները բնորոշվում են խիստ տարբեր օրգանական մնացորդներով:

2. Տարածության մեջ հետամտելիս կարելի է նկատել, որ տվյալ շերտում օրգանական մնացորդները չեն փոփոխվում, եթե որոշ տեղամասերում նույնիսկ փոփոխվում է շերտի կազմը, ապա, շերտերը տարածության մեջ կարող են հետամտվել ըստ օրգանական մնացորդների:

3. Ուղղաձիգ կտրվածքում շերտ առ շերտ օրգանական մնացորդների կազմն ուսումնասիրելու միջոցով կարելի է որոշել շերտերի ժամանակագրական հաջորդականությունը:

Այսպիսով, դեռևս 1812 թ. Վ.Ամիրն առաջին անգամ կիրառեց կենսաշերտագրական ստորաբաժնման սկզբունքը. արդյունքում նրա կողմից 1815 թ-ին կազմվեց «Անգլիայի, Շոտլանդիայի և Ուելսի մեծ երկրաբանական քարտեզը»: Նրան են պատկանում նաև «շերտագրություն» և «դեկավարող ձևեր» հասկացությունները:

Նմանատիպ աշխատանքներ Ֆրանսիայում կատարեցին Ժ.Կյուվեն (1769-1832 թթ.) և Ա.Քրոնյարը (1770-1847 թթ.): Փարիզի ավագանում աշխատելիս նրանք նկատեցին, որ ստորին շերտերի (կավիճ) օրգանական մնացորդների կազմը տարբերվում է վերին շերտերի (պալեոգեն) կազմից, իսկ բոլոր օրգանական մնացորդները տարբերվում են ժամանակակից ֆաունայից: Ամենավերին շերտերի օրգանական մնացորդներն իրենց կազմով մոտ են ժամանակակից ֆաունային: Այս գիտնականները, բացի կտրվածքների մասնատումից, որոշեցին նաև բրածո օրգանիզմների գոյության պայմանները և բացահայտեցին այդ շրջանում ցամաքային և ծովային պայմանների հաջորդական հերթափոխությունը: Նրանք կազմեցին Փարիզի ավագանի երկրաբանական քարտեզը (1807 թ.), որի վրա տարանջատեցին տարբեր հասակի ապարները: Դեւոր է նշել, որ Ժ.Կյուվեն ողնաշարավորների հնակենդանաբանության ու աղետների տեսության հիմնադիրն է: Նա նշեց, որ օրգանական խմբերը երկրաբանական ժամանակի ընթացքում մահանում են և նրանց տեղը զբաղեցնում են նորերը:

Ի տարբերություն Ժ.Կյուվեի, նրա գաղափարական ընդիմախոս Ժ.Լամարկը նշում է օրգանական աշխարհի փոփոխության աստիճանական, կվլյուցիոն զարգացման ուղղու մասին:

Անգլիացի Երկրաբան Չ.Լայելը իր «Երկրաբանության հիմունքներ» աշխատությունում հիմնավորում է, որ Երկրի վրա կատարվող խոշոր երկրաբանական փոփոխությունները տեղի են ունենում երկարատև երկրաբանական գործընթացների արդյունքում: Նա առաջինն առաջարկեց Երկրի պատմության ճանաչումը սկսել ժամանակակից պրոցեսների ուսումնասիրություններով՝ դրանք համարելով անցյալ նմանատիպ երկրաբանական գործընթացների ճանաչման բանալի: Չ.Լայելի այս դրույթը հետագայում անվանվեց ակտուալիզմի սկզբունք:

Օգտվելով հնէաբանության հաջողություններից Ա.Քրոնյարը յուրաքանչյուր շերտագրական հորիզոնի համար առանձնացրեց

«Քնորոշ օրգանական մնացորդներ» հասկացությունը, մնացորդներ, որոնք այդ հորիզոնների համար կարծես թէ դարձան դեկավարող ձևեր: Միաժամանակ սկսեց զարգանալ նաև հնարքուսաբանությունը, որի տվյալները նույնպես օգտագործվեցին շերտագրության մեջ:

Այսպիսով, 19-րդ դարի սկզբում հնէաբանական մեթոդը սկսեց լայնորեն կիրառվել երկրաբանական աշխատանքների գործառություն: Այն եղավ խիստ արդյունավետ՝ բուռն թափ հաղորդելով շերտագրական հետազոտություններին, և շատ կարճ ժամանակահատվածում (Իիմնականում 1822-1841 թթ.) անշատվեցին համարյա բոլոր երկրաբանական համակարգերը՝ յուրայի (1825 թ.), կավճի և քարածխային (1822 թ.), չորրորդական (1829 թ.), երրորդական (1833 թ.), տրիասի (1834 թ.), սիլուրի (1835 թ.), քեմբրի (1836 թ.), դևոնի (1839 թ.), պերմի (1841 թ.), պալեոզոյան երաշեման (1838 թ.), մեզոզոյան և կայնոզոյան երաշեմաներ (1840 թ.), իսկ ավելի ուշ, 1879 թ-ին՝ օրդովիկի համակարգը:

Ս. դ՝ Օրբինյին (1802-1857 թթ.) «Ֆրանսիայի հնէաբանություն» մենացրությունում (1843 թ.) երկրաբանական համակարգի կազմում մտցնում է «հարկ» և «զոն» հասկացությունները: Յուրայի և կավճի կտրվածքներում առանձնացրել է 27 հարկ: Հարկ հասկացության տակ նա հասկանում էր արարված աստծո կողմից բնության մի ժամանակային վիճակ՝ իր բնորոշ օրգանական համակարգ, և որոնք մահցել են աղետների հետևանքով: Զոնայի տակ նա հասկանում էր ժամանակային ստորաբաժանում՝ որոշակի բնորոշ քառունայի տեսակով, որը համապատասխանում է հարկի ծավալին կամ նրա մի մասին:

Այսպիսով, մինչդարվինյան շրջանում՝ շնորհիվ հնէաբանական մեթոդի առավելության, դրվել են երկրաժամանակագրության հիմքերը և անշատվել են երկրաբանական համակարգերը:

Վ. Սմիթի և Ժ. Կյուվեի ժամանակ հնէաբանական մեթոդի կիրառումը հիմնված էր բավականին պարզ սկզբունքի վրա. միատեսակ օրգանական մնացորդներ պարունակող շերտերը տարբեր ուղղուների կտրվածքում գրափում են միևնույն շերտագրական դիրքը: Սակայն հետազայում՝ 19-րդ դարի երկրորդ քառորդում, փաստացի նյութի բուռն կուտակման ժամանակահատվածում պարզվեց, որ կան հարցեր, որոնք դժվարացնում են հնէաբանական մեթոդի այսպիսի պարզ կիրառումը:

1838 թ-ին Ա.Գրեսլին տվեց «Փացիա» հասկացության բնորոշում: Պարզվեց, որ նույն հասակի կտրվածքները ֆացիալ պայմանների (նստվածքի առաջացման պայմանների) տարբերությունների պատճառով կարող են ունենալ տարբեր քարաքանական կազմ և ներփակել տարբեր կազմի օրգանական մնացորդներ. բացի այդ, նման տեսք ունեցող ապարները կարող են լինել տարահասակ:

19-րդ դարի կեսերին տարբեր տարածքների համար կատարվեցին առաջին ֆիզիկաաշխարհագրական պայմանների վերականգնումներ՝ իհմք դնելով հնաշխարհագրական ուղղության զարգացմանը: Կատարված հայտնագրությունը վերաբերվում է հնակենսաշխարհագրական (հնակենդանաաշխարհագրական և հնարուսաաշխարհագրական) պրովինցիաների անջատմանը: Դրանք իրենցից ներկայացնում են անցյալում նույն երկրաբանական ժամանակահատվածում գոյություն ունեցած մարզեր, որոնք միմյանցից տարբերվել են ֆառնայի ու ֆլորայի համալիրներով: Դա պայմանավորված է նրանով, որ օրգանական որոշ ձևերն ունեն ինչ-որ չափով տարածաշրջանային պարփակ տարածում: Այդ պատճառով միևնույն հասակի ու ֆացիայի ապարները, որոնք գտնվում են միմյանցից հեռու տարածությունների վրա, կարող են պարփակել տարբեր կազմի օրգանական համալիրներ:

Վերոհիշյալ հասկացությունները ոչ թե նվազեցրին հներաբանական մեթոդի նշանակությունը, այլ դրանց ձիւտ կիրառումն օգնեց մեթոդի ավելի արդյունավետ գործածմանը: Կենսաշերտագրության զարգացման գործում կարևոր դեր խաղացին Շ.Դարվինի, Վ.Կովալյանկու (1842-1883 թթ.) (Եվոլյուցիոն հներաբանության հիմնադիր), Օ.Լուի Շոլտի (1857-1931 թթ.) (Եվոլյուցիայի անշրջելիության հիմնադիր) և այլոց աշխատանքները:

19-րդ դարի վերջում անհերաժեշտություն առաջացավ կազմավորելու երկրաբանների միջայիտական համագործակցությունը՝ միջազգային երկրաբանական սանդղակի ստեղծման նպատակով: 1881թ. Երկրաբանական 2-րդ միջազգային կոնգրեսում ընդունվեցին և հաստատվեցին հիմնական կարգային համաստրադասական շերտագրական ստորաբաժանումները (խումբ, համակարգ, բաժին, հարկ): Դա կարևոր նշանակություն ունեցավ երկրաբանության զարգացման համար: Կոնգրեսն այդ միավորների կազմից հանեց «Փորմացիա» տերմինը:

Շերտագրության ու կենսաշերտագրության գործնական հաջողությունները չափազանց մեծ էին 19-րդ դարի վերջում: Բայց Եվրոպայից, մանրամասն ուսումնասիրություններ սկսվեցին նաև Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի մայրցամաքներում: Հայտնաբերվեցին նոր ֆառնիստիկական և ֆլորիստիկական համալիրներ, որոնք զգալիորեն տարբերվում էին Արևմտյան Եվրոպայի նույն հասակի համալիրներից: Դարզվեց, որ լայն տարածում ունեն հնէաբանորեն «համր» ստվարաշերտերը: Առանձնացվեցին բազմաթիվ տեղական ստորաբաժանումներ:

Այդ պատճառով առաջնահերթ խնդիր դարձավ այն հարցը, թե ինչ չափանիշների հիման վրա պետք է առանձնացվեն շերտագրական ստորաբաժանումները, և ինչպիսին պետք է լինի դրանց ծավալը: Տարբեր երկրներում կազմակերպվեցին շերտագրական կոմիտեներ, հանձնաժողովներ (ԽՍՀՄ-1952 թ., ԱՄՆ-1933 թ.): ԽՍՀՄ-ում 1954թ. հրատարակվեց «Շերտագրական ու երկրաբանաժամանակագրական ստորաբաժանումներ» գրքովկը, «ԽՍՀՄ շերտագրական կողերսը» հրատարակվեց 1956, 1960 1965, 1977, 1991, 1999 թթ.-ին, իսկ Ռուսաստանին՝ 1999, 2006 թթ.-ին, ԱՄՆ-ին՝ 1976, 1999 թթ.-ին:

Այս բոլոր աշխատանքների արդյունքում առանձնացվեցին երկու տիպի ստորաբաժանումներ՝ երկրաբանաժամանակագրական և շերտագրական սանդղակներ:

ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԼԵՐԸ

Առաջին փուլ. Կենսաշերտագրության ծագումը և զարգացումը տեղի է ունեցել 18-րդ դարի առաջին կեսից մինչև 19-րդ դարի առաջին կեսը, երբ Վ. Սմիթը, Ժ. Կյուվեն և Ա. Բրոնյարը նստվածքային ապարների մասնատման և համադրման համար կիրառեցին հնէաբանական մեթոդը: Այդ աշխատանքների հետևանքով ձևափորվեց երկրաբանական գիտությունների նոր ճյուղ՝ շերտագրություն: Այնուեւսև Ռ. Սուրջաննի և Ա. Սեցվիկի և այլոց կողմից առանձնացվեցին գրեթե բոլոր հիմնական երկրաբանական համակարգերը (1820-1850թթ.):

Երկրորդ փուլ. Ընդգրկում է 19-րդ դարի երկրորդ կեսը, երբ հաղթանակեց օրգանական աշխարհի եկուուցիայի տեսությունը (Չ. Դարվին, Վ. Կովալևսկի, Ա. Կարպինսկի, Ա. Գրեսլի, Ն. Գոլովինսկի):

Երրորդ փուլ. Շերտագրության զարգացման նոր փուլ է 20-րդ դարը: Այս փուլում երկրաբանական մի շարք ոչ հնէաբանական գիտությունների զարգացումը հնարավորություն տվեց դրանց տվյալներն օգտագործելու շերտագրության մեջ, այդ թվում՝ քարարանությունը, ֆացիաների ուսմունքը, տեկտոնիկան, երկրաքիմիան, ինչպես նաև երկրաբանության ճշգրիտ մեթոդների մշակումը, մասնավորապես երկրակեղեկի ուսումնասիրման երկրաֆիզիկական մեթոդները: Դրանք հնարավորություն տվեցին մշակելու կտրվածքների մասնաւորման և համադրման նոր մեթոդներ, մասնավորապես՝ երկրաբիմիական, միներալապատճերական, քարաբանաշերտագրական, երկրաֆիզիկական: Հատկապես լայն տարածում ստացավ այն մեթոդը, երբ որոշակի շերտագրական սահմաններ ընդունվեցին տարբեր տեսակի աններդաշնակությունները՝ կապված ծալքավոր և տատանողական շարժումների արտահայտման հետ: Ակսեց կիրառվել ոիթմաշերտագրական մեթոդը՝ կտրվածքների մասնաւորման և համադրման համար: Երկրաֆիզիկական մեթոդներից հատկապես լայն տարածում ստացավ սեյսմաշերտագրությունը՝ նավթային երկրաբանության մեջ, իսկ ծովերի ու օվկիանոսների հատակի ուսումնասիրման ժամանակ վերջին տասնամյակներում սկսեց ուժեղ զարգանալ հնամագնիսական մեթոդը:

Այդ բոլոր ոչ հնէաբանական մեթոդները հիմք են ծառայում երկրաբանական պատմության փուլայնության և շերտագրական ստորաբաժանումների անշատման համալիր հիմնավորման համար:

Այդ փուլում մեծ զարգացում ստացան կենսաշերտագրական մեթոդները՝ կապված հնէաբանական ուսումնասիրությունների մեթոդների ու տեխնոլոգիայի կատարելագործման հետ: Օգտագործվեցին նոր տեխնիկական միջոցներ, հատկապես օպտիկական սարքերը՝ ներառյալ կեկտրոնային մանրադիտակը, որը հնարավորություն տվեց կատարելու տարբեր միկրոօրգանիզմների հնաշերտագրական ուսումնասիրություններ, այդ թվում՝ նանոպլանկտոնի, ֆորամինիֆերների, կոնոդրնտների և այլն: Մեծ զարգացում ստացավ բեղմնիկա-ծաղկափոշային անալիզը, որն ընդլայնեց կենսաշերտագրական մեթոդների կիրառման ոլորտը, հատկապես հնաշխարհագրական վերլուծությունների, տարբեր ֆացիալ հաստվածքների համահարաբերակցման համար: Շերտագրական նպատակների համար սկսեցին ուսումնասիրել հրաբխային փոշին (տեֆրոշերտագ-

բություն): Զարգացում ստացավ սեկվենտային շերտագրությունը: Վերջին տարիներին զարգացավ նոր, իրադարձային շերտագրություն ուղղությունը, որը կիրառում էն նստվածքներում գրանցված կարծատև երկրաբանական երևույթների կամ իրադարձությունների համայնական համար: Հարկ է նշել, որ չնայած ոչ հնէաբանական մեթոդների ուժգին զարգացմանը, կենսաշերտագրական մեթոդներն ավելի ամրապնդեցին իրենց դիրքերը:

ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Ակտուալիզմի (արդիականության) սկզբունք, Չ.Լայել (1830թ.):

Սա երկրաբանական ուսումնասիրությունների պատմահամեմատական մեթոդ է, ըստ որի, ժամանակակից երկրաբանական գործնքացների ուսումնասիրությունը հմարավորություն է տալիս դատելու անցյալի նմանատիպ հնագույն գործնքացների մասին: Օգտագործվում է՝ հաշվի առնելով Երկրի զարգացումը, երկրաբանական ու հնաշխարհագրական իրադրությունների փոփոխվածությունը: Սակայն ակտուալիզմի սկզբունքը որոշ դեպքերում ունի նաև օգտագործման սահմանափակում՝ հատկապես կապված մինչըլեմբրիյան ապարների, օրգանական աշխարհի էվոլյուցիայի հետ և այլն: Այս սկզբունքն առավել կիրառելի է նստվածքային երկրաբանության ոլորտի համար:

2. Երկրորդ սկզբունքը շերտագրական և հնէաբանական թվականության ոչ լրիվությունն է (Չ.Լայելի-Չ.Դարվինի սկզբունք), ըստ որի երկրաբանական շերտերում որոշված է երկրաբանական պատմության փոքր մասը, ավելի մեծ մասը համընկնում է ընդմիջումների հետ: Այստեղ կարևոր է տարբեր տեսակի աններդաշնակությունների դերը երկրաբանության մեջ: Հայտ շատ գիտնականների հաշվարկների՝ երկրակեղեկի կտրվածքներում արձանագրված է նրա ձևավորման 10-25%: Բացի այդ, բրածո քարացուկները ներկայացնում են անցյալ երկրաբանական ժամակների օրգանական աշխարհի չնչին մասը: Պատճառը քարացման և պահպանման պայմաններն են, որոնց հետ կապված օրգանական աշխարհի չնչին մասն է նստվածքների մեջ պահպանվում բրածո վիճակում:

3. Երրորդ սկզբունքը երկրաբանական և կենսարանական զարգացման անկրկնելիությունն է (Օ.Լուի Դոլը (1857-1931 թթ.): Օրգանական աշխարհի էվոլյուցիայի անկրկնելիության օրենքը բացահայտել է

բեղիացի գիտնական Օ. Լովի Դոլոն, որն հետազայում զարգացրել է Զ. Դարվինը: Ըստ այդ օրենքի՝ օրգանիզմը, նույնիսկ մասամբ, չի կարող վերադառնալ նախկին վիճակին, որն արդեն ունեցել են նրա նախնիները: Օրգանիզմը երբեք նույնությամբ չի վերադառնում նախկին վիճակին նույնիսկ այն դեպքում, եթե ընկնում է այնպիսի պայմանների մեջ, որոնք նման են նախնիների ապրած պայմաններին: Հետևաբար, օրգանիզմների պատմական զարգացման մեջ չի կարող լինել կենդանիների ու բույսերի միանման ձևերի կրկնություն:

Այսպիսով, օրգանական աշխարհի էվոլյուցիայի անդարձելիությունը դարձավ հնեաբանական մեթոդի հիմքը շերտագրությունում: Ավելի ուշ այս սկզբունքն օգտագործվեց երկրակեղեկի էվոլյուցիայի, լիբովենեղի գործոնների, տեկստոգենեզի, մազմայականության և այլ երկրաբանական գործնթացների ուսումնասիրման ժամանակ:

4. Չորրորդ սկզբունքը երկրաբանական մարմինների առաջացման հաջորդականության սկզբունքն է (Ստենինի սկզբունք): Զախատված տեղադրման դեպքում ներքին շերտն ավելի հին է վերևում տեղադրված շերտերից: Կորվածքների շերտագրական սյունակները կազմվում են այս սկզբունքի հիման վրա, պատմենու տարածաշրջանի կորվածքները համահարաբերակցվում են, և կազմվում է ամփոփիչ շերտագրական սյունակ: Դրանք, իրենց հերթին, հիմք են հանդիսանում միասնական շերտագրական սանդղակի կազմման համար:

5. Ֆացիաների հաջորդականության սկզբունք (Գոլովկինսկի, Վալտերի սկզբունք): Ըստ այս սկզբունքի՝ միայն այն ֆացիաները կարող են գտնվել մեկը մյուսի վրա, որոնք ժամանակին տեղադրված են եղել միմյանց կողքի: Կիրառվում է այն շերտախմբերի համար, որոնք առաջացել են ծովերի ծովարշավի (տրանսգրեսիայի) կամ հետքնիքացի (ռեգրեսիայի) ժամանակ: Կապված է ափային գծի տեղափոխման հետ, և եթե շերտախմբերը չեն պարունակում շերտագրական ընդմիջումներ:

6. Հասակակից ապարների ֆացիալ տարբերակման սկզբունք (Ա. Գրեսլու սկզբունք): Ըստ այս սկզբունքի՝ հարևան հասակակից ֆացիաների նստվածքները միմյանց հետ կապված են ատամնաձև ֆացիալ փոխանցումներով:

7. Կորվածքների կենսաշերտագրական մասնատման ու համադրման սկզբունք (Վ. Միթի սկզբունք): Ըստ այս սկզբունքի՝ ապարներում պարփակված օրգանական մնացորդների հիման վրա

կարելի է կատարել երկրաբանական կտրվածքների շերտագրական մասնատում և համահարաբերակցում: Հիմքում ընկած է այն դրույթը, որ տարբեր կտրվածքների միևնույն օրգանական ձևեր պարունակող նստվածքները, կամ այլ կերպ ասած, միևնույն բրածոներ պարունակող նստվածքները՝ հասակակից են:

Պահուածություն:	U	ե	q	n	q	n	1	ա	ա	կ	կ	է	է	առօղջ համակարգ	Բարպատճենական բնույթագիր	Հետարական բնույթագիր
Բնույթագիր			q	ա	q			կ		կ					Սալինակ բնույթագիրի ավագներ	Բնույթագիր մասոցը.
առօղջ ընթացքի			կ	կ	կ	պ		կ		կ					Բաց գորշ տևազգործողուն մերգեներ	<i>Bleennitella mucronata</i> Schloth.
ստորագույն			կ	կ	կ	պ		կ		կ					Բաց գորշ տևազգործողուն մերգեներ, արևմտացուռ ենթափառվող սիմֆիլատային կառվերի հետ	<i>Inoceramus cardissoides</i> Goldf
ստորագույն			կ	կ	կ	պ		կ		կ					Սուր գորշ թերթավոր կավեր	<i>Inoceramus involutus</i> Sow., <i>Actinocamax verus</i> Mill
ստորագույն			կ	կ	կ	պ		կ		կ					Գորշ շերտածձև ավագարարային մերգեներ	
ստորագույն			կ	կ	կ	պ		կ		կ					Սալինակ հստա շերտավոր կրաքարեր ու կացքարերի կունքեցնամերով	<i>Inoceramus tamareki</i> Park.
ստորագույն			կ	կ	կ	պ		կ		կ					Կանաչավոր գորշ գլասակացիկ կրաքարեր	<i>Inoceramus labiatus</i> Schloth., <i>Onyx</i> - <i>Actinocamax plenus</i> Blv.
ստորագույն			կ	կ	կ	պ		կ		կ					Կանաչավոր գորշ գլասակացիկ ավագարար	
ստորագույն			կ	կ	կ	պ		կ		կ					Կանաչավոր գորշ գլասակացիկ տակարգակի ավագարար	<i>Scaphites aequalis</i> Sow., <i>Negibolites ultimus</i> Orb.
ստորագույն			կ	կ	կ	պ		կ		կ					Կանաչավոր գորշ գլասակացիկ տակարգակի ավագարար	<i>Ancellites griseo-ides</i> Sow.
ստորագույն			կ	կ	կ	պ		կ		կ					Կանաչավոր գորշ կրաքարեր	Ուստանեներ, ծախուզաներ
ստորագույն			կ	կ	կ	պ		կ		կ					Կրեմագոյն կենածմին կրաքարեր	Բուսակերի մասոցը.

Նկ. 1. Շերտագրական սյունակ

8. Երևոյթների և պրոցեսների պարբերականության սկզբունք. Սկզբունքի իմաստըն այն է, որ երկրաբանական զարգացումն ունի շահման արտահայտումներ, ոիթմերի, ցիկլերի և փուլերի տեսքով: Ոիթմը կտրվածքում միանման նստվածքային ապարների համալիրների օրինաչափ կրկնությունն է: Ցիկլը հերթագայող պրոցեսների ու երևոյթների ընդհանրությունն է: Ցիկլը ավելի ընդհանուր ու լայն հասկացությունն է, քան ոիթմիկականությունը, քանի որ դրանք արտահայտում են փուլայնության տարբեր աստիճաններ: Տարբերում են հրաֆիսականության ցիկլ, երկրատեկունական ցիկլ, ծալքավորման ցիկլ և այլն: Կտրվածքների մասնատման ու համադրման նպատակով նստվածքառաջացման ոիթմիկությունն ուսումնասիրող բաժինը կոչվում է ոիթմաշերտագրություն:

ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՍԴԻՐՆԵՐԸ

Շերտագրական ուսումնասիրությունների ժամանակ հաջորդաբար կատարվում են հետևյալ աշխատանքները.

ա) Կտրվածքների մասնատումը շերտագրական ստորաբաժանումների՝ ապարների կազմի և դրանցում ներփակված օրգանական մնացորդների հիման վրա (նկ. 1):

բ) Շերտերի շերտագրական համադրում, այսինքն, տարբեր, երթեւն բավականին հեռու տեղադրված տեղամասերում հասակալից ապարների առանձնացում, միևնույն շերտագրական ստորաբաժանումների համադրում: Մի դեպքում համադրումը կատարվում է շերտերն անընդհատ, քայլ առ քայլ հետամտվելիս, այլ դեպքերում՝ հատուկ մեթոդների օգնությամբ (նկ. 2):


Շերտագրության համար փաստացի նյութ են հանդիսանում կոնկրետ կտրվածքները և դրանցում անջատվող շերտերը: Մի քանի մասնավոր կտրվածքների շերտագրական համադրումը հնարավորություն է տալիս կազմելու տվյալ տեղամասի ամփոփ շերտագրական կտրվածքը (շերտագրական պյունակը), որում տեղամասի բոլոր ապարները դասավորված են հասակային հաջորդականությամբ (նկ. 3):

Շերտագրական ուսումնասիրությունների խնդիրներն են՝

1. Երկրակեղեկի առանձին տեղամասերում կտրվածքների մասնատումը և շերտագրական ստորաբաժանումների առանձնացումն, այսինքն՝ տեղական կամ ռեզիլինալ (տարածաշրջանային) շերտագրական սանդղակի ստեղծումը:

Հյուսիս և հյուսիս-արեւելյան Հայաստանի կավճի և պալեոգենի սահմանային նստվածքների համադրման սխեմա

Կազմեց ՀՀ Սարքայինը




Նկ. 2. Հյուսիս և հյուսիս-արևելյան ձայսատանի կավիճ-պալեոզօնի սահմանային նստվածքների համադրման սխեմա (Հ.Հ. Սարգսյան)

1. Կրաքարեր 2. Սերգեյներ 3. Ավազքարեր 4. Ալբորժիներ 5. Կոնգումերատներ
6. Սերգել ավազային 7. Ֆիշոնի տուֆածին 8. Սիլիցիտ 9. Ալբորժի կրային
10. Կավեր 11. Կավ ավազային 12. Արգիլիտ 13. Պորֆիրիտ 14. Տուֆալիսորիթ

Սեան-Շիրակի սինկլինորիի պալեոգենի գյացությունների ամփոփիչ շերտազրական կտրվածք

Կազմեց ՀՀ Սարգսյանը



Ug. 3.

2. Միջուկիննալ շերտագրական ստորաբաժանումների կոռելյացիան (համահարաբերակցում):
3. Ընդհանուր (միջազգային), համամոլորակային շերտագրական սանդղակի մշակում:
4. Շերտագրական տվյալների հիման վրա բացահայտվում են օրգանական աշխարհի զարգացման օրինաչափությունները, հնաշխարհագրական և տեկտոնական զարգացման առանձնահատկությունները: Առանց շերտագրական ուսումնասիրությունների հնարավոր չէ կազմել երկրաբանական քարտեզ, կատարել օգտակար հանածոների որոնման և հետախուզման աշխատանքներ, վերականգել երկրի երկրաբանական պատմությունը:

ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔ

Երկրաբանական աշխատանքների և առաջին հերթին երկրաբանական հանույթի նպատակը տվյալ տեղամասում տարբեր կազմի, կառուցվածքի ու հասակի երկրաբանական մարմինների առանձնացումն է, դրանց հետամտումը տարածության մեջ և փոխհարաբերության որոշումն ինչպես տարածության, այնպես էլ ժամանակի մեջ: Այս խնդիրների հիմքում ընկած է շերտագրական սիւմայի, ապարագրական, երկրաֆիզիկական ու երկրաբիմիական հիմքերի մշակումը:

Որևէ տարածքում երկրաբանական աշխատանքների կատարման հիմք է ծառայում շերտագրական սիւման, որի կազմման համար հաշվի են առնվում հենակետային կտրվածքը և նրա հետ համահարաբերակցված տիպային կտրվածքները: Երկրաբանական քարտեզագրության ժամանակ շերտագրական սիւմայի մշակումն ավարտվում է քարտեզի պայմանական նշանների (լեզենդի) կազմմամբ:

Շերտագրական հիմքն այն ֆունդամենտն է, որի վրա հենվում են երկրաբանական հանույթը, տեկտոնական և հնաշխարհագրական կառուցումները, մազմայականության արտահայտման հասակային եղրակացությունները, համածագրմանային (սինգենետիկ), որոշ չափով նաև հետկուտակումային օգտակար հանածոների հանքավայրերի հասակի և առանձնահատկությունների մասին եղրակացությունները:

Երտագրական հիմքի նախապատրաստումը ներառում է՝

1. Հենակետային շերտագրական կտրվածքի համալիր ուսումնասիրությունը:

- Քարտեզագրվող տեղամասում տեղական շերտագրական ստորաբաժանումներին բնորոշ, տիպային կտրվածքների ուսումնասիրությունը:
- Համահարաբերակցային (կոռեյյացիոն) ազդակների բացահայտումը և բնորոշ հորիզոնների առանձնացումը:
- Համածագումնային օգտակար հանածոներ ներփակող ստվարաշերտերի մասնատման և համահարաբերակցության առանձնահատկությունների բացահայտումը:
- Քարտեզագրվող տարածքի տեղական շերտագրական սխեմայի կազմումը:
- Քարտեզի պայմանական նշանների կազմումը:

Շերտագրական սխեմայի մշակման աշխատանքները պետք է ապահովված լինեն համալիր քարաբանաշերտագրական (լիթոլոգաշերտագրական) և հներաբանական ուսումնասիրություններով, որոնց նպատակը ոչ միայն կտրվածքների մասնատումն ու համադրումն է, այլև հնաշխարհագրական պայմանների, օգտակար հանածոների կուտակման պայմանների վերականգնումը:

Այս աշխատանքների ընթացքում հատկապես կարևոր է հենակետային ու տիպային կտրվածքների առավել ամբողջական ուսումնասիրությունը, տեղական շերտագրական ստորաբաժանումների կարգի որոշումը: Հենակետային ու տիպային կտրվածքների ուսումնասիրման ժամանակ հատկապես կարևոր է շերտագրական համահարաբերակցման հատկանիշների անշատումը և բնորոշիչ հորիզոնների բացահայտումը, որոնք կարելի է հետամտել ամբողջ տարածքում կամ տարածքի մեծ մասում: Բնորոշիչ հորիզոնների առանձնացման հիմնական մեթոդները քարաբանական (լիթոլոգիական) և հներաբանական մեթոդներն են, քանի որ դրանք հնարավորություն են տալիս արդեն դաշտային պայմաններում հարցը լուծելու:

Խոշորամասշտար երկրաբանական հանույթը կատարվում է նաև տարածքի օգտակար հանածոների որոնման ու հեռանկարային գնահատման նպատակով: Այդ առումով շերտագրական հիմքի նախապատրաստման ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուսումնասիրել ամբողջ կտրվածքում օգտակար հանածոների երեակումները կամ նախանշանները: Հատկապես ուսումնասիրվում են այն տեղային շերտագրական ստորաբաժանումները (ներառյալ բնորոշիչ հորիզոնները), որոնք ներփակում են օգտակար հանածոներ կամ սահմանափակում են արդյունավետ ստվարաշերտեր:

ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Շերտագրության զարգացման հիմնական փուլերը
2. Շերտագրություն առարկայի սահմանումը, խնդիրները և նրա ուսումնասիրության օբյեկտները:
3. Ակտուալիզմի սկզբունք (Զ.Լայելի սկզբունք):
4. Երկրաբանական և կենսաբանական էվոլյուցիայի անկրկնելիության սկզբունքը (Լ.Դոլյոյի սկզբունք):
5. Շերտագրական և հնէաբանական տարեգրության թերի լինելը (Զ.Դարվինի սկզբունք):
6. Նստվածքների հաջորդական առաջացման սկզբունքը (Ն. Ստենինի սկզբունք):
7. Կենսաշերտագրական մասնատման և համադրման սկզբունք (Ու. Միթրի սկզբունք):
8. Շերտագրության կարևորությունը երկրաբանական գիտությունների շարքում:

ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՏՈՐԱԲԱԺՄԱՆՈՒՄՆԵՐԻ
ԱՌԱՋՆԱՑՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Շերտագրական ստորաբաժանումների անշատումը նպատակ ունի պարզելու տարածքի երկրաբանական զարգացման իրական ընթացքը: Այդ առումով շերտագրական ստորաբաժանումները պետք է համապատասխանեն ամբողջ երկրի, կամ առանձին ռեզինների զարգացման փուլերին: Այդ փուլերն առանձնացնելու համար պետք է հաշվի առնել բոլոր հատկանիշների (քարաբանական, հնէաբանական և այլն) համալիրը: Շերտագրական միավորների առանձնացման հատկանիշների հիմքում ընկած են երկրի ու օրգանական աշխարհի զարգացման տվյալները, որոնք պայմանավորված են երկրի կառուցվածքների զարգացման հիմնական փուլերով, տատանողական շարժումների պարբերականությամբ, ֆիզիկաաշխարհագրական պայմանների փոփոխությամբ: Այդ բոլորի հետ կապված են էվոլյուցիայի ընթացքում տեղի ունեցած օրգանական աշխարհի փոփոխությունները:

Շերտագրական ստորաբաժանումների սահմանները տանելիս նշված գործոններից հիմնականում հաշվի են առնվում օրգանական աշխարհի փոփոխությունները: Վերջիններն արտահայտում են օրգանական աշխարհի զարգացման որոշակի փուլերը: Այստեղ կարևոր է օրգանական աշխարհի զարգացման անշրջելիությունը: Յուրաքանչյուր շերտագրական ստորաբաժանում, ամենափոքր տեղայինց մինչև խոշորը, պետք է համապատասխանի երկրագնդի բնական զարգացման որոշակի էտապին, հետեւաբար, նաև օրգանական աշխարհի զարգացման որոշակի փուլին կամ փուլի որևէ մասին:

Շերտագրական ստորաբաժանումներն իրական երկրաբանական մարմիններ են, ապարների որոշակի համալիրներ, որոնք ձևավորվել են երկրաբանական զարգացման որոշակի էտապներում: Ուստիմնասիրելով այդ համալիրները՝ կարելի է վերականգնել այդ էտապները, դրանց տևողությունը և հաջորդականությունը: Այստեղից ել բխում է սերտ կապը շերտագրության և երկրաբանական ժա-

մանակագրության (գեղիրոնոլոգիա) միջև: Երանք Երկրի պատմական զարգացման միևնույն գործընթացի երկու կողմերն են:

Երտագրական սանդղակն արտահայտում է նատվածքների հաջորդականությունը, նատվածքներ, որոնք ստորաբաժանվում են որոշակի շերտագրական միավորների: Սանդղակը արտահայտում է այդ միավորների ծավալը և ենթակայությունը:

Երկրաժամանակագրական սանդղակն արտահայտում է Երկրի պատմական զարգացման հիմնական էտապների օրինաչափի հաջորդականությունը և տևողությունը: Դա երկրաբանական հարաբերական ժամանակի սանդղակ է: Ցուրաքանչյուր շերտագրական միավորին համապատասխանում է երկրաժամանակագրական միավոր:

Երկրի զարգացման առանձին էտապների առանձնացմանն օգնում են Երկրի առաջընթաց զարգացումը, երևույթների անկրկնելիությունը դրանց շատ թե քիչ պարբերականության դեպքում: Պարբերականությունն արտահայտվում է Երկրի երկարատև դանդաղ զարգացման՝ երկրակեղեկի երկարատև դանդաղ իշեցումներով, որոնք փոխարինվում են կարճատև որակական կառուցվածքային փոփոխություններով՝ բարձրացման, լեռնազոյացման և պոխաներով: Դա Երկրի եվոլյուցիոն ու ռույցուցիոն էտապների հերթափոխ է:

Այսպիսով՝ շերտագրական և երկրաժամանակագրական ստորաբաժանումների առանձնացման հիմք կարող են ծառայել.

1. Օրգանական աշխարհի եվոլյուցիայի ընթացքում կատարված փոփոխությունները:
2. Նատվածքակուտակման և լերկացման (դենտիգիայի) գործընթացների փոփոխությունները:
3. Հնաշխարհագրական փոփոխությունները (ծովի ու ցամաքի սահմանների, ցամաքի ռելիէֆի, կլիմայի փոփոխությունները):
4. Մազմայականության ու փոխակերպության (մետամորֆության) արտահայտությունները:
5. Խոշոր տեկտոնական շարժումները, որոնք ընդգրկում են լայնատարած տարածքներ:

Բոլոր նշված երևույթները գունվում են փոխադարձ կապի մեջ. միմյանցից անկախ գոյություն չունեն: Բոլորին յուրահատուկ է որոշակի պարբերականությունը և անշրջելիությունը: Այս բոլոր գործընթացների հիմքում ընկած են տեկտոնական շարժումները, բայց կարևոր գործնական նշանակություն ունեն օրգանական աշխարհի փո-

փոխությունները: Այստեղ պարբերականության մասին խոսելը խիստ հարաբերական է, դա արտահայտվում է տարբեր խմբերի հանդես գալու, զարգանալու և մահանալու մեջ, ըստ որում, նոր խմբերն ավելի զարգացած են: Խիստ կարևոր է նաև օրգանիզմների տարարնակեցման և միգրացիայի ունակությունը և արագությունը, որը հնարավորություն է տալիս համադրելու միմյանցից հեռու տեղադրված տարածքների կտրվածքները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՄԻՋԱԶԳԱՅԻՆ) ԵՎ ՏԵՂԱԿԱՆ (ՕԺԱՆԴԱԿ) ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺՄԱՆ ՄԵջ

Ինչպես նշվեց, շերտագրական և երկրաժամանակագրական ստորաբաժանումները լինում են ընդհանուր (միջազգային, համաերկրային) և տեղական (օժանդակ), որոնք միավորվում են համապատասխան սանդղակներում: Դրանք համապատասխանում են երկրի զարգացման որոշակի էտապին կամ նրա մասերին: Տեղական պայմաններն անսահմանորեն բազմազան են, հետևաբար անսահմանորեն բազմազան են տեղական երկրաբանական կտրվածքները: Այդ պատճառով տարբեր կարգի շերտագրական ստորաբաժանումներ կարող են ընդգրկել տարբեր աշխարհագրական մակերեսներ: Ինչքան բարձր է ստորաբաժանման կարգը, այնքան մեծ է նրա տարածման տարածքը, և տեղական, և ընդհանուր ստորաբաժանումներն անվանում են նույն հիմունքներով ու սկզբունքներով:

Ցուրաքանչյուր կտրվածքի վերջնական մասնատումը տրվում է ընդհանուր շերտագրական ստորաբաժանումներով, իսկ ավելի մանրամասն մասնատման համար առանձնացվում են տեղական ստորաբաժանումներ: Վերջիններն անպայման պետք է կապակցվեն ընդհանուր (միջազգային) սանդղակի ստորաբաժանումների հետ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՄԻՋԱԶԳԱՅԻՆ) ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺՄԱՆ ՄԵՋ

Ընդհանուր շերտագրական սանդղակը ձևավորվել է համակարգերի առանձնացումից հետո և կազմվել է Եվրոպայի կտրվածքների և նրանցում ներփակված օրգանական մնացորդների ուսումնասի-

բության ընթացքում: Այդ սանդղակի առաջին նախագիծը կազմել և ներկայացրել է Միջազգային երկրաբանական կոնքրեսի 8-րդ նստաշրջանին (1900թ.) շվեյցարացի երկրաբան Է. Ռենեզյեն: Հետագայում այն ճշտվել և լրացվել է: Միջազգային շերտագրական սանդղակի ստորաբաժանումները համապատասխանում են երկրակեղեկի և օրգանական աշխարհի զարգացման բնական էտապներին և փուլերին, իսկ երկրաժամանակագրական սանդղակի ստորաբաժանումներն ընդգրկում են այն ժամանակը, որի ընթացքում ձևավորվել են համապատասխան շերտագրական ստորաբաժանումները:

Այժմ առանձնացված են հետևյալ շերտագրական և երկրաժամանակագրական ստորաբաժանումները, որոնք միավորվում են ներոհիշյալ սանդղակներում:

Շերտագրական ստորաբաժանումներ	Երկրաժամանակագրական ստորաբաժանումներ
Էնոտեմա (eonotheme)	Էոն (eon)
Էրատեմա (erathema)	Դարաշրջան (era)
Համակարգ (system)	Ժամանակաշրջան (period)
Բաժին (series)	Դարակարգ (epoch)
Հարկ (stage)	Դար (age)
Զոնա, հատված (zone)	Փուլ (phase)
Օդակ	Պորա
Աստիճան	Ջերմա (կրիո) քրոն

Հատված, օդակ և աստիճան ստորաբաժանումներն օգտագործվում են չորրորդական համակարգի նստվածքների համար. հնարավոր է դրանց օգտագործումը նաև նեղենի նստվածքների համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՄԻԶԱԶԳԱՅԻՆ) ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Շերտագրական ստորաբաժանումները, դրանք բնական երկրաբանական մարմիններ են, ապարների ամբողջություն, որոնց ձևավորման ժամանակը համապատասխանում է Երկրի երկրաբանական պատմության որոշակի փուլին: Ընդհանուր ստորաբաժանում-

ներք որոշվում են տարբեր մեթոդների օգնությամբ: Մինչքեմքը ի գոյացումների համար հիմնականում օգտագործում են ռադիոէրկրաժամանակազրական մեթոդներ, իսկ ֆաներոզոյի համար – հնէրաժանական: Գործնականում, հարկից խոշոր բոլոր շերտազրական միավորներն ունեն միասնական միջազգային անվանում:

Հոնոտեման ընդհանուր շերտազրական սանդղակի խոշորացույն միավորն է, ընդգրկում է այն նստվածքները, որոնք առաջացել են էռնի ընթացքում: Յուրաքանչյուր էռնոտեմա արտացոլում է Երկրի երկրաբանական (խորքային կառուցվածքի, քարուղրտի, ջրուրտի, մթնողրտի) և օրգանական աշխարհի (կենսուղրտի) զարգացման խոշորագույն և հարակիցներից սկզբունքորեն տարբերվող էտապ: Առանձնացնում են ֆաներոզոյան էռնոտեմա, որն ընդգրկում է պալեոզոյան, մեզոզոյան ու կայնոզոյան էրատեմաները և կրիպտոզոյան ակրոտեման, որի հիմքի վրա անշատվում են երկու էռնատեմաներ՝ արխեյան և պրոտերոզոյան, որոնք իրենց հերթին բաժանվում են էրատեմաների: Կրիպտոզոյան և ֆաներոզոյան էռնատեմաների բաժանման հիմնական չափանիշը հաղիսանում է կրիպտոզոյում անկմախիք օրգանիզմների գոյությունը, իսկ ֆաներոզոյում՝ բազմազան կմախրավոր ձևերի հայտնությունը:

Էրատեմա. Ընդհանուր շերտազրական սանդղակի խոշոր միավոր է, ստորադաս է էռնոտեմային: Դա նստվածքների համալիր է, որն առաջացել է մեկ դարաշրջանի (երայի) ընթացքում: Տերմինն առաջարկել է ամերիկյան երկրաբան Հ. Հեյքերը 1966թ.: Ռուսական գրականության մեջ «էրատեմա» տերմինի հոմանիշը խումբն է, որը խրհուրդ չի տրվում օգտագործել: Էրատեման արտահայտում է քարուղրտի և օրգանական աշխարհի զարգացման խոշոր էտապը: Էրատեմայի սահմաններում դիտվում են երկրի պատմության մեջ խոշոր տեկստոնական շարժումների հետքեր (իռնագոյացում, ծովարշավ (տրանսգրեսիա), ծովի հետընթաց (ռեգրեսիա), ուժգին մագմայականություն): Այդ երևոյթների հետևանքով փոփոխվում են ծովի և ցամաքի սահմանները, դրանց ուրվագծերը, ռելիեֆը: Այդ սահմանների հետ համընկնում են օրգանական աշխարհի զարգացման բեկումնային պահեր:

Յուրաքանչյուր էրատեմա բաժանվում է երեք և ավելի համակարգերի: Այժմ առանձնացնում են պալեոզոյան, մեզոզոյան, կայնոզոյան էրատեմաները, որոնք կազմում են ֆաներոզոյան էռնոտեման: Արխեյը և պրոտերոզոյը մինչև այժմ կոչվում են էրատեմաներ, բայց

Դրանց երկարատևությունը պահանջում է ընդիանուր շերտագրական սանդղակի ավելի բարձր կարգի միավորի շնորհում: Էրատեմաների անվանումները տրված են ըստ հարաբերական հնության և համապատասխան են երկրի վրա կյանքի զարգացման կարևորագույն էտապներին: Անվանումների ծագումը հունարեն է՝ «արխափոս»-հնագույն, «պրոտերոս»-առաջնային, «պալեոս»-հին, «մեզոս»-միջին, «կայնոս»-նոր, վերջավորությունը «օդիկոս»-կյանք: Արիելը և պրոտերոզոյն անվանում են նաև մինչըեմբրի:

Համակարգը (systema) (հունարեն *systema*-ամբողջություն, մասերից կազմված) ընդիանուր շերտագրական սանդղակի հիմնական ստորաբաժանումն է, համապատասխանում է երկրակեղեկի և օրգանական աշխարհի զարգացման բնական փուլին, տևողությունը՝ մի քանի տասնյակ միլիոն տարի: Ժամանակը, որի ընթացքում ձևավորվել են համակարգի նստվածքները, կոչվում է երկրաբանական ժամանակաշրջան (տպՇՌՑՊ): Յուրաքանչյուր համակարգ բնորոշվում է բացառապես իրեն յուրահատուկ կամ տիրապետող զարգացում ունեցող ֆառնայի ու ֆլորայի ընտանիքներով կամ տեսակներով: Համակարգերի սահմանում դիտվում է ֆառնայի ու ֆլորայի էական թարմացում, որը պայմանավորված է տեկտոնական շարժումների և այլ գործոնների հետ կապված ֆիզիկաաշխարհագրական պայմանների փոփոխությամբ: Այդ սահմանների մոտ հաճախ նկատվում են անկյունային ու շերտագրական աններդաշնակություններ, ֆացիաների կտրուկ փոփոխություն, ուժգին մագմայական գործունեություն: Դրանք լայն տարածված են, բայց համընդիանուր չեն:

Համակարգերի անվանման համար միասնական սկզբունքներ չկան: Մի քանիսի անվանումը տրված է ըստ տեղանքի հին կամ նոր անունների, որտեղ այն առանձնացվել է (քեմբրի, դևոն, պերմ, յուրա), մյուսները՝ հին ցեղերի անունից (օրդվիկ, սիլուր)՝ ըստ տվյալ վայրում կտրվածքի մասնատման (տրիաս) կամ տիրապետող ապարների տարածման (քարածխային, կավիճ), իսկ կայնողյում՝ ըստ օրգանական աշխարհի զարգացման աստիճանի (պալեոգեն, նեոգեն):

Երկրի նորագույն երկրաբանական պատմության մեջ ֆաներոզոյում առանձնացված են 12 համակարգեր՝ քեմբրի, օրդվիկ, սիլուր, դևոն, քարածխային (կարբոն), պերմ, տրիաս, յուրա, կավիճ, պալեոգեն, նեոգեն, չորրորդական (անտրոպոգեն): Դրանց հաջորդականությունը սահմանվել է 19-րդ դարի առաջին կետում և հաստատվել է Բո-

լոնիայում 1881թ., Միջազգային երկրաբանական կոնգրեսում: Յուրաքանչյուր համակարգ բաժանվում է երկու կամ երեք բաժինների:

Բաժինը (օղակը) երկրաբանական համակարգին ենթակա՝ ընդհանուր շերտագրական սանդղակի ստորաբաժանումն է և դրան համապատասխանող նստվածքները, որոնք առաջացել են երկրաբանական դարակարգի (Եպիխայի) ընթացքում. տևողությունը սովորաբար կազմում է առաջին տասնյակ միլիոն տարի: Արտացոլում է քարողութիւն և օրգանական աշխարհի զարգացման որոշակի փուլը, բնութագրվում է իրեն բնորոշ ֆառնայի և ֆլորայի խմբերով (Ենթաընտանիքներ, սեռեր, տեսակներ): Բաժինը ներառում է երկու և ավելի հարկեր:

Բաժինների մեծ մասը չունի սեփական անուն և անվանվում է ըստ համակարգում զբաված դիրքի՝ ստորին, միջին, վերին կամ ստորին, վերին (ստորին դեռև, վերին պերմ, միջին յուրա): Որոշ բաժիններ ունեն հատուկ անուն. քարածխային համակարգում՝ միսիսիպի և պենսիլվանի, պերմում՝ պրեորալի, զվարելուալի և լոպինի: Կայնոզոյի բոլոր բաժիններն նույնպես ունեն հատուկ անուններ՝ կազմված հունարեն կենոս-նոր և այդ նոր էտապի տարբերիչ մասերից. պալեոցեն (հին-նոր), միոցեն (ավելի քիչ նոր), պլիոցեն (ավելի նոր), պլեյսոնցեն (ավելի շատ նոր), հոլոցեն (ամբողջովին նոր):

Հարկը (արց) բաժնի մասն է, ընդգրկում է դարի ընթացքում առաջացած նստվածքները. տևողությունը մի քանի միլիոն տարի: Հարկի շերտագրական ծավալը և սահմանները որոշվում են նրա համար տիպային կենդանիների սեռերի, ենթասեռերի ու տեսակների համալիրով, որը, որպես կանոն, գտնված է նրա շերտատիպ կտրվածքներում: Քեմբրի-նեոզեն միջակայքում առանձնացվում են 88 հարկեր: Հարկերն ունեն համընդհանուր կամ լայն աշխարհագրական տարածում: Դրանց անշատման ժամանակ նկարագրվում է շերտատիպը (ստրատոտիպը): Հաճախ առանձնացվում են ենթահարկեր՝ ստորին և վերին կամ ստորին, միջին և վերին: Հարկերը բաժանվում են զոնաների (քրոնոզոնաների՝ ընդհանուր շերտագրական սանդղակում): Միաժամանակ կարող են մասնատվել պրովինցիալ կամ տեղական կենսաշերտագրական զոնաների՝ ըստ օրգանիզմների տարբեր խմբերի: Հարկերի անվանումը տրվում է այն աշխարհագրական օբյեկտի անվանումից, որի տարածքում կամ որի մոտ գտնվում է շերտատիպը: Հազվադեպ հարկերն անվանում են նաև հին ցեղերի անուններով (սարմատի հարկ):

Հարկերի ինդեքսները ձևավորվում են բաժնի ինդեքսից և հարկի լատինական անվան սկզբնատառով՝ Կ₁ – վալանժինի հարկ, Կ_{2c} – կոնյակի հարկ: Եթե մեկ բաժնում հարկերի սկզբնատառերը համընկնում են, ապա սկզբնատարին ավելացվում է բաղաձայն տառը՝ Կ_{1a} – ապահի հարկ, Կ_{1c} – սենումանի հարկ:

Չոնան (զօհ) հարկի մի մասն է, տարածումը համընդիանուր չէ, սովորաբար ընդգրկում է որևէ կենսաաշխարհագրական մարզ: Չոնայի նստվածքներն առաջանում են օրգանիզմների բնորոշ համալիրների՝ զոնալ համալիրի գոյության ընթացքում: Այդ համալիրի մեջ մտնում են շերտագրական տեսակետից կարևոր ձևեր, որոնք հանդիպում են տվյալ նստվածքների մեջ: Տեսակների զոնալ համալիրի կազմը տարբեր շրջաններում կարող է քիչ փոփոխվել, բայց համալիրի ընդիանուր բնույթը պահպանվում է, որը հնարավորություն է տալիս զոնալ համալիրը հետամտել զգալի տարածությունների վրա: Չոնայի անվանումը տրվում է ըստ զոնալ համալիրի ամենաբնորոշ տեսակի, ըստ որում՝ այդ անվանումը տրվում է նաև այլ վայրերում, որտեղ այդ բնորոշ տեսակը համալիրի մեջ բացակայում է:

Օղակը (զեռո) ենթակա է զոնային և ընդգրկում է ապարների համալիր, որն առաջացել է կլիմայական փոփոխությունների մեկ բոլորաշրջանի (ցիկլի) ընթացքում. օգտագործվում է միայն չորրորդական ժամանակաշրջանի համար: Բոլորաշրջանը բաղկացած է կիսաբոլորաշրջաններից՝ տարացում (միջաւացաղաշտային, չորային) և սառեցում (սարցաղաշտային, պյուվիալ (ριυονια-անձրև)): Օղակը պետք է ունենա իր կլիմայաշերտագրական հիմնավորումը (քարաբանակելողիքական) և շերտատիպը (ստրատոտիպը): Չորրորդական համակարգը բաղկացած է չորս օղակներից՝ ստորին, միջին և վերին չորրորդական և ժամանակակից կամ ստորին, միջին և վերին պլեյստոցեն և հոլոցեն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԻ, ՈՂԻՍԱՍԱՏԱՒԻ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԿՈԴԵՔՍ

Միջազգային շերտագրական տեղեկատուն նպատակառությամբ է հանրամատչելի շերտագրական տերմինաբանության և կանոնների մշակմանը՝ դրանց միջազգային կոռորդինացումը և փոխընթացնումը բարեկավելու համար: Առաջին անգամ այն լույս տեսավ 1976 թ-ին: Երկ-

բորդ հրատարակության մեջ (1994 թ.) կատարվել են զգալի լրացումներ և ճշումներ՝ կապված տարրեր շերտագրական միավորների մեկնարանության հետ, մողվել են նոր կատեգորիաներ. մազնիսաշերտագրական ստորաբաժանումներ և այլն: Վերջինիս համառոտ տարրերակները լրիս են տեսել 1999 թ-ին անգլերեն, իսկ 2002 թ-ին՝ ռուսերեն:

Հայաստանում, ինչպես նաև ԱՊՀ-ի մի շարք երկրներում, կիրառվում է նախկին ԽՍՀՄ-ի կողեքսը (1992թ.), որն իր նոր արտահայտումը գտավ Ռուսաստանի շերտագրական կողեքսում (2006թ.): Դեռևս անցյալ դարի 50-ական թթ. կազմվել էր ԽՍՀՄ միջգերատեսչական շերտագրական կոմիտե, որի նպատակն էր ընդհանուրացնել ամփոփել ԽՍՀՄ տարածքում կատարված շերտագրական ուսումնասիրությունները: Մշակվել է ԽՍՀՄ շերտագրական կողեքսը, որն իրենից ներկայացնում է շերտագրության մեջ օգտագործվող հասկացությունների, տերմինների, անվանարկումների բովանդակությունը և կիրառությունն արտահայտող կանոններն ու առաջարկությունները: Այդ ընթացքում շերտագրական կողեքսներ կազմվել են 1956, 1960, 1965, 1977 թթ.-ին:

Կողեքսն ընդգրկում է շերտագրական դասակարգման, տերմինաբանության, նոմենկլաստուրայի (Ենթակայության) հիմնական կանոններն ու դրույթները: Կողեքսում ընդունված է շերտագրական դասակարգման հետևյալ կառուցվածքը:

1. Քարարանաշերտագրական – խումբ (սերիա, համալիր), ֆորմացիա, շերտատուփ, շերտ, հոսր:
2. Սահմանափակված աններդաշնակություններով – սինտեմա (սեկվենս):
3. Կենսաշերտագրական – կենսագոնա (տարածման գոնա):
4. Մազնիսաշերտագրական բնեուականություն – բնեուականության գոնա:
5. Ժամանակագրական, ընդիհանուր շերտագրական ստորաբաժանումներ.

Ընդհանուր շերտագրական
ստորաբաժանումներ
Էռնոտեմա (քոնոտեմա)
Էրատեմա (խումբ) (группа)
համակարգ (система)
բաժին (отдел)
հարկ (ярус)

Երկրաժամանակագրական
ստորաբաժանումներ
Էռն (քօն)
դարաշրջան (эра)
ժամանակաշրջան (период)
դարակարգ (эпоха)
դար (век)

- | | |
|-------------------------|-------------------|
| յիրոնոգոնա, զոնա (зона) | փուլ (фаза, хрон) |
| օդակ (звено) | պորա (пора) |
6. Տեղական շերտագրական ստորաբաժանումներ՝ համալիր (комплекс), սերիա (серия), շերտախումբ (свита)
7. Օժանդակ շերտագրական ստորաբաժանումներ՝ ստվարաշերտ (հաստվածք) ապարագանգված (толща), շերտատուփ (դարսաշերտ) (пачка), շերտ (пласт, слой), բնորոշիչ հորիզոն (маркирующий горизонт):
8. Կենսաշերտագրական ստորաբաժանումներ – շերտ ֆառնայով (флорацией):

ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Նոր ընդհանուր շերտագրական ստորաբաժանումների նկարագրման ժամանակ տրվում են հետևյալ տվյալները. ա) անվանումը, բ) նոր ստորաբաժանումների ընդհանուր բնութագիրը՝ նշելով հիմնական չափանիշները, գ) ընդհանուր շերտագրական սանդղակում համարձեք ստորաբաժանման բացակայության փաստարկները, դ) հարկի, զոնայի և օդակի համառոտ շերտատիպը, տեղավայրը, կտրվածքի նկարագրությունը կամ մատնանշում հրատարակված աշխատանքները, ե) քարաբանական կազմը, զ) համադրումը ռեզինալ և տեղական ստորաբաժանումների հետ՝ ոչ շերտատիպով շրջաններում:

ՏԵՂԱԿԱՆ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Տեղական շերտագրական ստորաբաժանումները ապարների ամբողջություններ են, որոնք առանձնացվում են տեղական կտրվածքում՝ ըստ շերտագրական դիրքի՝ համալիր հատկանիշների հիման վրա: Հատկապես հաշվի է առնվում ֆացիալ-քարաբանական կամ ապարագրական հատկանիշները, որոնցով որոշակի սահմանափակվում ու տարրելուում են հարակից ստորաբաժանումներից, ինչպես կտրվածքում, այնպես էլ տարածության մեջ: Տեղական շերտագրական ստորաբաժանումների առանձնացումը զիսավորապես կապված է քարտեզագրման հարմարության հետ:

Տեղական շերտագրական ստորաբաժանումներն ունեն համալիր բնութագիր՝ նյութական կազմի առանձնահատկությունը, շերտավորության կառուցվածքը, ոլիքմիկությունը, ընդմիջումների և սահմանների բնույթը, աշխարհագրական տարածումը: Դրանց առանձնացման կարևոր հատկանիշներից է հնէաբանական բնութագիրը, որը հնարավորություն է տալիս որոշելու հասակը, ընդմիջումները և համադրումը այլ տեղական ստորաբաժանումների հետ, ինչպես նաև վերականգնել նստվածքակուտակման ֆացիալ պայմանները: Տեղական շերտագրական ստորաբաժանումների աշխարհագրական տարածումը տարբեր է: Դրանք կարող են առանձնացվել կառուցվածքաֆորմացիոն զոնայի՝ սկսած առանձին տեղամասերից մինչև, ուղղոնի մասերը: Տեղական ստորաբաժանումների ձևավորման ժամանակը մեծ մասամբ չի համընկնում երկրաժամանակագրական սահմանների հետ: Ստորաբաժանումներն առանձնացնելիս ապարների հաստությունը որոշիչ դեր խաղալ չի կարող: Տեղական հիմնական շերտագրական ստորաբաժանումներն են՝ համալիր, սերիա, շերտախումբ, իսկ օժանդակները՝ – սովլարաշերտ, հաստվածք, շերտատուփ (դարսաշերտ), շերտ, բնորոշիչ հորիզոն:

ԶՈՆԱԼ ԿԵՆՍԱՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Զոնալ կենսաշերտագրական ստորաբաժանումները որոշակի օրգանական մնացորդներով բնութագրված ապարների ամբողջություններ են, որոնց ձևավորման ժամանակը որոշվում է ֆաունայի և ֆլորայի առանձին խմբերի կազմում և վոլուցիոն վոփոխություններով, ինչպես նաև էկոլոգիական համակեցությունների (աստղիացիաների) հերթափոխմամբ: Այս ստորաբաժանումների տարանումիական միավորը հանդիսանում է կենսաշերտագրական զոնան, որը կարող է բաժանվել ենթազոնների: Կենսաշերտագրական զոնան ապարների ամբողջություն է, որը ներփակում է օրգանական մնացորդների որոշակի համալիր (զոնալ համալիր), որը տարբերվում է վերադիր ու տակդիր ապարների բնորոշ համալիրներից՝ անկախ զոնան կազմող ապարների հզորությունից: Կենսաշերտագրական զոնայի շերտատիպը պեսը է ներփակի զոնալ համալիրը՝ ներառյալ տեսակի ինդեքսը: Կենսաշերտագրական զոնաների անվանումը կազմված է մեկ կամ երկու տեսակ-ցուցիչի անունից, օրինակ չոհա Globigerinoides conclobatus:

Ֆաներոզովի ընդհանուր շերտագրական սանդղակ, մինչև հարկը ներառյալ
(թվերով նշված է բացարձակ հասակը՝ մին. տարի):

Հրամանակ	Համակարգ	Բաժին և հերթափա՞կին		Հարկ	
		Հրամանակի տարի	Հրամանակի մասնակին	Հարկ	Ակտագիրի համար
		Հրամանին		Գելազի Ն: ց1 Պիասկին Ն: րա	Ակտագիրի համար
		Վերին տօնութիւն	Վերին Միջին Ստորին	Զանկինի Ն: զան	Վիմերիի Ն: հ
		Մասնակիութեան (Ասցենդուն)		Մասնակիութեան (Ասցենդուն)	Պուստուսի Ն: ք Սկանծուսի Ն: ու Սարմանսի Ն: ու
		Վերին Ն:	3.4	Գելազի Ն: ց1 Պիասկին Ն: րա	Վիմերիի Ն: հ
		Ստորին Ն:	5.3	Զանկինի Ն: զան	Պուստուսի Ն: ք
		Վերին Ն:	11.6	Մասնակիութեան (Ասցենդուն)	Սկանծուսի Ն: ու
		Միջին Ն:	16	Սերբամակի Ն: սր	Սարմանսի Ն: ու
		Ստորին Ն:	23	Լակինի Ն: լան Բորգիպալի Ն: սար	Վիմերիի Ն: հ Վարպատին Ն: ու Թարխանի Ն: ու Վորշամուրի Ն: ու Սալահարութիւնի Ն: ու Դուկիսի Ն: ու
Կայունողական համակարգ	ՀՀ/ՀՀ ՀՀ/ՀՀ	Վերին Բ:	23.8	Հաստութիւն Բ: հ	
		Օկրոշիչի	Ստորին Բ:	Ռուսկին Բ: տ	
			33	Դիբարոնի Բ: ը	
		Էնցիդի	Վերին Բ:	Դիբարոնի Բ: ը	
			38	Բարսունի Բ: ե	
		Պակասիչի	Ստորին Բ:	Լուսականի Բ: լ	
			40.4	Դարբի Բ: ա	
		Պակասիչի	Ստորին Բ:	Դարբի Բ: ա	
			48.6		
		Պակասիչի	Վերին Բ:	Տանիսին Բ: տ	
			58.7	Չեմակալան Բ: տ	
		Պակասիչի	Ստորին Բ:	Մուրի Բ: ու	
			65	Դանիսիսին Բ: ճ	
Մեղքողոյական համակարգ	Վերին Կ:			Մասատրիխոսի Հ: ու Կամպասի Հ: քը (Կ:քը) Մաստուսի Հ: ստ Կուսանի Հ: ք (Հ:քո) Տուրտի Հ: տ Սիմոնակի Հ: ք (Հ:քմ)	
			99	Արի Կ: օլ Ապսի Կ: օւ Բարբարի Հ: ին: Հուսերիի Հ: ին Հանսեմինի Կ: ու Բերիսակի Հ: օն	
	Ստորին Կ:		145		

Մատեղութան Բառ	Մատեղութան Բառ	Տեղութան Բառ	Տեղութան Բառ	Մատեղութան Բառ	
				Տեղութան Բառ	Տեղութան Բառ
Վերին ի	161	Շառնի յատ Կիմսելիքի յակն Օրսփորի յօ		Վելովիլիք էկ, (յէց) Բարի յատ Բայոսի յատ Աւելի յա	
Միջին յ	175			Տարի յատ Պիկնարախի յը Սինենորի յէս Հևասանցի յիհ	
Ստորին ի	200			Անոնի Յէտ Նորիյի Յէտ Կարմիրի Յէտ	
Վերին Տ	228			Ունի Յէտ Նորիյի Յէտ Կարմիրի Յէտ	
Միջին Տ	237			Լազինի Պէլ Անդինի Պէտ	
Ստորին Տ	251			Օւենոնի Պօ Նոյնի Պօ	
		Լույիգիի Բժ 260.4	Շանինիի Բժ Ուչանիի Բաս Կեպտենիի Բէկ		Դարաշամի Բժմէր Ջուլֆայի Բժ Սինիի Բշմձ Մուրուաբի Բշմ
Գվանդելուտիի Բ:	270.6	Բիլար- Միիի	Մրջի Բին Ուսունի Բար		Կուրեզաւանիի Բշմէբ Բորդի Բին Յայսաշի Բյա Սակմարի Բաս Սասելի Բա
Մերձուրափ Բ:	299		Կուսուրոյի Բէկ Արտինի Բշար Սակմարի Բիս Ասելի Բա		
		Վերին Ը	Գծելի Ըց Կասինդի Ըց Մասկայի Ըց		Գծելի Ըց Ջուլֆայի Ըց Սուկմայի Ըց Բայլիրինի Ըց
		Միջին Ը	Մասկայի Ըց Մասկայի Ըց		
		Ստորին Ը	Ստրայնդի Ըց Վիզի Ըց Տուսելի Ըց		
		Վերին Ծ	Ֆանմի Ծամ 306.5	Գծելի Ծց Կասինդի Ծց	
		Միջին Ծ	Մասկայի Ծամ		
		Ստորին Ծ	Բայլիրինի Ծամ		
		Վերին Ԕ	318.1		
		Միջին Ԕ	359.2		
		Ստորին Ԕ	385		
		Վերին Ԕ	385	Ֆանմի Ԕմ Ֆրանի Ԕմ	
		Միջին Ԕ	397	Ժիլենի Ԕց Էլինի Ԕց	
		Ստորին Ԕ		Էմսի Ԕց Պրանայի Ԕց Լուկունի Ԕց	
		Վերին Տ:	416		
		Վերին Տ:	429		
		Ստորին Տ:	443		
		Վերին Օ:	460		
		Միջին Օ:	472		
		Ստորին Օ:	488		
		Ը			

Պատեհազարդ ԲՀ Քաղաքացիություն Պատեհազարդ Ընդունակություն	505	Բատրաքայի Ծառ Ակսայի Ծառ Մակի Ծառ Այտսականի Ծառ Մայայի Ծառ Ամերիկականի Ծառ Տոնոսի Ծառ Առաջապահի Ծառ Տոնուածականի Ծառ
Սահմանական ՊՀ Քաղաքացիություն Սահմանական Ընդունակություն	518	Ամերիկականի Ծառ Տոնոսի Ծառ Տոնուածականի Ծառ Տոնուածականի Ծառ
Սահմանական ՊՀ Քաղաքացիություն Սահմանական Ընդունակություն	542	Տոնուածականի Ծառ Տոնուածականի Ծառ

Մինչքեմբրիի ընդհանուր շերտագրական սանդղակ*

Ակրա- տիվում	Էնթուսիաս		Էրառնման	Համակարգ	
	Ֆանտազմ	Ապահովություն		Բնակչութիւն	Վեհրիի վեհնութիւն
Պրակտիկական PR	Վերին պրոտերոզյ PR:	Ռիֆեյ R	Ներառութե- րություն	Վերին սիփեյ R:	Բնակչութիւն (Վեհնութիւն)
			Մեզոութե- րություն	Միջին սիփեյ R:	620
	Ստորին պրակտիկական PR: (Կարելիա)	Պակետապր- տերություն	Մայուսապր- տերություն	Մայուս սիփեյ R:	650±20
			Պակետապր- տերություն	Կրիոգենիկ	850
Արդիւյ AR	Վերին Արժնել ԱՐ:	Ներառիւթյ	Վերին Կարելիա	Տոնուածականի Ծառ	Տոնուածականի Ծառ
			Ստորին Կարելիա	1900±50	1350±20
	Ստորին Արժնել ԱՐ:	Պակետապր- տերություն	Վերին Կարելիա	2500±50	1650±50
			Ստորին Կարելիա		
Արդիւյ AR	Վերին Արժնել ԱՐ:	Մեզոարիւթյ	Վերին	2800±50	2800±50
			Մեզոարիւթյ	3150±50	3150±50
	Ստորին Արժնել ԱՐ:	Պակետապր- տերությ	Վակելուարիւթյ	3600±50	3600±50
			Էռարիւթյ	4000	4000

- * Հաստատվել է ՄՇԿ-ի կողմից 2004 թ. և Ուսւաստանի Դաշնության ՄՇԿ-ի կողմից 2006 թ.

ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Նոր կենսաշերտագրական ստորաբաժանումների նկարագրման ժամանակ բերվում են հետևյալ տվյալները. ա) անվանարկում՝ ըստ կոդեքսի կանոնների և գոնայի տեսակի (եթե որոշված է հեղինակի կողմից), բ) օրգանական մնացորդների համալիրը՝ ըստ բնորոշ տեսակների (գոնայի կոմպլեքսի նշումով), զ) օրգանական մնացորդների հավաքածուի պահպանման վայրը և թիվը (N) (գոնայի համալիր), կամ հրատարակված աշխատանքների մատնանշումը, դ) շերտատեսակ կտրվածքի տեղավայրը, դրա նկարագրությունը, կամ մատնանշվում է հրատարակված աշխատանքների այն կտրվածքը, որն ընդունվում է որպես շերտատեսակ, ե) հնարավոր հարաբերությունը հարակից տարածքների կենսաշերտագրական գոնաների հետ, զ) երկրաբանական հասակը:

ՇԵՐՏԱՏԻԴ ԿՏՐՎԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հարկի, գոնայի, օդակի, շերտախմբի շերտատիպ կտրվածք կոչվում է այն կոնկրետ կտրվածքը, որն առանձնացվել ու նկարագրվել է որպես տվյալ շերտագրական ստորաբաժանման տիպային (ցուցանմուշային) կտրվածք: Շերտատիպը ծառայում է որպես ստորգանմուշային կտրվածք, որի հետ հետազայում համադրվում են այդ նույն շերտագրական ստորաբաժանման կտրվածքներն այլ շրջաններում: Տեղական շերտագրական ստորաբաժանումներից շերտախմբերի համար շերտատիպը պարտադիր է:

Շերտատիպերի նկարագրման սխեման հետևյալն է.

ա) շերտատիպի ճշգրիտ տեղավայրը՝ նշված քարտեզի վրա:

բ) տվյալ կտրվածքի կամ շերտատիպը կազմող մի քանի կտրվածքների մերկացման կամ մերկացումների արտահայտումը (լուսանկար, գծապատկեր և այլն):

գ) Շերտատիպի շերտ առ շերտ քարաբանական նկարագրությունը, որտեղ նշվում է առանձին շերտերի կամ մասերի հզորությունները, իգուսողային հասակը, հնամագնիսական տվյալները:

դ) Շերտատիպի շերտ առ շերտ հետախական նկարագրությունները (եթե կան օրգանական մնացորդներ):

ե) Օրգանական խմբերի համառոտ շերտագրական և ֆաջիալ նշանակության բնութագիրը:

զ) Ծածկող և տակդիր նստվածքների համառոտ բնութագիրը (կոնտակտի բնույթը, կազմը, հասակը):

է) Շերտատիպի նմուշների ու բրածոների պահպանման վայրը:

ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԿՈԴԵՔՍՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Տեղական շերտագրական ստորաբաժանումներն առանձնաց փում են կառուցվածքաֆորմացիոն զոնաների՝ առանձին մասերից սկսած մինչև տարածաշրջանի (ուղղունի) մասերը: Այդ ստորաբաժանումներն են՝ համալիր (комплекс), սերիա, շերտախումբ (свита):

1. *Համալիրն* ամենախոշոր միավորն է և ընդգրկում է խիստ բարդ կազմի ապարների հզոր խմբավորումներ, համապատասխանում է տարածքի երկրաբանական զարգացման խոշոր էտապին և միավորում է երկու և ավելի սերիաներ:

2. *Սերիան* ավելի խոշոր միավոր է, քան շերտախումբը, և, սովորաբար, ընդգրկում է երկու և ավելի շերտախումբեր, որոնք համապատասխանում են նստվածքակուտակման խոշոր ցիկլին և ունեն առաջացման պայմանների կամ ապարների կազմի ինչ-որ ընդհանուրթյուններ: Համալիր և սերիա ստորաբաժանումներն առավելապես օգտագործվում են հնագույն մինչքեմբրիյան գոյացությունների կտրվածքների շերտագրական մասնատման դեպքում:

3. *Շերտախումբը* հիմնական տեղական շերտագրական ստորաբաժանումն է: Այն կտրվածքում գրավում է որոշակի շերտագրական դիրք, բնորոշվում է յուրահատուկ ֆաջիալ-քարաբանական և հնէաբանական առանձնահատկություններով: Շերտախումբը կարող է կազմված լինել ամբողջովին համասեռ ապարներից կամ, մի ապարի գերակշռության դեպքում, պարունակել այլ ապարների շերտեր և ոսպնյակներ: Նա կարող է կազմված լինել մի քանի ապարների օրինաչափ հերթափոխումից, կամ կարող է բնութագրվել կազմի բազմազանությամբ, կամ ընդգրկել խոշոր նստվածքակուտակման ցիկլ: Շերտախումբի ներսում չպետք է լինեն էտական շերտագրական և տեկստոնական աններդաշնակություններ: Տարածման մակերեսում շերտախումբը պետք է կայուն լինի՝ հիմնական ֆաջիալ-քա-

բարանական և հնէաբանական հաստկանիշների տեսակետից: Շերտախումբն առանձնացվում է որոշակի կառուցվածքորմացիոն գոնայում կամ նրա առանձին տեղամասերում: Շերտախումբը պետք է ունենա իր շերտատիպը (ստրատոտիպը): Շերտախումբը կարող է ստրաբաժանվել ենթաշերտախմբերի կամ օժանդակ քարաբանաշերտագրական միավորների՝ շերտատուփերի և շերտերի:

Տեղական շերտագրական միավորներն ունեն աշխարհագրական անվանում, ենթաշերտախմբերը՝ ստորին, միջին, վերին՝ ավելացրած շերտախմբի անունը, օրինակ՝ շիրակի շերտախումբ, ողաքերդի շերտախումբ, ստորին շիրակյան ենթաշերտախումբ, վերին շիրակյան ենթաշերտախումբ:

ՕԺԱՆԴԱԿ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Սրանք ազատ օգտագործման տերմիններն են.

1. Քարաբանաշերտագրական ստորաբաժանումներ
Ստվարաշերտ (հաստվածք – ապարագանգված) (տոլու)
Շերտատուփ - (պաչկա)
Շերտ (слой)
Բնորոշիչ հորիզոն (маркирующий горизонт)

Այս ստորաբաժանումների համար անվանարկման հատուկ կանոններ չկան, ստվարաշերտի անունը տրվում է գերակշռող ապարների անունից (կրաքարային ստվարաշերտ), շերտատուփինը՝ թվով կամ տառերով (շերտատուփ 1 կամ մոխրագոյն ավագաքարեր): Շերտատուփը (առանց թվային կամ տառային անվանարկման), շերտը կամ բնորոշիչ հորիզոնը սովորաբար անվանարկվում են բնորոշ ապարների անունից, կամ ըստ քարաբանական հատկանիշների, կամ ըստ բնորոշ օրգանական մնացորդների: Օրինակ՝ կայծքարային շերտատուփ, ածխային շերտ, հանքաբեր շերտ, կրաքարային հորիզոն, նուևուլֆային հորիզոն (սովորաբար «բնորոշիչ» բառը բաց է բռնկվում): Բնորոշիչ հորիզոնն օգտագործում են խոշոր և միջին մասշտաբի քարտեզագրման և տեղական կտրվածքների համադրման ժամանակ:

2. Կենսաշերտագրական ստորաբաժանումներ. դրանք ապարների ամբողջություն են, որոնք որոշվում և բնութագրվում են իրենց

մեջ պարունակվող բնորոշ բրածոյով կամ բրածո մնացորդներով: Եթու ֆառինայով անվանումը տրվում է ելներով բնորոշ օրգանական մնացորդներից, ըստ որում օրգանիզմները վերադիր կամ տակդիր նստվածքներում կամ բացակայում են, կամ համեմատարար հազվադեպ են հանդիպում:

ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ

Շերտագրական բառարանում շերտագրական ստորաբաժանումների հատկանիշների նկարագրությունը տրվում է հետևյալ հաշորդականությամբ.

1. Ստորաբաժանման անվանումը. Եթե ստորաբաժանման անվանման մեջ կա փոփոխություն, ապա փակագծերում տրվում է նրա առաջնային հեղինակային անվանումը: Եթե անվանումը ճիշտ չէ կազմված, բայց լայնորեն օգտագործվում է, ապա այն չի փոփոխվում:
2. Ստորաբաժանման կարգն՝ ըստ միջգերատեսչական շերտագրական կողեքսում ընդունված տերմինարանության: Փակագծերում նշվում են մնացած մյուս կարգերն ու անվանումները, որոնցով տվյալ ստորաբաժանումն օգտագործվում է: Եթե տվյալ կարգը կասկածելի է, ապա տրվում է հարցական նշանով: Եթե կարգը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, իսկ այն փոփոխելու համար չկան բավարար հիմքեր, ապա այն տրվում է չակերտներով:
3. Դիրքն ընդհանուր սանդղակում. Եթե դիրքը կասկածելի է, դրվում է հարցական նշան:
4. Անվանման ծագումը. Եթե աշխարհագրական տեղանքից է, ապա ճշտվում է տեղավայրը:
5. Տվյալ շերտագրական ստորաբաժանման հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, տարեթիվը, աշխատանքի համարը, որտեղ այն առաջին անգամ հրատարակվել է՝ նշելով եջը: Եթե հեղինակների քանակը 3-ից ավել է, նշվում են միայն առաջին երեքը:

Շերտագրական ստորաբաժանման նկարագրությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

- ա) աշխարհագրական տարածումն՝ առանց նշելու «տարածված է» բառը, նշելով միայն աշխարհագրական անունները: Եթե ստորաբաժանումը բացահայտված է հորատանցքում՝ դա հասուն նշվում է:
- բ) շերտատիպ (ստրատոտիպ) կտրվածքի կամ լավագույն կտրվածքի վայրը, եթե այն նշվում է հեղինակի կողմից:
- զ) համառոտ քարարանական բնութագիրը:
- դ) ստորաբաժանման հզորությունը տրվում է մետրերով և նշվում է «Հ» տառով (Հ. 10 մ):
- ե) հնէաբանական բնութագրում նշվում են միայն ամենաբնորոշ ձևերը, հեղինանակների ազգանունները գրվում են առանց փակագծերի:
- զ) փոխարարերությունը տակդիր և վերադիր նաևվածքների հետ:
- է) հիմնական կարծիքների շերտագրական ստորաբաժանման ծավալի, հասակի, մասնատման և համադրման վերաբերյալ:
- ը) ստորաբաժանմանը վերաբերվող ամենահական աշխատանքները, որոնց ընդհանուր ցուցակը տրված է բառարանի վերջում:
- թ) շերտագրական ստորաբաժանման կազմողի անունը, հայրանունը, ազգանունը:

ԱՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Միջազգային շերտագրական տեղեկատու և Ռուսաստանի շերտագրական օրենսգիրք, նշանակությունը և նպատակը:
2. Հիմնական շերտագրական ստորաբաժանումներ, ընդհանուր, ռեգիոնալ տեղական:
3. Ընդհանուր շերտագրական և ժամանակագրական ստորաբաժանումներ, հարկեր, խրոնոգրնաներ:
4. Ռեգիոնալ և տեղական շերտագրական ստորաբաժանումներ, սահմանումը և տեսակները:
5. Ստրատոնների սահմանումը և նրանց տարատեսակները;
6. Երկրաժամանակագրական ստորաբաժանումների սահմանումը և տեսակները:
7. Նկարագրման և անվանարկման կանոնները

ԿՏՐՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍՆԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԴՐՄԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ
ՄԱՍՆԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Շերտագրական մասնատման տակ հասկացվում է շերտավորության հաջորդականության ու բնույթի մանրամասն պարզաբնումն, ինչպես նաև առանձին կտրվածքում շերտերի ու սովորաշերտերի յուրահատուկ առանձնահատկությունների բացահայտումը: Այդ մասնատման տեսական հիմքը շատ պարզ է: յուրաքանչյուր ծածկող շերտ երիտասարդ է ներքնադիրից:

Միմյանցից հեռացված և նույնիսկ միջմայրցամաքային կտրվածքների համահարաբերակցության համար նոր հնարավորություններ են առաջացել սալերի տեկստոնիկայի նոր համամոլորակային վարկածների հետ կապված: Այդ կոնցեպցիայի համաձայն նոր օվկիանոսային կենուր առաջանում է օվկիանոսային հատակի տարաշարժման պրոցեսում, իսկ օվկիանոսային բազալտների արտավիճումները շատ թե քիչ համաժամանակյա են ոդիֆուային զոնաների գերիհսքային ապարների ձևավորման հետ: Այդ վարկածի կողմնակիցները նորից են բարձրացնում տեկստոգենեզի համամոլորակային արտահայտման հնարավորությունը: Օվկիանոսի կանոնավոր ուսումնասիրությունները սկսած 1950-ական թվականներից տվել են այդ վարկածը հաստատող զգալի քանակությամբ այդ հիպոթեզը հաստատող նոր փաստագրական նյութեր, և այսօր դրանք վերածվել են բարոլորտի սալերի տեկստոնիկայի տեսության:

Շերտագրական համահարաբերակցությունն իրենից ներկայացնում է միմյանցից շատ թե քիչ հեռու տեղադրված շրջանների տարրեր կտրվածքների համահարաբերակցում, հասակային փոխարաբերությունների պարզաբնում՝ առանց առանձին հորիզոնների անմիջական հետամտման: Համահարաբերակցումը կարող է լինել տեղական և ընդհանուր: Տեղականը՝ առանձին կտրվածքների

համադրումն է մեկ, համեմատաբար ոչ մեծ շրջանում, ընդհանուրը՝ կտրվածքների մասնատումն է հեռավոր մարզերի (հաճախ տարեր մայրցամաքներում գտնվող) միջև:

Սասնատման և համահարաբերակցման ժամանակ համատեղ օգտագործվում են տարբեր մեթոդներ, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ երկրաբանական (ոչ հնէաբանական) և կենսաշերտագրական (հնէաբանական):

ԿԵՆՍԱՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Այս մեթոդների հիմքում ընկած է բրածո օրգանական մնացորդների լայնորեն օգտագործումը, և երկրի օրգանական աշխարհի անընդմեջ և անշրջելի զարգացման սկզբունքը, երբ երկրաբանական ժամանակի յուրաքանչյուր հատվածին համապատասխանում են միայն երան բնորոշ բույսերը և կենդանիները: Էվոլյուցիայի անշրջելիության օրենքն առաջին անգամ որոշել է Օ՛Նոլոն: Նա նշել է, որ ինչ-որ պատճառով անհայտացած տեսակը ոչ մի դեպքում նորից չի կարող հանդիսանալ: Հաս այս օրենքի՝ այս կամ այն շերտում հանդիպող բրածո օրգանիզմների համալիրն արտահայտում է օրգանական աշխարհի զարգացման որոշակի փուլ և չի կրկնվում: Հենց այս սկզբունքն է ընկած բրածո մնացորդների միջոցով ապարների հարթերական հասակի որոշման հիմքում:

Բացի այդ, կենսաշերտագրական մեթոդների հիմքում ընկած է նաև բրածո օրգանիզմների լայնորեն տարածման սկզբունքը, որը հնարավորություն է տալիս միմյանց հետ համադրելու միմյանցից հեռու տեղաբաշխված կտրվածքները (ինչպես տվյալ տարածքում, այնպես էլ տարբեր ռեգիոնների և մայրցամաքների միջև): Որոշ օրգանական խմբեր (գրապտոլիքներ, ամոնիտներ, նումուլիթներ, կոնդրոնտներ և այլն) հնարավորություն են տալիս կատարելու համաերկրային համադրություններ:

Սպարների հասակը որոշելու համար գտնված բրածո մնացորդները համեմատում են հենակետային կամ շերտատիպ կտրվածքների բրածոների հետ: Կենսաշերտագրության համար ոչ բոլոր բրածո օրգանիզմներն ունեն միանման նշանակություն: Այդ կապակցությամբ բրածո օրգանիզմների մեջ առանձնացնում են ար-

խիշերտագրական և պարաշերտագրական խմբեր: Առաջինները բնորոշվում են արագ էվոլյուցիայով, լայն աշխարհագրական տարածմամբ և թաղմամբ տարբեր տիպի նստվածքային ապարներում: Դրանց են պատկանում զրապտոլիթները, արխեոցիատները, տրիլոֆիթները, կոնոդոնտները, գոնիատիտները, ամոնիտները, պլանկտոն ֆորամինիֆերները: Այս խմբերը հնարավորություն են տալիս կտրվածքները մանրամասն մասնատելու և համահարաբերակցելու: Պարաշերտագրական խմբին պատկանում են հիմնականում հատակաբնակ օրգանիզմներն, օրինակ՝ ուստանիները (բրափիոպոդներ), մամուկերպերը, սպունգները, թաղվող երկփեղկանիները, որոնք սերտ կապված են ծովահատակի որոշակի տիպերի ու նստվածքների հետ: Դրանք համեմատաբար ավելի քիչ են օգտագործվում միջուկիննալ համադրությունների համար, բայց որոշակի նեղոններում և տեղամասերում ունեն կարևոր նշանակություն:

Բայց բածո օրգանիզմների բաժանումն արխիշերտագրական և պարաշերտագրական խմբերի պայմանական է և կախված է մեր գիտելիքների աստիճանից: Օրինակ, նախկինում պարաշերտագրական խմբին էին վերագրում ուղիղարիխաները և կոնոդոնտները, բայց հեկտրոնային մանրապիտակի օգտագործումից հետո դրանք մեծ նշանակություն ձեռք բերեցին:

Կենսաշերտագրական մեթոդներն ամբողջ ֆաներոզի համար առաջատար են: Դա պայմանավորված է երկու առանձնահատկություններով:

- 1) Այդ մեթոդները համապարփակ են, քանի որ կարող են կիրառվել օրգանական մնացորդներ պարունակող ցանկացած քարարանական կազմի, ցանկացած ֆացիալ պատկանելիության և ցանկացած հասակի դեպքում:
- 2) Դրանք անկողմնակալ են, քանի որ կենսաշերտագրական տվյալները հնարավորություն են տալիս նստվածքային ապարախմբերի հաջորդականությունն ու փոխհարաբերությունը գնահատել անկախ դրանց կազմից ու կառուցվածքից:

Ոչ հնէաբանական մեթոդների հետ համեմատած կենսաշերտագրական մեթոդները պահանջում են հետազոտողների հատուկ մասնագիտական պատրաստվածություն:

Կենսաշերտագրությունում օգտագործվում են մի շարք մեթոդներ, որոնցից առավել կարևոր են հետևյալները:

Ղեկավարող ձևեր կոչվում են այն մահացած օրգանիզմների մնացորդները, որոնք գոյություն են ունեցել կարճ ժամանակահատվածում, հասցրել են այդ կարճ ժամանակում տարաբնակվել զգալի տարածքներում և հանդիպում են մեծ քանակով: Հետևաբար, ղեկավարող ձևերն ունեն լայն հորիզոնական և նեղ ուղղաձիգ տարածում, կտրվածքներում հաճախ են հանդիպում և հեշտ են ճանաչվում:

Այս մեթոդն առաջին հնեաբանական մեթոդն է, կիրառվել է շերտագրությունում 18-րդ և 19-րդ դարերի սահմանում: Այն գիտական հիմնավորում ստացել է 19-րդ դարի կեսերին, երբ գերմանացի գիտնական Հ.Բրոնը տվեց ղեկավարող ձևերի մասին հասկացությունը և կազմեց աշխարհում անողնաշարավորների ղեկավարող ձևերի առաջին առլասը:

Ղեկավարող ձևերի մեթոդը հիմնվում է այն դրույթի վրա, որ հասակակից համարվում են այն նստվածքները, որոնցում հանդիպում են միևնույն ղեկավարող բրածոները: Շերտագրության մեջ այս մեթոդն երկար ժամանակ հիմնականն էր, և դրա օգնությամբ մշակվեց մանրամասն շերտագրական սանդղակը, մասնատվեցին և համարվեցին միմյանցից շատ հեռու գտնվող կտրվածքներ:

Մեթոդի եռթյունը հետևյալն է. կտրվածքի տվյալ շերտում հանդիպող բրածոն մնացորդներից ընտրվում են նրանք, որոնք բնորոշ են տվյալ շերտի համար, բավարարում են վերը նշված պահանջներին և հանդիպում են շերտագրական կտրվածքում: Այդ ձևերը համարվում են ղեկավարող տվյալ շերտի համար:

Բայց այս պարզ մեթոդը գուրկ չէ թերություններից: Պարզվեց, որ սխալ է այն կարծիքը, թե ղեկավարող ձևերն, անկախ բնակվելու պայմաններից, ունեն համարյա համընդիանուր տարածում: Այժմ ղեկավարող ձևերի մեթոդից օգտվելիս հաշվի են առնվում նաև բրածոն օրգանիզմների կյանքի պայմանները, քանի որ օրգանիզմները ապրում են որոշակի ֆիզիկաաշխարհագրական պայմաններում, որը սահմանափակում է նրանց տարածումը: Այդ պատճառով որոշ ձևեր ունեն լայն տարածում (կոսմոպոլիտներ), իսկ այլ ձևեր՝ սահմանափակ (էնդեմիկներ): Աշխարհում բացարձակ կոսմոպոլիտներ չկան, որոնք միաժամանակ ապրեն և ցամաքում, և ծովում:

Պարզվեց նաև, թե այն պնդումը, որ բոլոր շրջաններում միևնույն ղեկավարող բրածոները կապված են նույնահասակ ապարնե-

րի հետ, նոյնպես ճիշտ չէ: Դա կապված է ֆառևնայի միզրացիայի հետ: Որևէ տեսակ չի կարող միաժամանակ առաջանալ երկրագնդի շատ շրջաններում: Նա հանդես է գալիս որևէ վայրում և այնուհետև ենթարկվում միզրացիայի և տարաքանակվում երկրի մակերևույթում:

Դեկապարող ձևերի մեթոդից օգտվելիս պետք է հաշվի առնել նաև տվյալ տարածքում ֆառևնայի կրկնակի հանդես գալը, որի պատճառող միևնույն դեկապարող ձևերը կարող են հանդիպել տարբեր շերտագրական հորիզոններում: Այս դեպքում որևէ վայրում կյանքի պայմանների փոփոխման հետևանքով ֆառևնան ենթարկվում է միզրացիայի, իսկ հետագայում այդ պայմանների վերականգնման դեպքում ֆառևնան նորից վերադառնում է տվյալ վայրը:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱԲՐՆԵՐԻ ՄԵԹՈԴ

Այս մեթոդն այժմ ունի լայն կիրառություն: Այս դեպքում ուսումնասիրվում է կտրվածքում հանդիպող բոլոր բածոների տեղաբաշխումը, բացահայտվում է կտրվածքում առանձին օրգանական համալիրների հերթափոխը, հետամտվում է այդ համալիրների փոփոխականությունը մի կտրվածքից դեպի մյուսը: Մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ եզրակացություններն ապարների հասակի և համալրման մասին իրականացվում են ոչ թե առանձին դեկապարող ձևերի հիման վրա, այլ շերտում հանդիպող ֆառևնայի և ֆլորայի բոլոր ձևերի համալիրի հիման վրա: Այս մեթոդը հնարավորություն է տալիս որոշելու ֆառևնայի ու ֆլորայի փոփոխման բնական սահմանները: Այդ կապակցությամբ տվյալ մեթոդն այժմ համարվում է կենսաշերտագրության հիմնական մեթոդը:

Համալիրի վերլուծության գործընթացում կարող են առանձնացվել ձևեր, որոնք հանդիպում են որոշակի շերտում և դրա սահմաններից դուրս չկան: Դրանք դեկապարող ձևեր են, բայց դրանք կտրվածքում լինում են բավականին թի: Բացի այդ, հանդիպում են ձևեր, որոնք հանդես են եկել նախորդ տակդիր շերտում և անհայտանում են վերին ծածկող շերտում, կամ ձևեր, որոնք հանդես են եկել տվյալ շերտում և անցնում են վերին շերտերը: Առաջինները հաճախ կոչվում են բնորոշ կամ վերահսկող ձևեր, դրանց ծաղկումը տեղի է ունեցել տվյալ շերտերի առաջացման ժամանակ: Կարող են նաև հանդիպել ձևեր, որոնք իրենց գոյությունն ավարտել են տվյալ

շերտում: Վերջապես կարող են հանդիպել ձևեր, որոնք ունեն մեծ ուղղաձիգ տարածում բռնը շերտերում. դրանք կոչվում են տարանցիկ (տրանզիտային) ձևեր և չունեն հասակի որոշման նշանակություն: Համայնքի անվանումը տրվում է տիպային տեսակի անունից:

ՖԻՂԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ (ԷՎՈԼՅՈՒՑԻՇԻՈՆ) ՄԵԹՈԴ

Ֆիլոգենետիկական (Էվոլյուցիոն) մեթոդը հիմնված է օրգանիզմների միջև գոյություն ունեցող ազգակցական կապերի որոշման վրա: Այս մեթոդի հիմնադիրը ուսւուր գիտնական Վ.Օ. Կովալեսկին է: Լինելով Զ.Դարվինի էվոլյուցիոն ուսմունքի հետևորդը՝ նա նշեց, որ մահացած օրգանիզմները հանդիսանում են երկրի վրա օրգանական աշխարհի էվոլյուցիոն զարգացման բնդիանուր շղթայի օղակները:

Ֆիլոգենետիկական մեթոդը հիմնվում է այն դրույթի վրա, որ սերունդները գտնվում են էվոլյուցիոն զարգացման ավելի բարձր աստիճանի վրա, քան նախնիները. նրանք չեն կարող գոյություն ունենալ մինչ նախնիները և, հետևաբար, միշտ պետք է հանդիպեն ավելի երիտասարդ նստվածքներում:

Ֆիլոգենետիկական մեթոդը կիրառելիս կենսաշերտաբանները բրածոների ամբողջ կոմպլեքսի ուսումնասիրման համար ընտրում են ազգակից օրգանիզմների որևէ խումբ (կարգ, ընտանիք կամ սեռ):

Հետազոտվող խմբի ֆիլոգենիան վերականգնելու համար անհրաժեշտ է խմանալ, թե երբ են հանդիս եկել այդ խմբի մեջ մտնող օրգանիզմները, ինչ ժամանակի ընթացքում են գոյություն ունեցել, որոնք են եղել նրանց նախնիները: Այսինքն՝ անհրաժեշտ է պարզել նրանց տոհմածառը: Առաջին երկու հարցի պատասխանը կարելի է ստանալ շերտագրական կարլածքից՝ այլ օրգանիզմների ուղղաձիգ տարածումը բացահայտելու միջոցով: Ազգակցական կապերի որոշումն ավելի բարդ խնդիր է, քանի որ բրածո վիճակում պահպանվում է ոչ թե ամբողջ օրգանիզմն, այլ նրա կմախքը կամ կմախքի առանձին մասերը, երբեմն անհետ կորչում են ֆիլոգենետիկական շարքի առանձին օղակները:

Օրգանիզմների միջև եղած ազգակցական կապերը որոշելու համար օգտվում են համեմատանատոմիական, համեմատասաղմնաբանական և այլ վերլուծություններից: Առաջին դեպքում դիտարկ-

վում է հետազոտվող խմբի կմախքի (արտաքին կամ ներքին) տարրերի նմանության աստիճանը, որն ինչոր չափով արտահայտում է ազգակցության աստիճանը: Օրինակ՝ Գրենլանդիայի վերին դեռնի նստվածքներում գոնվել են հնագույն երկկենցաղների՝ իխտիոստեզիտների մնացորդներ: Դրանց զանգի և կմախքի այլ մասերի (պոչի, վերջավորությունների) կառուցվածքը մեծ չափով նմանվում է որոշ վրձնափետրավոր ձկների կմախքի նույն տարրերին: Համեմատաանատոմիական վերլուծության կիրառումը տվյալ դեպքում հնարավորություն տվեց որոշելու, որ առաջին երկկենցաղներն առաջացել են վրձնափետրավոր ձկներից: Երկրորդ դեպքում ուսումնասիրվում են որևէ անհատի զարգացման փուլերը՝ սաղմնայինից մինչև հասուն վիճակը՝ այսինքն նրա օնտոգենեզը: Համաձայն հիմնական կենսածագումնարանական օրենքի՝ օնտոգենեզն (օրգանիզմի անհատական զարգացումը) իրենից ներկայացնում է ֆիլոգենեզի՝ տվյալ ձևի նախնիների պատմական զարգացման համարոտ, պարզեցված կրկնությունը: Հետազոտվող անհատի սաղմնային զարգացման շրջանում առանձին, ոչ լրիվ պահպանված հատկանիշների հիման վրա երբեմն հաջողվում է վերականգնել նրա նախնիները: Համեմատասարմնարանական վերլուծությունը կարելի է կիրառել այն բրածո օրգանիզմների ուսումնասիրման ժամանակ, որոնց մոտ պահպանվում են զարգացման սկզբնական փուլերը (ամոնիտներ, պելեցիալներ, փորոտանիներ, փորամինիֆերներ և այլն): Այսպես, օրինակ, ուսումնասիրելով որոշ մեզոզոյան ամոնիտների խեցու հաշորդական պտույտները, գիտնականները նկատեցին, որ նրանց մոտ սկզբնական պտույտներն ունեն գոնիատիտային թիակային գծեր, իսկ վերջինները՝ ամոնիտային: Դա հիմք տվեց ենթադրելու, որ ամոնիտների նախնիների թվում եղել են գոնիատիտներ:

Հայտնաբերված ազգակցական կապերն արտահայտվում են ֆիլոգենետիկական փոխհարաբերության սխեմաների տեսքով (նկ. 4):

Նախորդ մեթոդներում հաշվի է առնվում շերտերի մեջ բրածո ձևերի պարզ հայտնաբերումը: Ֆիլոգենետիկական մեթոդը պարզաբանում է այդ ձևերի էվոլյուցիոն դիրքը, օրգանիզմների այն խմբի օրինաչափորեն պայմանավորված զարգացումը, որին նրանք պատկանում են: Այդ պատճառով է կենսաշերտաբանության մեջ այն հանդիսանում է ավելի ճշգրիտ ու գիտականորեն հիմնավորված առաջատար մեթոդ:

Վերին էոցի P₂	<i>miliocaput</i> <i>polycy- ratus</i> <i>pratti</i> <i>Irregularis formosa</i> <i>ficheuri</i> <i>subdistans</i> <i>nitidus</i> <i>parada- schensis</i> <i>brongni- arti</i>
Միջին էոցի P₂	<i>heimi</i> <i>distans</i> <i>irrepu- laris</i> <i>murchisoni</i> <i>ponts- leevi</i> <i>praelucasi</i> <i>crimensis</i> <i>leopardi</i> <i>planula- tus</i> <i>laevi- gatus</i>
Սկզբանական էոցի P₁	<i>distans</i> <i>minor</i> <i>spileccensis</i> <i>akkwun- dane- sis</i> <i>bolcen- sis</i> <i>prae- murchi- soni</i> <i>silva- nus</i> <i>mon- ra- tavii</i> <i>exilis</i> <i>mereti-</i> <i>ti</i> <i>aquilan- cus</i>
Պատրիարքական էոցի P₁	<i>fraxini</i>
Վերին կավիճ K₂	

Նկ. 4. Նումուլիտների տեսակների փոխարարերության
ֆիլոգենետիկական սխեման (Էնթասէռ *Nummulites*)
(ըստ Գ.Ի. Նեմկովի, պարզեցված):

Օրգանիզմների որևէ խմբի ֆիլոգենիայի մշակումը հնարավորություն է տպիս նատվածքները մասնատելու՝ ըստ նրանց մեջ ներփակված ձևերի զարգացման մակարդակի: Այսպէս, ամոնտիդների զարգացման խոշոր փուլերը, որոնք արտահայտվել են միջնապատերի ու թիակային գծերի հաջորդական բարդացմամբ, ընկած են պալեոզոյան ու մեզոզոյան նատվածքների մասնատման հիմքում (գոնիատիտները՝ ուշ պալեոզոյ, ցերատիտները՝ պերմ և տրիաս, ամոնտիդները՝ յուրա և կավիճ):

Ֆիլոգենետիկական մեծ նշանակություն է ձևոր քերում միմյանցից հեռու գտնվող կտրվածքների համադրման ժամանակ: Եթե նույնիսկ այդպիսի կտրվածքներում չգտնվեն ընդհանուր ձևեր, ապա համադրումը կարող է կատարվել՝ ըստ օրգանիզմների ազգակական խմբերի զարգացման մակարդակի:

Ֆիլոգենետիկական մեթոդի կիրառումը և ամենից առաջ Փիլո-գենետիկական (ազգակցական) շարքերի վերականգնումը պահան-ջում են մասնագետի խիստ բարձր որակավորում: Մեթոդի պարզեց-ված կիրառումը հանգեցնում է կոպյատ սինալների:

Մեթոդի հիմնական թերություններից է նրա օգտագործման բարդությունը՝ կապված հնէարանական տարեգրության ոչ ամբող-ջականության հետ (շերտազրական կտրվածքի առանձին շերտե-րում օրգանիզմների մնացորդների բացակայությունը): Դժվարու-թյունները կայանում են նաև նրանում, որ շերտերի մեջ, սերունդնե-րի հետ համատեղ, հաճախ հանդիպում են իրենց դարն ապրած նախնիները, որոնք բնորոշ են ավելի հին շերտերին: Աշխարհազրա-կան տեսակետից մեկուսացված մարգերում բույսերի ու կենդանինե-րի առանձին խմբեր կարող են պահպանվել նաև այն ժամանակ, եթե հարեւան տարածքներում այդ խմբերի ներկայացուցիչներն արդեն անհայտացել են և իրենց տեղը գիշել սերունդներին: Դրանով է բա-ցատրվում միմյանցից առանձնացված շրջաններում սերունդների ու նախնիների միաժամանակյա գոյությունը:

ՄԻԿՐՈՀԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴ

Միկրոօրգանիզմների (առաջին հերթին նախակենդանիների) դերը շերտազրության մեջ զնահատովեց անցյալ դարի 20-ական թվա-կաններից: Միկրոհնէարանական մեթոդն ըստ Էռլիթյան չի տարբեր-վում մյուս հնէարանական մեթոդներից և հանդիսանում է հնէարա-նության բաժիններից մեկը: Տարբերությունը կայանում է միայն ուսումնասիրվող առարկաների խիստ փոքր չափերի մեջ, որը պա-հանջում է մշակման ու հետազոտման յուրահատուկ եղանակներ: Միկրոհնէարանությունն ունի գործնական խոշոր նշանակություն մանրամասն շերտազրական սինդանների մշակման ժամանակ, հատկապես նավթաբեր շրջաններում, ուստի նպատակահարմար է համառոտակի բնութագրել միկրոհնէարանական ուսումնասիրու-թյունների հիմունքները: Միկրոհնէարանության հետազոտման առարկան է մանրագույն կենդանիների ու բույսերի կմախքները (ֆո-րամինիֆերներ, ռադիոլարիաներ, օստրակողներ, դիատոմային շրի-մուտներ) և տարբեր օրգանիզմների մանր մասերը (կղնողոնտներ, ձկների կմախքի մանր մասեր և այլն): Միկրոսկոպիկ ուսումնասի-

բությունների առարկաներից են բարձրակարգ բույսերի ծաղկափոշիները և բեղմնիկները (անծաղիկ բույսի բազմացման օրգանները), որոնք աչքի են ընկնում չափազանց փոքր չափերով: Բեղմնիկ-ծաղկափոշային վերլուծությունը հնէարանական մեթոդների մեջ հատուկ տեղ է գրավում և կղիտարկվի առանձին:

Միկրոօրգանիզմներին բնորոշ առանձնահատկություններն են.

1. փոքր չափերը, որոնք հնարավորություն են տալիս նրանց ամբողջական կմախքները ստանալ ոչ միայն բնական մերկացումների ապարներից, այլև հորատման անցքերի հանուկի փոքր նմուշներից:
2. կմախքների մեծ քանակը նույնիսկ փոքր չափերի նմուշներում:

Միկրոօրգանիզմների չափազանց մանր չափերը պահանջում են ապարներից նրանց ստացման ու հետագա ուսումնասիրման հատուկ եղանակներ: Լարորատոր պայմաններում միկրոօրգանիզմ պարունակող ապարը մանրացվում է, թթվածում է ջրով, երբեմն բազմիցս շիկացվում և սառեցվում ջրի մեջ: Դրա հետևանքով ապարը քայլացվում է, միկրոօրգանիզմների կմախքներն անջատվում են, ապա ուսումնասիրվում երկփոյա մանրադիտակի տակ: Ֆորամինիֆերների, ռազինլարիաների և այլ միկրոօրգանիզմների խեցիների ներքին կառուցվածքն ուսումնասիրելու համար պատրաստում են թափանցիկ հղկուկներ (առափ), որոնք հետազոտվում են մանրադիտակի տակ: Որոշ դեպքերում միկրոօրգանիզմները (կոնոդոնտներ, ռազինլարիաներ) անջատվում են ապարների տարրալուծման ճանապարհով՝ օրգանական թթուներում, որից հետո միկրոօրգանիզմներն անջատվում են չյուծված նստվածքից երկփոյա մանրադիտակի տակ և ուսումնասիրվում էլեկտրոնային (սկանացնող) մանրադիտակի օգնությամբ:

ԲԵՂՄՆԻԿ-ԾԱՂԿԱՓՈՇԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բեղմնիկ-ծաղկափոշային վերլուծությունն երկրաբանական պրակտիկայի մեջ մտել է 1916 թ. և առանձնահատուկ տեղ է գրավում մյուս հնէարանական մեթոդների շարքում: Առաջին անգամ օգտագործվել է չորրորդական նստվածքների հետազոտման համար և կապված է կլիմայի կտրուկ և բուսական համակեցությունների բազմակի փոփոխությունների հետ:

Հետազոտման առարկա են հանդիսանում չափազանց մանր անտեսանելի բուսական մնացորդները՝ քեղմնիկավոր բույսերի քեղմնիկների (սպորների) արտաքին քաղանքը և սերմնավոր բույսերի ծաղկափոշու հատիկները: Բեղմնիկների քաղանքը և ծաղկափոշին կազմող նյութը դժվար է ենթարկվում քայլայման՝ նույնիսկ իշխ թթուներով և կծու ալկահիներով մշակելիս: Այդ պատճառով քեղմնիկներն ու ծաղկափոշին բրածո վիճակում լավ են պահպանվում:

Բեղմնիկներն ու ծաղկափոշին բնության մեջ հանդիպում են շատ հաճախ, ինչը պայմանավորված է նրանց փոքր չափերով, թեթևությամբ, թօջողականությամբ և ամեն տարի մեծ քանակությամբ հանդես գալով (յուրաքանչյուր բույսից հարյուր հազարավոր ու միլիոնավոր օրինակներ): Բեղմնիկների ու ծաղկափոշու փոքր չափերը և աննշան կշիռ հնարավորություն են տալիս քամու ու ջրի միջոցով ցրվելու մեծ տարածությունների վրա: Նրանք հանդիպում են ամենուրեք՝ հողի մակերեսում, սառուցի մեջ, ծովային ջրում, հատակային տիղմերի մեջ և այլուր: Դա հնարավորություն է տալիս քեղմնիկներն ու ծաղկափոշին անջատել երկրաբանական անցյալի համարյա բոլոր նստվածքներից՝ ցամաքային, ծովալճակային և ծովային (քացի մազմատիկ ու փոխակերպային ապարներից):

Բեղմնիկ-ծաղկափոշային վերլուծության օգնությամբ պարզաբանվում է քեղմնիկների ու ծաղկափոշու կառուցվածքը, նրանց փոփոխությունը ժամանակի մեջ, որոշվում են ապարների մեջ գտնվող քեղմնիկ-ծաղկափոշային համալիրները՝ հնարավորություն ստեղծելով վերականգնելու ցամաքային բուսականության զարգացումն որևէ ժամանակահատվածում:

Բեղմնիկ-ծաղկափոշային վերլուծության տվյալներն օգտագործվում են շերտագրության մշակման ժամանակ ապարների հասակը որոշելու, երկրաբանական կտրվածքները համադրելու և անցյալի ֆիզիկաաշխարհագրական պայմանները վերականգնելու համար:


Վերջին 50 տարիների բնագրում կատարված ուսումնասիրությունների շնորհիվ՝ քեղմնիկ-ծաղկափոշային վերլուծությունը դարձել է միակ հներանական մեթոդը, որի օգնությամբ կարելի է կատարել ծովային, ծովալճակային և ցամաքային նստվածքների ուրբակի համադրություն: Նախկինում «համր» համարվող ցամաքային նստվածքների մեջ քեղմնիկների ու ծաղկափոշու հայտնաբերումը լայն հնարավորություններ է ստեղծում նրանց մասնատման և համահարաբե-

բակցման համար, դրանում և կայանում է բեղմնիկ-ծաղկափոշային վերլուծության հիմնական արժեքը և գործնական նշանակությունը:

Այսուհանդերձ, այս մեթոդը զերծ չէ թերություններից: Դեռևս անբավարար է մշակված բեղմնիկների ու ծաղկափոշու որոշման մեթոդը՝ տեսակի ու սերի մակարդակով, ինչը հատկապես հին նստվածքների համար արիետատական է: Երբեմն դժվարություններ են առաջանում տեսակների և նույնիսկ ավելի խոշոր սիստեմատիկական խմբերի ճիշտ որոշման ժամանակ: Հաճախ պարզ չի դառնում այն հարցը, թե որքանով է բեղմնիկ-ծաղկափոշային տարապատկերը համապատասխանում նախկինում գոյություն ունեցող բուսական կազմին: Որոշ բույսերի բեղմնիկներն ու ծաղկափոշին ընդհանրապես բրածով վիճակում չեն հանդիպում: Հայտնի են ապարների հասակի ոչ ճիշտ որոշման դեպքեր՝ կապված բեղմնիկների ու ծաղկափոշու լվացման և ձեռքերի միջով ավելի հին ապարների մեջ ներթափանցելու հետ: Դա հաշվի առնելով՝ բեղմնիկ-ծաղկափոշային վերլուծության համար անհրաժեշտ նմուշները պետք է վերցնել միակոտր քարերի տեսքով կամ շերտի թարմ, չխղմահարված մասից:

ՀՆԱԲԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴ

Այս մեթոդն ուսումնասիրում է հին օրգանիզմների կյանքի պայմանները, կենսակերպը և հաշվի է առնում ֆառնիստիկական համալիրների կախվածությունը ֆիզիկաաշխարհագրական պայմաններից: Համապատասխանարար ուսումնասիրվում է որոշակի օրգանիզմների կապը միմյանց միջև և իրենց բնակեցման միջավայրի հետ: Ապարների նյութական կազմը, կառուցվածքը, տեքստուրան, երկրաքիմիական առանձնահատկությունները հնարավորություն են տալիս վերականգնելու օրգանիզմների գոյության պայմանները և մահվան պատճառները, և հաճախ ֆացիալ փոփոխությունները հանգեցնում են նրան, որ հասակակից ֆառնիստիկական համալիրներն այնքան շատ են տարբերվում, որ դրանց համարում են տարահասակ, և ընդհակառակը, տարահասակ ֆառնիստիկական համալիրները նման լանդշաֆտային իրադրությունում դառնում են միմյանց նման: Կիրառման հիմքում դրված է օրային ավագանների հատակաբնակ ֆառնայի համեմատական էկոլոգիական վերլուծությունը (նկ. 5), որը կարևոր տվյալներ է տալիս հնէաբանության 50



Մարդու բաժինների համար ինչպես նաև սարքեր նաև լածարային ֆացիաների համար արեգակցւան, հաշիպարագական պայմանների և նաև լածարական պայմանների վերականգնման համար: Այս մեջով տոմսաբանկան մերոյի լրացրում է:

Նկ. 5. Ֆաունայի զոնայի բաշխումը Բարենցի ծովում (Պատմական երկրաբանություն, 1985)

ՀԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Այս մեթոդները սկսել են կիրառվել 19-րդ դարում: Այդ մեթոդների ժամանակ օգտագործվում են մաթեմատիկական սարքեր: Առաջին անգամ այս մեթոդներից մեկը կիրառել է Չ.Լայելը: Հիմքում ընկած էր ժամանակակից փափկամարմինների քանակական պարունակությունը Արևմտյան Եվրոպայի երրորդական նստվածքներում, դրա արդյունքում նա առանձնացրեց Էղունք, միոցենը և պլիոցենը: Հետազայում մեթոդն օգտագրծվեց ավելի հին հասակի ապարների մասնատման համար: Այս մեթոդով ապարների հասակը որոշելիս համադրում էին կտրվածքում ընդհանուր ձևերի տոկոսային համադրությունը ցուցանմուշային կտրվածքի հետ: Հասակակից են համարվում այն ապարները, որոնց համադրության ժամանակ ընդհանուր ձևերի տոկոսային պարունակությունն ամենամեծն էր: Այժմ այս մեթոդները քիչ են կիրառվում և կարող են հանգեցնել բավականին մեծ սխալների, քանի որ հաճախ հասակակից, բայց տարբեր ֆացիաների ապարները շատ քիչ ընդհանուր ձևեր են ունենում:

ԲՐԱԾՈ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿՏՐՎԱԾՔՈՒՄ

Սովորաբար օրգանիզմների մնացորդներն իրենցից ներկայացնում են ներառուկներ (ներփակումներ) շերտի մեջ: Այդպիսի ներառուկների բնույթն ապարի մեջ ազդում է կտրվածքների մասնատման ու համադրման վրա:

Կտրվածքում բրածոների տարածումն ըստ ուղղաձիգի կարող է լինել հավասարաշափ: Այդ դեպքում կարելի է հայտնաբերել խեցիներ կամ դրանց դրոշմահետքեր կտրվածքի յուրաքանչյուր սանտիմետրում: Պարզ է, որ կատարված որոշումները վերաբերվում են ամբողջ շերտին, և այս դեպքում գոյություն ունի բարաբանական և կենսաշերտագրական սահմանների համընկնում: Սա բավականին հազվադեպ հանդիպող երևույթ է:

Ավելի հաճախ բրածոները շերտի սահմաններում հանդիպում են առանձին նրբաշերտերի տեսքով: Այս դեպքում բրածոների տարածումը կապված չէ շերտի սահմանների հետ, և կատարված հնեաբանական որոշումները հաճախ վերաբերվում են շերտի որևէ մա-

սին: Դա ստիպում է հետազոտողներին առանձին մակերևույթներում հայտնաբերված բրածոները տարածել շերտի զգալի մասի վրա և զննաների միջև սահմանը տանել պայմանականորեն կամ ֆառնայի այլ խմբերի հիման վրա: Քարաքանական և հնէաբանական սահմանների այդպիսի համատեղումը ստիպողական քայլ է: Բայց երբեմն այդպիսի մոտեցումը կարող է կապված լինել դիտարկումների քանակի անբավարարության հետ:

Օրգանական մնացորդներն անհավասարաչափ են տարածված նաև շերտի տարածման ուղղությամբ: Նույնիսկ մեկ մերկացման սահմաններում հանդիպում են տեղամասեր, որոնք հարստացած են ֆառնայով, և նույն շերտի այլ տեղամասեր, որտեղ ֆառնայի մնացորդները հազվադեպ են կամ ուղղակի բացակայում են: Այս դեպքում պետք է կատարվեն ավելի մանրակրկիտ դիտարկումներ շերտի ամբողջ երկայնքով: Հայտնի են շատ դեպքեր, երբ «համր» շերտերում մանրակրկիտ աշխատանքների դեպքում հայտնաբերվել է հարուստ ֆառնա, հատկապես միկրոֆառնա:

Չնայած հնէաբանական մեթոդների բոլոր առավելություններին՝ նրանք համակիրառելի համարվել չեն կարող: Երկրակեղեկի կազմում զգալի տեղ են գրավում փոխակերպային, խորքային ու երային ապարները, որոնք բրածո օրգանիզմների մնացորդներ չեն պարունակում: Նույնիսկ նստվածքային ապարների մեջ հաճախ հանդիպում են օրգանիզմների մնացորդներից զուրկ, կամ, ինչպես ասում են հնէաբանորեն, «համր» ստվարաշերտեր: Այդպիսի նստվածքների շերտագրական մասնատման ու համահարաբերակցման համար հնէաբանական մեթոդները դժվար կիրառելի են: Սակայն էլեկտրոնային մանրադիտակի և այլ տեխնիկական հնարավորությունների շնորհիվ հնարավոր եղավ ուսումնասիրել և մասնաւել մինչեւմբրյան որոշ «համր» համարվող փոխակերպային նստվածքները: Հայտնաբերվեցին նոր միաբջիջ և բազմաբջիջ օրգանիզմներ, զարգացում ստացավ անկորիգ բակտերիալ և ցիանոֆիտային հնէաբանությունը: Որպես կանոն, բոլոր նստվածքները պարունակում են օրգանական մնացորդներ և «համր» են այնքան ժամանակ, որքանով դա թույլ են տալիս զիտատեխնիկական նվաճումները:

ՖԱՌԻՆԱՅԻ ԵՎ ՖԼՈՐԱՅԻ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԵՐԻ
ԿԵՆՍԱՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ֆառնայի և ֆլորայի տարբեր խմբերի էվոլյուցիայի տեսակերպ միանման չեն, այդ պատճառով տարբեր է նաև կենսաշերտագրությունում այդ խմբերի նշանակությունը։ Որոշ խմբեր արագ են ենթարկվել էվոլյուցիայի և արագ կ տարաքանակվել անցյալ ժամանակաշրջանների ծովերում, օվկիանոսներում կամ ցամաքում։ Այլ խմբեր դանդաղ են ենթարկվել էվոլյուցիայի, ունեցել են տարածման սահմանափակ մարզեր և հաճախ կապված են եղել գոյության տեղական որոշակի պայմանների հետ։ Այդ խմբերից առաջինները կարևոր նշանակություն ունեն կենսաշերտագրության համար և կոչվում են օրթօշերտագրական (արխիշերտագրական) ձևեր։ Չափ այս խմբերի՝ մշակվում են տեղային մանրամասն գոնայական կենսաշերտագրական սինեմաներ, կատարվում են լայնատարած համադրումներ։ Դանդաղ զարգացող պարագերտագրական խմբերն օգտագործվում են հասակային լայն սահմաններ որոշելիս կամ տեղական շերտագրական սինեմաներ մշակելու դեպքում։ Շատ, հատկապես երկարատև էվոլյուցիա ունեցող խմբեր չունեն շերտագրական նշանակություն։


Արխիշերտագրական խմբերը պետք է բնորոշվեն արագ էվոլյուցիայով, լայն տարածումով և ֆացիաներից հնարավոր քիչ կախվածությամբ։ Դասական արխիշերտագրական խմբերից են ամոնտիդները, գրապտոլիթները, տրիլոբիտները, կոնոդոնտները, ֆորամինիֆերները, ռադիոլարիաները։

Լայն շերտագրական համադրումների համար առավել հարմար են պելազիկ օրգանիզմները։ Չնայած նրան, որ որոշ բնելքոս օրգանիզմներ հանդիսանում են կարևոր արխիշերտագրական խմբեր լուրջ դժվարություններ են առաջանում ըստ բնելքոսի տարբեր տարածաշրջանների շերտագրական սինեմաները համադրելիս։

Ստորև տրվում է ֆառնայի և ֆլորայի առավել կարևոր խմբերի շերտագրական նշանակության համառոտ բնութագիրը (նկ. 6)։

Նախակենդանիներ. Միկրոֆառնայի համալիրների մեջ այս խումբն ունի ամենամեծ տարածումը։ Շերտագրական նշանակություն ունեն առավելապես ֆորամինիֆերներն ու ռադիոլարիաները։ Ֆորամինիֆերներն օգտագործվում են քարածխային, պերմի, մեզոզոյի ու կայնոզոյի նատվածքների մանրակրկիտ (գրնայական) մասնատման համար։ Դրանք առավելապես առատ են կարբոնատային կավերում,

մերգելներում և օրգանածին կրաքարերում, ավելի քիչ հանդիպում են կավերում, կավային ու կրային ալերոլիթներում, խիստ հազվադեպ՝ ավազներում, ավազքարերում և գրավելիթներում:



Նկ. 6. Կյանքի զարգացումը Երկրի վրա (Միխայլովա, Բոնդարենկո, 1997)

Ռատիոնալարիաներն օգտագործվում են զիմավորապես մեզողոյան նստվածքների շերտագրությունում, մասամբ նաև պալեոզոյան (սկսած քեմբրիից): Դրանք հնարավորություն են տալիս կտրվածքներում առանձնացնելու համակարգերը և քաժինները, երբեմն նաև հարկերը: Ռատիոնալարիաները հատկապես մեծ դեր են խաղում սիլիցիումային (հասպիսային) ստվարաշերտերի ուսումնավիրման ժամանակ՝ երբեմն հանդիսանալով այդ ապարներում հանդիպող միակ օրգանական մնացորդները: Ռատիոնալարիաների մնացորդները հանդիպում են ծովային նստվածքների բոլոր տեսակներում, բայց առավելապես լայն պահպանվում են կավային թերթաքարերում, ալերոլիքներում և տարբեր սիլիցիումային ապարներում՝ կավային կամ երկաթային գունավոր խառնուրդով: Կարմրավուն և վարդագույն հասպիսներում, մուգ մոխրագույն և սև սիլիցիումային ալերոլիքներում ռադիոլարիաները զգինված աշխով երևում են մանր սպիտակ կամ մուգ մոխրագույն կետերի տեսքով: Ավելի լավ տեսանելիության համար նմուշը կարելի է թրջել ջրով և նայել խոչորացուցով:

Արխետոցիատներ. Ստորին քեմբրիի կենսաշերտագրության կարևորագույն խումբ է: Հանդիպում են նաև միջին, վերին քեմբրիում, օրդովիկում և նույնիսկ սիլուրում: Այժմ հետազոտողների մեծ մասը կարծում են, որ արխետոցիատները տարածված են միայն ստորին քեմբրիում: Օրգանածին կառուցներ կազմող օրգանիզմներ են և առավելապես օգտագործվում են կարբոնատային նստվածքների մասնատման ու համադրման համար:

Աղեխորշավորներ. Այս խմբից առավել կարևոր են բուստերը (կորալները), ավելի նվազ չափով՝ ստրոմատոպորոիդները: Այս խմբերի շերտագրական նշանակությունն ավելի մեծ է ռեգիոնալ և տեղային սինէմաների կազմման ժամանակ: Պալեոզոյում (սկսած միջին օրդովիկից) կարբոնատային և ցամաքածին-կարբոնատային նստվածքների համար կարենու են տարույտաները, հելիոլիտիդները և քառածառագայթ բուստերը (Rugoza): Առաջին երկու խմբերը մեծ չափով օգտագործվում են միջին, վերին օրդովիկի և սիլուրի շերտագրությունում: Քառածառագայթ բուստերը մեծ դեր ունեն դեռնի և հատկապես կարբոնի շերտագրությունում: Հաս դրանց կատարված է քարածխային նստվածքների մանրակրկիտ մասնատում, առանձնացված են աշխարհագրական տարածում ունեցող զոնաներ: Մեզոզոյում պալեոզոյան խմբերին փոխարինել են վեցածառագայթ բուստերը: Արանք օգտագործվում են յուրայի, կավճի ու պալեոգենի որոշ

ցամաքածին-կարբոնատային և կարբոնատային նստվածքների, ինչպես նաև կենսածին կառուցների մասնատման համար:

Ուսուանիներ. Բրածո ֆառնայի ամենատարածված խմբերից է: Առավել կարևոր շերտագրական նշանակություն ունեն փականավոր ուսուանիները: Այժմ տեղային շերտագրական սխեմաներ կազմելիս օգտագործվում են նաև փականազորիկ ուսուանիների մնացորդները, որոնք հաճախ անջատվում են այլ օրգանական մնացորդներ չպարունակող կարբոնատային ապարներում: Փականավոր ուսուանիները, քեմիքիլից սկսած, համարվում են օժանդակող խումբ՝ նստվածքների հասակի հիմնավորման ու համադրման համար, իսկ օրդովիկում և մինչև պալեոզոյի վերջը իրենցից ներկայացնում են ռեզիլինալ շերտագրության հատակաքնակ ֆառնայի կարերագույն խմբերից մեկը: Դրանք, ֆառնայի այլ խմբերի հետ համատեղ, իմք են ծառայում օրդովիկի, սիլուրի, հատկապես դևոնի, կարբոնի և պերմի կենսաշերտագրական սանդղակներում հորիզոնների առանձնացման համար: Մեզոզոյի շերտագրությունում ուսուանիները քիչ են հանդիպում և փոքր դեր են խաղում:

Փափկամարմիններ: Տարածված են սկսած քեմիքիլ, բայց, ի տարբերություն ուսուանիների, առավել կարևոր շերտագրական նշանակություն ձեռք են բերում պալեոզոյի վերջում և մեզոզոյում:

Երկփեղկ փափկամարմիններ. Հանդես են եկել պալեոզոյի սկզբում, սկսած կարբոնից օգտագործվում են մանրակրկիտ շերտագրությունում՝ առանձին քարածխային ավազանների ածխաբեր ստվարաշերտերի մասնատման համար: Մեզոզոյան նստվածքներում երկփեղկ փափկամարմինները ստվորաբար կազմում են ֆառնայի համալիրների ոչ մեծ մասը՝ բացառությամբ ստորին և միջին տրիասի համալիրների: Մանրամասն հետազոտությունների դեպքում դրանք օգտագործվում են նստվածքակուտակման առանձին ավազանների և դրանց մասերի ռեզիլինալ և, հատկապես, տեղային շերտագրական սխեմաների մշակման ժամանակ: Երկփեղկ փափկամարմինների շատ խմբեր (մննողիստներ, միտիլոփլներ, ինոցերամներ, պեկտենիդներ, տրիգոնիդներ և այլն) կարևոր նշանակություն ունեն մեզոզոյի ու կայնազոյի առանձին համակարգերի շերտագրության համար:

Փորուտանի փափկամարմինները պալեոզոյի և մեզոզոյի շերտագրությունում էական դեր չեն խաղում: Դրանց շերտագրական նշանակությունը համեմատաբար ավելի մեծ է կայնոզոյի համար:

Գլխուտանի փափկամարմիններ. ֆառնայի կարևոր խումբ է, որի հիման վրա կատարվում է մեզողոյի բոլոր համակարգերի կենսաշերտագրական մասնատումը: Օրդովիկում և սիլուրում ոեզիոնալ ու տեղային շերտագրական ստորաբաժանումների մասնատման ու համայրման համար մյուս խմբերի հետ միասին որոշակի դեր են խաղացել նաուտիլոփները, էնդոցերատոխները և ակտինոցերատոխները:

Գոնիատիտները ֆառնայի կարևորագոյն խումբ են, դևոնի, քարծխային և պերմի համակարգերի շերտագրության համար, մասնավորապես հարկային և ավելի մանր ստորաբաժանումների առանձնացման համար: Դերմի վերջում և տրիասում կարևոր նշանակություն են ունեցել ցերատիտները: Մեզողոյի ծովային նստվածքների համար ամոնտիդները ֆառնայի այն հիմնական խումբն են, որը հնարավորություն տվեց դրանք մասնատելու, հասակը որոշելու և կատարելու լայն միջոնեղինալ համարություններ:

Նստվածուանիներ. Այս խմբից կարևոր շերտագրական նշանակություն ունեն տրիլորիտները և օստրակողները: Սորաջինները կազմում են քեմբրիի և օրդովիկի բրածո հատակաքնակների (քենքուի) մեծ մասը, երկրորդները շատ են տարածված պալեոզոյի և մեզողոյի միկրոֆառնայի համալիրներում:

Տրիլորիտները քեմբրիի համար ամենակարևոր շերտագրական խումբն են: Դրանց հիման վրա են մշակվել այդ համակարգի բոլոր գոնայական շերտագրական սխեմաները: Օրդովիկում տրիլորիտները պահպանել են իրենց կարևոր շերտագրական նշանակությունը, իսկ սիլուրում և դևոնում հանդիպում են համեմատաբար հազարդեալ:

Օստրակողները տարածված են բոլոր համակարգերում՝ քեմբրիից մինչև ժամանակակից նստվածքները: Դրանք հանդիպում են ինչպես բնականն ծովային, այնպես էլ աղայնացված և քաղցրահամ ավազաններում: Որոշակի շերտագրական նշանակություն օստրակողները ձեռք են քերում սկսած օրդովիկից, բայց հատկապես կարևոր նշանակություն ունեն դևոնի և կարբոնի նստվածքների մասնատման ու համայրման համար: Այդ նստվածքներում դրանք շատ բազմազան և բազմաբանակ են: Օստրակողներն եվրիհալին և եվրիթերմ կենացներ են, հարմարվում են կյանքի տարբեր պայմաններին և այդ պատճառով հնարավորություն են տալիս համահարաբերակցելու տարբեր ֆացիաների (ծովային, քաղցրահամ) նստվածքները:

Փշամորթներ. Մեծ մասամբ չունեն ինքնուրույն շերտագրական նշանակություն՝ դեռևս թույլ ուսումնասիրվածության պատճառվ։ Ծովաշուշանների ցողունները հաճախ հանդիպում են պալեոզոյի ու մեզոզոյի տարբեր տիպի ապարներում և հաջողությամբ կարող են օգտագործել տեղային շերտագրական համահարաբերակցությունների ժամանակ, ինչպես նաև նստվածքների հասակը մինչև հարկը որոշելու համար։ Վերին կավճի կարբոնատային ապարների հասակի որոշման համար կարևոր նշանակություն ունեն ծովոզնիները, որոնց օգնությամբ կարելի է առանձնացնել բավականին մանրակրկիտ շերտագրական ստորաբաժանումներ։

Գրապատոլիքներ. Կարևոր շերտագրական նշանակություն ունեն օրդովիկի, պիլորի, սոորին դևոնի համար։ Այս համակարգերի հիմքը կազմող ընդհանուր շերտագրական ստորաբաժանումների մանրամասն գոնայական մասնատման սինէմանները մշակված են՝ ըստ գրապատոլիքների։ Ռեզինալ և տեղային շերտագրական սինէմաններում գրապատոլիքներն օգտագործվում են առավելապես ցամաքածին (տերրիգեն) նստվածքների հասակի որոշման և համադրման համար։ Դրանց մնացորդները հանդիպում են բաց ծովային ավազանների նստվածքներում, հատկապես առատ մուգ կավային (գրապատոլիքային) թերթաքարերում, ինչպես նաև այլ ցամաքածին սիլիցիումային, շերտագրուված կարբոնատային ապարներում։

Կոնոդոնտներ. Մանրադիտակային ֆաունայի այս խմբի նշանակությունը շերտագրությունում ժամանակի ընթացքում ավելի է մեծացել՝ վերածվելով արխիշերտագրականի։ Կոնոդոնտները հանդես են եկել քեմրիից, մահացել են տրիասի վերջում։ Առավել բազմաքանակ ու բազմազան են օրդովիկի, վերին դևոնի և տրիասի նստվածքներում։ Հատ դրանց՝ մշակվել են պալեոզոյի և մեզոզոյի համակարգերի գոնայական մասնատման սինէմանները։ Կոնոդոնտները հանդիպում են ծովային նստվածքների բոլոր տիպերում՝ ցամաքածին, սիլիցիումային և կարբոնատային։ Առավել կարևոր նշանակություն ունեն կարբոնատային ապարների մասնատման համար, որոնցից առանձնացնում են թույլ օրգանական թթուների միջոցով։ Այժմ այդ պրոբլեմատիկ մնացորդները լավ ուսումնասիրվում են նաև ցամաքածին և սիլիցիումային նստվածքներում, հասավանելու և ֆունհիտներում։ Դա հնարավորություն է տալիս կոնոդոնտների մնացորդներն օգտագործել նաև սիլիցիումահարաբիսածին նստվածքների շերտագրությունում։ Այդ

նստվածքներում այլ օրգանիզմների մնացորդները հազվադեպ են հանդիպում: Կոնոդրնտները կարևոր նշանակություն ունեն նավթային երկրաբանության համար, հանուկի ստորաբաժանման և համադրման ժամանակ, իսկ նրանց գույնի փոփոխությունը, կապված կատագենեզի հնաջերմությունից, նշում է տարածաշրջանում նավթի և գազի առկայության հեռանկարի մասին:

Ողնաշարավորներ. Ողնաշարավորների մնացորդները հանդիպում են ուղ ֆաներոզոյի ընթացքում: Կարևոր նշանակություն ունեն ցամաքային նստվածքների համահարաբերակցման համար՝ սկսած քարածխային ժամանակաշրջանից: Ըստ նրանց՝ կառուցում են ուղղունալ շերտազրական սխեմաներ: Ծովային ողնաշարավորների մնացորդները նույնպես կարող են օգտագործվել նստվածքների համահարաբերակցման համար:

Բույսերի մնացորդներ. բոլոր հասակների նստվածքների շերտագրության համար ունեն համապարփակ նշանակություն: Դալեռպալինոլոգիան, շնորհիվ իր համընդհանրության (քեղմնիկներ և ծաղկափոշի հանդիպում են նստվածքային ծագման համարյա բոլոր ապարներում), լայն տարածում է ստացել, բայց առաջմ ավելի հիմնական և ճշգրիտ համարվում է բույսերի դրոշմահետքերի ուսունասիրությունն, այսինքն՝ դասական հնաբուսաբանությունը:

Բույսերի դրոշմահետքեր. սովորաբար դրոշմահետքերի տեսքով հանդիպում են բարձրակարգ բույսերի տերևները և ընձյուղները: Կարող են հանդիպել նաև ջրիմուների, սնկերի, մամուների դրոշմահետքերը: Բարցրակարգ բույսերը սովորաբար տարածված են հիմնականում ցամաքում: Այդ պատճառով դրանց դրոշմահետքերը կարող են ունենալ շերտազրական նշանակություն միջին, վերին պալեոզոյի, մեզոզոյի և կայնոզոյի ցամաքային նստվածքների համար: Դրանց դերը հատկապես մեծ է ածխաբեր նստվածքների ուսումնասիրման ժամանակ: Բույսերի դրոշմահետքերը հանդիպում են նաև մերձափնյա ծովային նստվածքներում՝ կենդանիների (ձկներ, փափկամարմիններ) մնացորդների հետ համատեղ, որը մեծ հնարավորություն է տալիս որոշելու և համարելու ծովային ու ցամաքային նստվածքների հասակը:

Դալեռպալինոլոգիա. համընդհանուր մեթոդ է, քանի որ բույսերի քեղմնիկներն ու ծաղկափոշին քամու և այլ գործոններով տեղափոխվում են մեծ տարածություններ և կարող են հասնել ծովային

ավագաններ, այդտեղ թաղվել ծովային օրգանիզմների հետ համատեղ, և հետևաբար, կարող են ծառայել լավ ցուցիչներ նստվածքների համահարաբերակցության համար ընդհանուրապես, իսկ ծովային և ցամաքային նստվածքների համադրման համար՝ մասնավորապես: Մեթոդի կիրառությունը հաճախ դժվարանում է նրանով, որ բեղմնիկներն ու ծաղկեփոշին կարող են ենթարկված լինել վերանստեցման, բացի դա դրանց բրածոների որոշման ճշտությունը վորքը է հաճախ մինչև սեռը: Չնայած այդ բերություններին՝ պայինողոգիան հնարավորություն է տալիս համահարաբերակցելու նստվածքները բեմբրիից մինչև չորրորդական համակարգը ներառյալ:

Պալեոկարպոլոգիա. այս մեթոդն աստիճանաբար ձեռք է բերում մեծ նշանակություն: Պալեոկարպոլոգիան ուսումնասիրում է ոչ միայն բույսերի պտուղները, այլ նաև պտերակերպերի սերմերը և խոշոր բեղմնիկները: Մեթոդի հասակային սահմանները սահմանափակ են: Պալեոգոյի ու մեզոգոյի համար այն չի կիրառվում, առավելապես օգտագործվում է նեղենի և չորրորդականի նստվածքների ուսումնասիրման ժամանակ:

Մանրադիտակային ջրիմուտներ. հիմնականում ուսումնասիրվում են դիտումային, ոսկեգոյն և մտրաթելիկավոր ջրիմուտները, որոնք միավորված են՝ նաև պատճենական ընդհանուր հասկացությունում, ինչպես նաև մինչքեմբրիի ջրիմուրային գոյացությունները և կորիզագուրկլ ցիանոբրոնտները (նախկին կապտականաշ ջրիմուտներ): Ջրիմուտներն այն հազվադեպ օրգանիզմների խմբից են, որ հանդիպում են մինչքեմբրիի նստվածքներում և, այդ պատճառով ունեն կարևոր շերտազգական նշանակություն դրանց ստորբաժանման և համադրման համար: Դիտումային վերլուծությունն ունի կարևոր նշանակություն աշխարհի բոլոր մասերի կայսողոյի շերտագործության համար:

Վերջին տասնամյակներում կարևոր նշանակություն է ձեռք բերել կրային նանոպալանկտոննը: Կրային նանոպալանկտոնի տակ հասկացվում են տարատեսակ պլանկտոն օրգանիզմները կամ դրանց կմախրային մնացորդները՝ մինչև 30-50 մկՄ չափերով: Պալեոգոյում նանոպալանկտոնի մնացորդները հազվադեպ են: Նանոպալանկտոնը ամենուրեք հանդես է գալիս յուրայում և ծաղկման է հասնում կավճում և կայսողոյում: Ըստ նանոպալանկտոնի մշակված կավճի, պալեոգենի ու նեղենի գոնայական սանդղակներն իրենց հուսալիու-

թյամբ և մանրակրկիտությամբ համադրելի են ըստ պլանկտոն ֆունամինիֆերների կազմված սխեմաների հետ և հնարավորություն են տալիս հուսալիորեն մասնատելու ու համադրելու ծովային նստվածքները՝ լայնատարած համենդիանուր մասշտաբներով։ Նաև լանկուտնի համար նմուշները վերցվում են կարբոնատային տպարներից։ Նաև լանկուտնի համար առավել բարենպաստ են նրբահատիկ փափուկ կարբոնատային ապարները։ Նմուշների համար բավարար է չհողմնահարված ապարի 2-3 գրամը։


ԵՐԿՐԱԲԱՆԱՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ (ՈՉ ՀՆԷԱԲԱՆԱԿԱՆ) ՄԵԹՈԴՆԵՐ

Շերտագրական հետազոտությունների ժամանակ լայնորեն օգտագործվում են մի շարք ոչ հնէաբանական մեթոդներ։ Դրանց օգտագործման հնարավորությունը որոշվում է տարածքի երկրաբանական առանձնահատկություններով, իսկ հաջող կիրառումը՝ տարբեր մեթոդներից ստացված արդյունքների ստուգմամբ։ Ուսումնամիջություն է ապարների տեղադրման պայմանները, շերտափրման բնույթը և նյութական կազմը։

Ստորև բերվում է առավել լայն օգտագործվող մեթոդների համարու բնութագիրը։

Շերտավորման հաջորդականության մեթոդը հիմնված է կոնկրետ մերկացումում շերտերի փոխհարաբերության ուսումնասիրության վրա։ Նրա հիմքում ընկած է հետևյալ սկզբունքը։ յուրաքանչյուր ծածկող շերտ ավելի երիտասարդ է ներքնադիր շերտից։ Մեթոդը լայնորեն կիրառվում է երկրաբանական պարզ կառուցվածքի պայմաններում շերտերի հորիզոնական կամ փոքրաթեք տեղադրման դեպքում (նկ. 7)։ Տվյալ դեպքում շերտագրական հաջորդականությունը ներկայացված է հետևյալ տեսքով։ Բ շերտը երիտասարդ է Ա շերտից, իսկ Գ շերտը՝ Բ շերտից։ Իր հերթին Դ շերտը երիտասարդ է Գ շերտից։ Շերտերի նորմալ հաջորդականության վերականգնումը զգալի չափով բարդ է, իսկ երբեմն՝ անհնար, եթե նրանք ենթարկված են ծալքավորման և խախտված են խզումներով (նկ. 8)։ Այս դեպքում սկզբում անհրաժեշտ է պարզել շերտերի հատակը և առաստաղը, հետազոտել նրանց տեղադրման ձևը, որից հետո հնարավոր է որոշել շերտերի նորմալ հաջորդականությունը։ Ընդ որում,

խզումներով անջատված շերտերի դեպքում ոչ միշտ է հաջողվում նրանց համադրումը:



**Նկ. 7. Շերտագրական կտրվածք
շերտերի հարիզոնական
տեղադրման դեպքում.
Ա-Ե շերտերի շերտագրական
հաջորդականությունը**



**Նկ. 8. Շերտագրական կտրվածք
շերտերի ծալքավեր տեղադրման
դեպքում. 1-11 շերտերի հաջորդա-
կանությունը մերկացումում,
Ա-Ե շերտերի շերտագրական
հաջորդականությունը**

Շերտերի համադրումը շերտավորման հաջորդականության մեջողի օգնությամբ տեղանքում իրագործվում է առանձին, առավել հեշտ, ճանաչվող (այսպես կոչված, բնորոշող) շերտերի մեկ մերկացումից դեպի վյուսը հետևելու միջոցով։ Հարեւան մերկացումներում միևնույն բնորոշող շերտերի միջև տեղադրված շերտերը որորահարման հետքերի բացակայության դեպքում համարվում են հասակակից։


Շերտավորման հաջորդականության ուսումնասիրման մեթոդն ապարների հարաբերական հասակի որոշման հիմնական մեթոդներից մեկն է։ Այն հանդիսանում է նաև մյուս բոլոր մեթոդների բաղկացուցիչ մասը։

ՏԵԿՏՈՆԱՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ (ԴԻԱՍՏՐՈՖԻԱԿԱՆ) ՄԵԹՈԴՆԵՐ

Այս մեթոդը սկսեցին կիրառել 19-րդ և 20-րդ դդ. սահմանում, երբ տեկտոնական երևույթները սկսեցին օգտագործել որպես շերտագրական միավորների անջատման և կտրվածքների համադրման չափանիշներ։ Հարկ է նշել, որ այս մեթոդները լայնորեն կիրառվում են մինչքեզրի նստվածքների շերտագրական մասնատման համար, քանի որ այդտեղ կենսաշերտագրական մեթոդներ չեն կիրառվում։ Այդ մեթոդներն են։

Կտրվածքների համադրման մեթոդ՝ ըստ շերտավորման կարգի նմանության, այս դեպքում համադրվում են բազմաթիվ կտրվածքներ

ինչպես տվյալ տարածքում, այնպես էլ հարակից շրջաններում: Ելնում են հետևյալ դրույթից, որ երկրի կտրվածքներում միևնույն կարգով հերթազայռող շերտերը կարող են լինել հասակակից:




Նկ. 9. Ընդմիջումների դասակարգում ըստ Դանքարի և Ռոգերսի (1962).

- ա) հիմքի ապարների աններդաշնակ ծածկում,
- բ) անկյունային կառուցվածքային աններդաշնակություն,
- գ) գրագահեռ աններդաշնակություն, դ) զաղտնի ընդմիջում

Համապրում՝ ըստ շերտագրական ընդմիջումների և տեկտոնական աններդաշնակությունների (նկ. 9, 11): Կիրառվում է լայնորեն խոշոր շերտագրական ստորաբաժանումների անշատման և համադրման ժամանակ, որոնցում օրգանական մնացորդները բացակայում են, հատկապես մինչքեմբրի ապարների մասնատման ժամանակ: Հիմքում ընկած է այն գաղափարը, որ տեկտոնական շարժումները միաժամանակ կարող են ընդգրկել լայն տարածքներ: Նստվածքային ապարները, որոնք կուտակվել են ծովերի հատակում, կարող են ենթարկվել ծալքավորման, ողողահարման և հետազստանական շրջացքում աններդաշնակ ծածկվել ավելի երիտասարդ նստվածքներով: Այդ պատճառով կտրվածքները կարող են մասնատվել ու համադրվել՝ ըստ տեկտոնական աններդաշնակության մակերևույթի, որը միանման աններդաշնակություններով սահմանափակված կտրվածքներում համարվում են հասակակից: Բայց տեկտոնական շարժումները տարբեր շրջաններում կարող են տեղի ունենալ ոչ միաժամանակ և տարբեր արագությամբ, ողողահարման հատույթը տարբեր տեղերում կարող է լինել տարբեր խորության և նոր երիտասարդ


նստվածքները կարող են կուտակվել տարբեր հասակի նստվածքների վրա: Սակայն շերտագրական ստորաբաժանումների անջատումը և հասակի որոշումը հնարավոր չէ կատարել միայն դիաստրոֆիզմի հիման վրա և պարտադիր պահանջում է քարաբանա-շերտագրական և հնէաբանական մեթոդների կիրառումը:

Շերտագրական ընդմիջումների մեթոդը ելնում է նրանից, որ միանման ընդմիջումների միջև ներփակված նստվածքները պետք է լինեն հասակակից: Նստվածքակուտակման ընդմիջումը ժամանակի այն միջակայքն է, որի ընթացքում երկրակեղին որևէ տեղամասում նստվածքներ չեն կուտակվել: Ընդմիջման տևողությունը կարող է տատանվել կարճ ժամանակահատվածից մինչև ժամանակի խոշոր հատվածներ՝ ընդհուպ մինչև մի քանի երկրաբանական ժամանակաշրջաններ: Ընդմիջումները կարող են ուղեկցվել նախկինում առաջացած նստվածքների ողողաքայքայմամբ:



Նկ. 10. Անկյունային աններդաշնակությամբ անջատված դարսաշերտերի կորպածքների համադրումը, A, F – կոնկրետ կորպածքներ, а, р – աններդաշնակությունների մակերեսներ, 1-ին – 3-րդ աններդաշնակության մակերեսներով անջատված ստվարաշերտեր:

Ծովային նստվածքակուտակման մեջ ընդմիջումների գլխավոր նշաններն են. 1) անկյունային աններդաշնակությունը տակդիր նստվածքների հետ, 2) ողողահարման անհավասար ալիքանման մակերեսույթը, որը հատում է տակդիր նստվածքները տարբեր խորություններում, 3) հողմահարման կեղևը, 4) կարստագոյացման և հողմահարման նշանները, 5) չորացման ձեղքերով մակերեսույթները, 6) ավտոդրոն բույսերի արմատներով ու բրածո հողով ենթաշերտերը, 7) կոնգլոմերատների ու ճալաքարերի ենթաշերտերը, 8) հնահովանները ու գետային ավազային նստվածքները, 9) սաղցաղաշտային նստվածքները, 10) ֆառնայի կտրուկ փոփոխությունները, որոնք չեն ուղեկցվում տվյալ տեղամասում ֆացիաների փոփոխությամբ:



Նկ. 11. Շերտագրական աններդաշնակությունների մորֆոլոգիական
դասակարգումը բառ Վ. Սիլենվի (1998):


- 1-5 – աշխարհագրական (զուգահեռ)։ 1 – կոնֆորմ դասավորություն,
- 2 – ուղիղ (ա) և հակառակ (թ) նման դասավորություն, 3 – հենված դասավորություն,
- 4 – հորիզոնական դասավորություն, 5 – ուղիղ (ա) և հակառակ (թ) նման դասավորություն; 6–10 – անկյունային։ 6 – կոնֆորմ դասավորություն, 7 – ուղիղ (ա) և հակառակ (թ) նման դասավորություն, 8 – հենված դասավորություն, 9 – հորիզոնական դասավորություն, 10 – ուղիղ (ա) և հակառակ (թ) թեք դասավորություն; 11–15 – ազիմուտային։
- 11 – կոնֆորմ դասավորություն, 12 – ուղիղ (ա) և հակառակ (թ) նման դասավորություն; 13 – հենված դասավորություն, 14 – հորիզոնական դասավորություն,
- 15 – ուղիղ (ա) և հակառակ (թ) թեք դասավորություն։

Միշտ չե, որ այս նշանները առանձին վերցրած միանչանակ վկայում են ընդմիջումների առկայության մասին: Օրինակ՝ անկյունային աններդաշնակությունները կարող են կապված լինել համանատվածքային կառուցվածքների հետ: Բայց այդ, մի շաբթ դեպքերում դիտարկվող ընդմիջումներն ու աններդաշնակությունները չեն ուղեկցվում կոնգլոմերատներով ու ճալաքարերով:

Ինիստ դժվար է թաքնված աններդաշնակությունների բացահայտումը: Դրանք ունեն բավականին լայն տարածում և երեւմն քողարկում են կտրվածքում շերտագրական խոշոր ժամանակահատվածների բացակայությունը: Այս դեպքում կարենոր են նաև ապարների հասակային որոշումները: Գոյություն ունեն ընդմիջումների տարբեր դասակարգումներ: Սովորաբար առանձնացնում են տեկտոնածին, կլիմայական և տեկտոնածին-կլիմայական ընդմիջումներ:

Ոիթմաշերտագրական մեթոդ Հիմքում նույնպես ընկած է տեկտոնական շարժումների միաժամանակությունը: Կտրվածքը մասնատվում է շերտախմբերի, որոնք համապատասխանում են համեմատական բարձրացումներին, ծովի ծանծաղացման և իջեցումներին՝ ծովի խորացմանը: Կտրվածքում անշատվում են տրանսզրեսիլ և ռեզրեսիվ ոիթմեթոդ, և ըստ այդ ոիթմերի՝ համադրվում են այն կտրվածքները, որոնք գտնվում են միևնույն նատվածքակուտակման ավազանի սահմաններում: Ժամանակակից ոիթմաշերտագրության դասակարգումները կատարվում են նատվածքների գրանուլամետրական (հատիկաչափական) կազմի ուղղվածության փոփոխության վրա: Այդ մեթոդը հատկապես լայն կիրառվում է ածխաքեր ստվարաշերտերի մասնատման և համադրման ժամանակ:

Ոիթմիկությունը բնորոշ է բոլոր նատվածքային ապարներին: Կտրվածքում ուսումնասիրում են տարբեր ապարների ոիթմի հերթափոխումը, որոշվում են նրանց սահմանները և բնորոշ առանձնահատկությունների հիման վրա համեմատվում են տեղամասի կտրվածքները: Դրա համար կազմում են ոիթմաշերտագրական աղյուսակներ, որում առանձնացնում են անումալ ոիթմեր կամ հայտնի հզորության հաջորդական ոիթմեր, և դրանց հիման վրա կատարվում է կտրվածքների համադրում (նկ. 12): Ոիթմերի հզորությունը լինում է շատ տարբեր՝ մի քանի միլիմետրից մի քանի մետր: Ծոքը ոիթմերը միավորվում են խոշորներում, դրանք իրենց հերթին կարող են լինել ավելի խոշոր ոիթմերի մասեր: Տարբեր միավոր ոիթմերի համադրումը լայնորեն կիրառվում է շերտագրությունում:



Նկ. 12. Դիմուգական շերտախմբի ոլորտաշերտազրական աղյուսակ:

1. միջին բեկորային կոմպլոմերատ,
2. մանրաբեկորային կոնկլոմերատ,
3. խոշորահատիկ ավազաքար,
4. մանրահատիկ ավազաքար,
5. կավային ավազաքար,
6. կավ,
7. կավային թերթաքար,
8. այրվող թերթաքար,
9. ածուխ և ածխային թերթաքար,
10. մերգել:

Ամփոփելով տեկստուաշերտագրական մեթոդների կիրառման հնարավորություններն՝ անհրաժեշտ է նշել հետևյալ բնագավառները:

1. Այս մեթոդներն առաջատար նշանակություն ունեն մինչքեմբրիի նստվածքների շերտագրության համար: Մինչքեմբրիի տեղական բարձր կարգի ստորաբաժանումների (համալիր, սերիա) առանձնացման հիմքում ընկած է տեկստուական մոտեցումը, այսինքն՝ ստորաբաժանումների միջև այն ներդաշնակությունների բացահայտումը, որոնք արձանագրվում են տեկստուական շարժումների մեջ ինտրուզիվ մազմայականության արտահայտմամբ, որը տեղի է ունենում ապարազանգվածների ձևավորման փուլերի միջև ընկած ժամանակահատվածներում: Ըստ որում՝ եական է, որ մինչքեմբրյան ցիկլերն արտահայտվում են ընդհանուր գծերով համաժամանակյա երկրի ամբողջ մակերեսովըրին, բայց առանձին տեղամասերում ունեն տարրեր արտահայտություն ու ուժգնություն: Դա պայմանավորված է մինչքեմբրիի դիաստրոֆիկական ցիկլերի մեջ տևողությամբ և այդ ցիկլերի առանձին տեկստուական փուլերի գումարմամբ, որոնք արտահայտված են տեղայնորեն՝ մի միասնական, համաերկրային աններդաշնակության տեսքով: Այդ դեպքում սովորաբար մինչքեմբրիի խոշոր ստորաբաժանումների սահմանում նշվում է միայն մեկ անկյունային աններդաշնակություն: Դա մինչքեմբրիի նստվածքների կտրվածքները տարրերում է ֆաներոզոյան նստվածքներից, որոնցում, սովորաբար, արձանագրվում են մի քանի աններդաշնակություն՝ կապված մեկ դիաստրոֆիկական ցիկլի առանձին փուլերի հետ: Այսպիսով՝ մինչքեմբրիի դիաստրոֆիկական ցիկլերը կարելի է օգտագործել որպես խոշոր շերտագրական ստորաբաժանումների սահմաններ՝ հաշվի առնելով դրանց խիստ երկարատևությունը:

2. Ֆաներոզոյի համար տեկստուաշերտագրական մեթոդները կորցնում են իրենց առաջատար դերը: Դա պայմանավորված է մի շաբթ հանգամանքներով: Առաջինը՝ դա մինչքեմբրիի հետ համեմատած ֆաներոզոյում ամբողջ երկրագնդի համար տեկստուական շարժումների ոփթմը, ըստ բացարձակ երկրաժամանակագրության, խիստ հաճախացել և բարդացել է բազմաթիվ լրացուցիչ դիաստրոֆիկական իմպուլսներով: Դա զգալի չափով դժվարացնում է ֆաներոզոյի շերտագրությունում տեկստուական մեթոդների օգտագործումը: Տեկստուական շարժումները, նույնիսկ խոշորամասշտաբները, արտահայտվում են ոչ ամենուրեք, իրենցից չեն ներկայացնում կար-

Ճատու Էպիզոդներ և ձգված են ժամանակի մեջ: Դա սահմանափակում է տեկտոնաշերտագրական մեթոդների հուսալի օգտագործումը հեռացված միջուղիներուն և ավելի ընդհանրական համահարաբերակցությունների համար:


Տեկտոնաշերտագրական մեթոդները սահմանափակ տարածքների համար հնարավորություն են տալիս բացահայտելու շերտագրական սահմանները մեծ ճշությամբ, երբեմն ավելի ճիշտ, քան կենսաշերտագրական տվյալների դեպքում: Բայց շերտագրական սահմանների ու հասակների բացահայտումը չի կարող կատարվել միայն դիաստրոֆիզմի հիման վրա և պարտադիր պահանջում է քարաբանաշերտագրական և հնէաբանական մեթոդների կիրառում:

ՔԱՐԱԲԱՆԱՄԻՆԵՐԱԼԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Հիմքում ընկած է հետևյալ դաստողությունը. տարբեր կտրվածքներում հանդիպող ապարները, որոնք ունեն միատեսակ նյութական կազմ, հասակակից են: Կիրառվում են սահմանափակ տարածքներում: Առանձնացվում են 2 մեթոդներ.

1. Քարաբանական կազմի համադրության մեթոդ. Էռությունը հետևյալն է. սահմանափակ տարածքներում ուսումնասիրվում են տարբեր կտրվածքների քարաբանական կազմերը, առանձնացվում և համադրվում են միատեսակ կազմ ունեցող շերտերը, շերտատուփերը, շերտախմբերը: Այս մեթոդը է դաշտում սկսվում կտրվածքների ուսումնասիրությունը և երկրաբանական քարտեզահանումը: Քարաբանական կազմն արտահայտում է կլիմայական, ջրաբանական, երկրատեկտոնական, երկրաքիմիական և ընդհանրապես ֆիզիկաաշխարհագրական պայմանները: Քանի դեռ պայմանները տվյալ տարածքում մնում են անփոփոխ, չի փոփոխվում, նաև քարաբանամիներալաբանական մեթոդների հիմքում ընկած և կտրվածքի մասնատման սկզբունքն առանձին շերտերի ու դարսաշերտերի, որոնք միմյանցից տարբերվում են քարագրական կազմով, ապարների կառուցվածքային ու տեքստուրային առանձնահատկություններով, ապարների մեջ գտնվող բնորոշ և միայն նրանց ներհատող միներալով և այլն: Միմյանցից հեռու գտնվող կտրվածքների համադրումը տվյալ դեպքում իրագործվում է մի քանի մերկացումներում շերտերի մեջ վերը նշված հատկանիշների նմանության հիման վրա:

Ըստ որում, միանման կամ մոտ միներալաքարագրական բնութագիր
ունեցող շերտերը համարվում են հասակակից:



Նկ. 13. Քարաքանական և երկրաքանական մեթոդներով
ապարների առաջացման հաջորդականության օրինակներ.

- I – III. ընորոշչ հորիզոն (շերտ 10), IV. ափային գծի տեղափոխման ժամանակ շերտի հասակի փոփոխություն (ա, բ, գ - տարահասակ մակերևույթներ), V. վերին շերտը երիտասարդ է ստորինից, VI. ինտրոզիան ներփակող ապարներից երիտասարդ է (3 ամենաերիտասարդ ինտրոզիան է), VII, VIII. կառուցվածքային հարկերի առանձնացում (ա – գնեյսներ, բ – ավազաքարեր, գ – արգիլիթներ, դ – կավեր), IX, X. ինտրոզիայի հետ նատվածքային ապարների փոխհարաբերության պարզաբնույթ (IX – գրանիտները՝ 2, երիտասարդ են թերթաքարերից՝ 3), X- կոնգլոմերատներ՝ 3, ինտրոզիաների և թերթաքարերի ճալաքարերով, XI. շերտերի ընդհանուր հաջորդականությունը:

Ապարների միներալաքարագրական առանձնահատկությունների համեմատման ու ուսումնասիրման վրա հիմնված մեթոդները լայնորեն օգտագործվում են երկրաբանական հանույթի ժամանակ, ինչպես, այսպիս կոչված, «համրե (բրածոներից գորկ) նստվածքային, մազմատիկ ու փոխակերպային ապարների ստվարաշերտերի ուսումնասիրման, այնպիս է հնէաբանորեն բնութագրված նստվածքների համադրման դեպքում: Ենելով կոնկրետ պայմաններից կիրառվում են վերլուծության տարրեր մեթոդներ: Երբեմն բավարարում է ապարների կոռայիտ համեմատությունը: Օրինակ, հայտնի է, որ Մերձմուսկովյան շրջանում սև կավերն ունեն ուշ յուրայի հասակ, իսկ ներքնադիր կրաքարերը՝ քարածիխ: Հետևապես, Սոսկվայի մերձակայքում գտնելով սև կավերի եղեր՝ նրանց կարելի է հիմնավոր կերպով վերագրել յուրայի համակարգին, իսկ քարահանքերում մշակվող կրաքարերը՝ քարածիխ համակարգին:


Երտերի բարդ տեղադրման պայմաններում (նկ. 13), երբ բնորոշող հորիզոնների անմիջական հետապնդման միջոցով (շերտափորման հաջորդականության մեթոդ) չի հաջողվում շերտերը համադրել, լիթոլոգիական կազմի մանրամասն համեմատությունն օգնում է համադրելու խցումներով միմյանցից անշատված կամ տարբեր տեղամասերում գտնվող շերտերը:

Եթե ապարների ստվարաշերտերը լիթոլոգիական տեսակետից համասեռ են, ապա միներալների բնորոշ գուգակցություններ (ասոցիացիա) պարունակող հորիզոնների առանձնացման ու հետապնդման համար պահանջվում է կտրվածքից վերցված նմուշների չափազանց մանրակրկիտ լաքորատոր հետազոտություն:

Քարաբանություն. 1. կավ, 2. կրաքար, 3. մերգել, 4. ավազաքար, 5. ավազային կրաքար, 6. կոնվլումերատ, 7. գորշ ածուխ, 8. տուֆածին ֆիշոնիդ (տուֆերի, տուֆիտների, տուֆավազաքարերի, տուֆալիքների ոլորմիկ հերթափոխում):


Շերտավորություն. 9. շեղ, 10. հարթ ալիքանման, 11. հորիզոնական նուրբ, 12. հորիզոնական հարթ, 13. հորիզոնական հաստ և հոծ տեքստուրա, 14. ոչ շերտավոր տեքստուրա:

Ֆացիաներ. 15. մերձափնյա հարթավայրային ճահճապատ, 16. մերձափնյա կոպճապավազային, 17. մերձափնյա ծանծաղուտային ավազակավային, 18. ծանծաղ ծովային կարբոնատացմաքարածին, 19. ծանծաղ ծովային տուֆածին-ցամաքածին:



Միներալաքարագրական մեթոդները հնարավորություն են տալիս մասնատելու ու համարելու այն կտրվածքները, որոնք տեղավորված են համեմատարար մոտ նստվածքակուտակման մեջ ավազանի սահմաններում, որտեղ ստվարաշերտերի կազմն ու կառուցվածքը հաստատուն են: Այդպիսի մակերեսի սահմաններից դուրս հասակակից շերտերը կարող են կրել կազմի ու կառուցվածքի զգայի փոփոխություններ, որոնց պատճառով անհնարին կլինի օգտագործել նշված մեթոդները:

Միներալաքանական վերլուծության մեթոդը բավականին տարածում է ստացել «համբե, առավելապես ցամաքային նստվածքների կտրվածքների մասնատման և համարյաման ժամանակը: Մեթոդի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ բեկորային միներալների բնույթը նստվածքակուտակման ընթացքում կարող է փոփոխվել՝ կապված մնման մարզի ապարների փոփոխման կամ սնման մարզի իրավիճակի փոփոխման հետ: Այս մեթոդի դեպքում կտրվածքների մասնատումը և համարյումը հիմնված է ռելիկտային (մնացորդային) միներալների, միներալների քանակական փոփոխարքերության վրա, առանձին միներալների բնույթի վրա (նկ. 15): Ցանկակի է մշակել ցուցանմուշային կտրվածք, որի հետ կարող են համապատվել մյուս կտրվածքները: Ավելի շատ ուսումնապիրվում են ծանր ֆրակցիայի միներալները: Մեթոդի բացասական կողմերն են տարածական սահմանափակվածությունը. նույն նստվածքակուտակման ավազանի սահմաններում միներալային փոփոխությունները տարբեր մասերում կարող են տեղի ունենալ ոչ միաժամանակ:



Նկ. 15. Դարսաշերտերի անջատումը
միօրինակ ստվարաշերտերում ըստ
ապարների միներալային կազմի.
Ա- ցիրկոնային, Բ- նոնարար-ցիրկոնային,
Գ-էպիգրամային, Դ-նոնարարային
դարսաշերտեր:

ԿԼԻՄԱՅԱՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴ

Այս մեթոդը սկզբնապես մշակվել է չորրորդական նստվածքների համար: Այժմ այս մեթոդն օգտագործվում է նաև մինչորրորդական կլիմայաշերտագրության մեջ: Օրինակ՝ այս մեթոդի օգնությամբ հստակեցվել է վենդի ստորին սահմանը՝ սաղցապատման վկաների, լապլանոյան տիպիտների հիմքով: Կլիմայաշերտագրության տակ հասկացվում է մանրամասն հնակլիմայական վերականգնումների օգտագործումը՝ նստվածքային գոյացությունների շերտագրական մասնատման և ռեգիոնալ համադրությունների համար:

Կլիմաբական որրություն	Կլիմայական որրություն սուսավանդը	Զերմանապահովվածության (1) և խոնավածության կրուր	Ֆիզոցենոգի հերթափոխում	Նստվածքայիտակման պրոցեսները	
				Դրակրթավայրական որրություն	Հովհաննեսկում
S u p	Ցուրտ-չոր		Տամուռասափառատան Սառուց Անուտառունոցուն Տայզուն Անոսան յախատերևային Անուտառափառատան Տախատուան հարթավայրային անուտաներով	Լուսակրտուակրում Ազաֆյունկցիա Հովհաննեսկում	Բարձրություն Սառուցի հապում Սառուցի թզվակ Սացցարաշոային որրություն Սացցարաշոային միափ ոռողացում Բարձրություն
Յունակ	Ցուրտ-խոնավ				
S a p - խոնավ					
O o p	Ցուրտ-չոր				
Ցուրտ-չոր			Սունըրասափառատան Լուսակրտուակրում Ազաֆյունկցիա		Բարձրություն Սառուցի հապում Սառուցի թզվակ

Նկ. 16. Պեյսոցենի կլիմայական որրություն սկզբունքային սխեմա
(Վ. Ա. Զուրակովի (1984))

Կլիմայաշերտագրական վերլուծությունը զգալիորեն մեծացնում է նստվածքային ապարների շերտագրական մասնատման մանրամասնությունը և օգնում է ավելի հուսալիորեն համարդելու առանձնացված ստորաբաժնումները: Կլիմայաշերտագրության մեթոդն ավելի արդյունավետ է պլիոցենի և չորրորդական նստվածքների մասնատման դեպքում, բայց այն կարող է օգտագործվել նաև ավելի հին ժամանակաշրջանների համար, հատկապես այն դեպքում, եթե տեղի են ունեցել կլիմայական պայմանների արագ և հակադարձ փոփոխություններ:

Կլիմայաշերտագրությունում ելակետային է կլիմայական ցիկլ հասկացողությունը: Յուրաքանչյուր ցիկլ բնորոշվում է իրեն յուրահասուկ շերմության ու խոնավության տեղաբաշխմամբ և լանդշաֆտային պայմաններով, որոնք արտահայտվում են օրգանական աշխարհի կազմում՝ լերկացմամբ (դենտիպացիա) և նստվածքների կուտակմամբ: Յուրաքանչյուր կլիմայական ցիկլ բաղկացած է չորս փուլերից. շերմություն-չոր, շերմություն-խոնավ, սառը-խոնավ, սառը-չոր: Այդ փուլերը միավորվում են երկու կիսաալիքներում՝ տաք և սառ՝ մի կողմից, խոնավ և չոր՝ միուս կողմից (նկ. 16):

Նստվածքակուտակման գործընթացը ենթակա է կլիմայական և տեկտոնական ռեժիմներին, որոնք համապատասխանորեն արտահայտվում են նստվածքների միներալային կազմում և նրանցում ներփակված օրգանական մնացորդներով: Կլիմայական ներգործությունը առավել վատ արտահայտվում է ցամաքային և ծանծաղ ծովային նստվածքներում, որոնք առաջացել են հանգիստ տեկտոնական պայմաններում: Այդ պատճառով կլիմայաշերտագրական ուսումնասիրությունները կատարվում են հիմնականում պլատֆորմային մարգերում:

Յուրաքանչյուր կլիմայական ցիկլին, իր երկու կիսաալիքներով ու չորս փուլերով, կտրվածքում համապատասխանում է որոշակի նստվածքակուտակման ցիկլ՝ կլիմայանստվածքակուտակումային ցիկլ, որը լավ քարտեզագրվում է: Կլիմայական ցիկլերը ոչ միայն արտահայտվում են նստվածքների կազմում, այլև բացահայտվում են նաև նստվածքների քեղմնիկ-ծաղկափոշային համալիրով, բուսական համագոյացումների փոփոխությամբ, ֆաունայի և երկրաքիմիական առանձնահատկությունների փոփոխությամբ, այդ բոլորի հիման վրա որոշվում են օրգանիզմների բնակման միջավայրի շեր-

մաստիճանային պայմանները: Տեղածին առատիզեն միներալների ուսումնասիրությունն օգնում է վերականգնելու կիման և լանդշաֆտաաշխարհագրական պայմանները:

Ցամաքային իրադրություններում՝ չորային լանդշաֆտներում առաջանում են կալցիտ, գիպս և այլ աղեր, խոնավ լանդշաֆտներում՝ երկաթի և մանգանի օքսիդներ, վիվիանիտ, մերձասարցագաշտայիններում՝ յուրիխիտ, կավային բաղանքներ, սիդերիտ, պելիտամորֆ արագոնիտ:

Շելֆում նույնպես դիտվում է տեղածին միներալների տեղաբաշխման կիմայական զոնայականություն: Արկտիկակական ծովերում՝ միայն երկաթի սուլֆիդներ, բարեխառն զոնաներում՝ երկաթի ու մանգանի օքսիդներ ու սուլֆիդներ (նուրք չափաբաժնում մինչև 90%): Չորային մարգերում՝ քիմիածին կարբոնատներ, աղեր: Լավ հայտնի և միներալների նատեցման հաջորդականությունը՝ կալցիտ → դոլոմիտ → ցելեստին → գիպս → հալիտ → մանգանի աղեր:

Կիմայաշերտագրական մեթոդը լրացնում է կենսաշերտագրականին չի հանդիսանում ինքնուրույն:

ԲՆՈՐՈՇԻՉ ՀՈՐԻԶՈՆՆԵՐԻ ՄԵԹՈԴ

Բնորոշիչ հորիզոն կոչվում է այն շերտը, որը ապարների շերտախմբում աշքի և ընկնում ինչ-ոք հատկանիշներով՝ քարաբանական կազմով, գոյսով, օրգանական մնացորդներով, միներալային ներփակումներով և այլն: Այդ շերտերը որոշակիորեն առանձնացվում են շատ կտրվածքներում և հետամտվում են զգալի հեռավորությունների վրա: Այսպիսով՝ որոշակի տարածքի տարբեր կտրվածքներում անընդմեջ հետամտվող նույն բնույթի մեկ կամ մի քանի շերտերը այդ տարածքի համար համարվում են բնորոշիչ: Դրանց առաստաղին և հատակին հարող նատվածքները համապատասխանաբար համադրվում են միմյանց հետ: Այս մեթոդը կիրառվում է միանման կտրվածքների շերտագրական համարման համար, ինչպես նաև երկրաբանական քարտեզագրման, օդատիեզերական նկարների վերծանման և օգտակար հանածոների որոնողահետախուզական աշխատանքների ժամանակ:

Սեկվենցիան նստվածքների տրանսգրեսիվ-ռեգրեսիվ սերիա է՝ սահմանափակված ստորին և վերդիյը աններդաշնակություններով։ Սեկվենցիա տերմինը նշանակում է հաջորդականություն, առաջարկվել է Լ. Սլուտի կողմից 1963 թվականին՝ Հյուսիս-Ամերիկյան պլատֆորմի տրանսգրեսիվ և ռեգրեսիվ սերիայի համար։ Որպես կանոն, դրանք խոշոր շերտագրական ստորաբաժանումներ են։ Ըստ այս տեսության, որոշ ընդմիջումներ, աններդաշնակություններ, ծովարշավներ և հետրնթացներ կապված են ոչ թե տեղական տեկսոնական շարժումների հետ, այլ Համաշխարհային օվկիանոսի մակարդակի էկստատիկ տատանումների հետ։ Տվյալ դեպքում տեղային սեկվենցիաներն ունեն ընդհանուր նշանակություն։

Սեկվենտային շերտագրության հիմնական խնդիրն է Համաշխարհային օվկիանոսի մակարդակի էկստատիկ տատանումների սեկվենցիաների վերլուծությունը։ Օվկիանոսի մակարդակի և տրանսգրեսիայի, իսկ այնուհետև օվկիանոսի մակարդակի իջեցման և ռեգրեսիայի ժամանակ, մայրցամաքից դեպի օվկիանոս անցման մարզերում ձանապարհների ուղիները խիստ փոփոխվում են։ Այդ ուղիներով բեկորային նյութը տեղափոխվում է մայրցամաքից ծով։ Նստվածքային նյութի տեղափոխման նման ուղիները անվանում են տրակտերի համակարգեր։ Տարբերում են օվկիանոսի մակարդակի հետևյալ վիճակներ՝ ցածր, կանգնած վիճակ, մակարդակի բարձրացում, բարձր վիճակ, մակարդակի անկում։ Համապատասխանաբար մայրցամաքի եզրում, ըստ նստվածքակուտակման բնույթի, առանձնացվում են տրակտերի երեք հիմնական տեսակներ՝ ցածր կանգնած վիճակ, տրանսգրեսիվ և բարձր կանգնած վիճակ։

Որպես կանոն, այդ նստվածքագոյացումներն ունեն սեպաձև տեսք։ Սեկվենս շերտագրական ստորաբաժանումները կարող են առանձնացվել ցամաքածին և կարբոնատային ապարներում։ Տարբերում են մեզասեկվենս, առապերսեկվենս, սեկվենս և պարասեկվենս միավորները։ Սեկվենսների ձևերը շատ բազմազան են։ Նստվածքային ծածկոցի հարթ գուգահետներից և ոսպնյականման մարմիններից մինչև համեմատաբար խիստ թեք սեպաձև (կլինոֆոր) ոսպնյականման մարմինները՝ կլինոֆորմները։

Խոշոր պլատֆորմային ավազաններում կլինոֆորմները ձգվում են ավազանի եզրով հարյուրավոր և նույնիսկ հազարավոր կիլոմետ-

թեր, իսկ լայնությամբ մի քանի հազար կիլոմետրեր: Տարբեր նստվածքային ավազանների սեկվենս շերտագրական սխեմաների համահարաբերակցումը թույլ է տալիս բացառել ուղղունալ սեկվենսների առաջացման պատճառների ազդեցությունը և բացահայտել էվտատիկ իրադարձությունները: Վերջինիս վրա է հիմնված գորպալ սեկվենս շերտագրական հաջորդականությունների և համաշխարային օվկիանոսի էվտատիկ տատանումների կորի կառուցումը: Մեկվենս շերտագրական սխեմաների համահարաբերակցման համար անհրաժեշտ է կենսաշերտագրական վերահսկողություն: Մեկվենս շերտագրական բաժանումների անվանարկումները ձևավորվում են տեղանքի աշխարհագրական անունից և միավոր աստիճան տերմինից: Երբեմն կիրառում են նաև թվային կամ տառային նիշեր:

Այսպիսով, սեկվենս շերտագրական ստորաբաժանումների հետապնդումը և նկարագրումը, բացի ընդհանուր շերտագրական պահանջներից, կատարվում է նաև աններդաշնակությունների և նստվածքակուտակման մակերեսների առանձնահատ-կությունների և տվյալների տարածման հիման վրա, ինչպես նաև նստվածքի կառուցվածքի և նստվածքային մարմինների երկրաշափական ձևից ելնելով: Մեկվենս շերտագրությունը հնարավորություն է տալիս առանձնացված շերտատուփերի հիման վրա վերականգնել նստվածքակուտակման ցիկլերը:

ԻՐԱԴԱՐՁԱՅԻՆ ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երկրաբանական իրադարձությունը, ըստ Զ. Գուլյի (Գրետեներ, 1986), որևէ բնական պրոցեսի թոփշքած զարգացումն է: Այն պայմանավորված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պատճառների ներազդեցությամբ, որոնք ունեն երկրաբանական արտահայտվածություն: Երկրաբանական իրադարձությունները ստորաբաժնվում են երկու տեսակի՝ սովորական և անսովոր: Վերջիններին են պատկանում կործանարար և աղետալի բնույթի իրադարձությունները: Երկրաբանական իրադարձությունները լայն, տարրաբնույթ պրոցեսների արդյունք են և կարող են լինել օրինաչափ, ոլիքմիկ, պատահական և շբացահայտված պարբերականությամբ: Իրադարձություններն ըստ արտահայտման մասշտաբների կարող են լինել համաերկրային, ուղղունալ և տեղային:

Նորագույն երկրաբանական պատմության իրադարձությունների դասակարգում

Իրադարձային դասերը			Իրադարձությունների Տիպերը	Իրադարձությունների չափորոշիչները
Գլոբալ	Ռեզիլիանտ	Տեղական		
		Տեղեկաբա-ծին	Մետեորիտի անկում Խոշոր մարմինների անկում Օքսիգնանների և ռեզիօնալ մազկի-սաղոնների հերթափոխում Միկրոզննա	Մագնետիտային սֆերուլաներ Խմբակտիտներ. Կրատերներ Մագնիսական բևեռականության միջն եղած սահմանները Իրադարձություններ
Երկրա-մագնիսական		Հրաբխածին	Սովորաբափ	Շերտավոր կուտակումներ. Մոխրային հատիկների ներփակումներ
		Տեկտոնա-ծին	Երկրաշարժեր	Շերտավորության մակերեսների դեֆրմացիաներ
Կիլոմետրական	Քրիոնիրանաներ		Օվկիանոսների և ներքին ծովերի մակարովակի հօցում	Ափային գծի, ծովային դարավանդների տեղաշարժ
			Սանցաղաշտերի օսիկացիա և ստացիանների սահմանները	Եզրային գոյացումներ. Ներքին վերջնական մորենաներ. Զանյորանների գեներացիա
			Հալվոր ջրերի ճեղորում	Ենթալճակային ավազաններ
			Հավերժ սառածություն	Սացային դեֆորմացիաներ
			Քրիոհիգրոտիկական սահմաններ և էրստրեմումներ	Տայգաների պայմանամալիքներ
			Քրիոքսերոտիկական սահմաններ և էրստրեմումներ	Տունյառատափաստանային պայմանամալիքներ և արկտիկական անապատներ
			Ջերմաբարոտիկական սահմաններ և էրստրեմումներ	Կիսաանապատների և հարավային տափաստանների պայմանամալիքներ
			Ջերմահիգրոտիկական սահմաններ և էրստրեմումներ	Լայնատերև անտառների պայմանամալիքներ

Երկրաբանական իրադարձության առանձնացման կարևոր պահանջը, բացի ակնառու արտահայտվածությունից, կարճատևությունն է: Ըստ Պ.Ի.Գրետեների (1986) իրադարձությունների տևողությունը պետք է կազմի քննարկվող ժամանակահատվածի պատահականներ և հազվադեպներ: Թվերն այն տարիների քանակն են, որոնք անհրաժեշտ են գրնե մեկ իրադարձության 95 տոկոսանոց հավանականության համար: Երկրաբանական իրադարձության արտահայտման պարբերականությունը նկատելի է մոտավորապես 26 մին տարին մեկ:

Երկրաբանական իրադարձությունների արտահայտությունները խիստ տարբեր են ու բարդ: Բացի երկրաբանական ակնթարթային երևույթներից որպես իրադարձային կարող է լինել որևէ երկրաբանական գործնթացի արտահայտման սկիզբը, զարգացման գագաթնակետը, ավարտը կամ որևէ գործնթացի զարգացման անսովոր, եքստրեմալ սահմանները:

Երկրի պատմության ընթացքում երկրաբանական իրադարձությունների հաջորդականությունը կազմում է բնորոշչինների համակարգ կամ հենակետային կմախք՝ շերտագրական կառուցումների համար, որն հնարավորություն է ընձեռում ճշգրտելու և մանրամասնելու շերտագրական սխեմաները:

Աղյուսակ 2-ում բերվում է նորագույն երկրաբանական պատմության իրադարձությունների դասակարգման մի տարբերակ՝ կազմված Արևելաեվրոպական հարթավայրի համար (Գ.Վ.Խոլմովյան, 1999):

ԵՐԿՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁԱԿԱՑԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Երկրի երկրաբանական տարեգրության մասին մեր գիտելիքները և երկրային երկրադինամիկական պրոցեսների զարգացման ու բնույթի վերաբերյալ տեսական պատկերացումները հնարավորություն են տալիս կառուցել Երկրի եվոլյուցիային համարժեք ֆիզիկական մոդելը և բացատրել նրա շրջանակներում երկրային կյանքի զարգացման հիմնական սահմանները: Երկրային կյանքի առաջացումը կարևորագույն իրադարձություն է: Հնեաբանական տվյալները փաստում են, որ կյանքն առաջացել է մոտ 3,5-3,8 մլդ տարի առաջ: Այդ ընթացքում քիմիական եվոլյուցիան սկիզբ է տվել կենսաբանա-

կանին. դրանցից են անթթվածին պայմաններում բնակվող հետոսին-թեզող անակրոք բակտերիաները, որոնց ուշ պրոտերոզոյում հաջորդում է կյանքի գանգվածային առաջացումը:

Երկրի պատմության տարեգրությունում կարևորագույն իրադարձին սահմանները շատ են, որոնցից նշենք կարևորները.

14-15 մլդ տարի. Մեծ Պայթյուն, Տիեզերքի կազմավորում:

5 մլդ տարի. Արեգակի կազմավորում:

4,45-4,66 մլդ տարի. Երկիր մոլորակի կազմավորում:

4,3-4,2 մլդ տարի. Հնագույն բեկորային միներալ՝ ցիրկոնի հասակ:

4 մլդ տարի. Երկրի ամենահին ապարների հասակ (Կանադա, Գրենլանդիա) և նախակեղևի առաջացում:

3,8-3,5 մլդ տարի. Կյանքի ծագում: Հայտնվում են առաջին բակտերիաները և հավանական է ցիանոբիոնտները (նախկին կապտականաշ ջրիմուռներ): Քարոլորտում ձևավորվում են առաջին կենսածին ապարները:

3,5 մլդ տարի. Մագնիսական դաշտի հավաստի տվյալներ, նման է այժմյանին:

3,2 մլդ տարի. Հասուն մայրցամաքային կեղևի կազմավորման սկիզբ:

3,2 մլդ տարի. Հայտնվում են առաջին իսկական ցիանոբիոնտներն՝ առաջին թթվածին սինտեզող օրգանիզմները: Քարոլորտում առաջանում են կենսածին ստրոմատոպլիտային կրային ապարները: Մթնոլորթը սկսում է հարստանալ թթվածնով:

2,5 մլդ տարի. Պանզեա-0 գերմայրցամաքի կազմավորում:

2,5 մլդ տարի. Հայտնվում են առաջին միաբջիջ ջրիմուռները՝ էվկարիոտները և ակրոք բակտերիաները:

2,2 մլդ տարի. Ծածկոցային սառցապատում (գուրոնյան):

2,2-2,0 մլդ տարի. Հայտնվում են առաջին բազմաբջիջ բույսերը՝ ջրիմուռները:

2 մլդ տարի. Մթնոլորթում հաստատվում է թթվածնի առկայությունը:

1,8 մլդ տարի. Հայտնվում են բազմաբջիջ անողնաշարավորներ՝ անխոյան ֆաունա (որդանման ձևեր):

1,8 մլդ տարի. Պանզեա-1 գերմայրցամաքի կազմավորում:

0,8 մլդ տարի. Պանզեա-1 գերմայրցամաքի տրոհում:

0,7 մլն տարի (V). Հայտնվում են վենդի ծովային անկմախք օրգանիզմները. ներկայացված են կնիդարիաներով, որդերով, հատվածուսանիներով, փշամորքներով: Սասայական զարգացում են ստանում մանրէաֆոսիլները և նաևնֆոսիլները:

570 մլն տարի (E). Զանգվածաբար հայտնվում են առաջին կմախքային անողնաշարավորները և առաջին բորդափները:

560 մլն տարի (E). Մթնոլորտում թթվածնի պարունակությունը կազմում է ներկային թթվածնի պարունակության 1/3-ը:

460 մլն տարի (). Հայտնվում են առաջին ցամաքային բույսերը:

450-430 մլն տարի (O-S). Օրգանիզմների մասայական մահացում:

420 մլն տարի, (S₂). Հայտնվում են առաջին ձկները:

415 մլն. տարի (S₂/D₁). Ցամաքային բուսականության զանգվածային առաջացում:

360 մլն. տարի (D). Առաջին երկարյին անողնաշարավորների (միջաւներ, սարդակերպեր) և ողնաշարավորների (երկկենցաղներ, սողուններ) զանգվածային առաջացում:

298 մլն. տարի (C₃). Պանզեա-2 գերմայրցամաքի կազմավորում:

250 մլն. տարի (P₃). Մերկասերմ բույսերի առաջացում:

250-240 մլն. տարի (P₃/T₁). Օրգանիզմների զանգվածային մահացում:

240 մլն. տարի (T₁). Հայտնվում են կաթնասունները:

160 մլն. տարի (J₂). Պանզեա-2 մասնատում, ժամանակակից օվկիանոսների ձևավորման սկիզբ:

111 մլն. տարի (K₁). Հայտնվում են առաջին ծածկասերմ բույսերը (ուշ ալբ):

65 մլն. տարի (MZ/KZ). Օրգանիզմների զանգվածային մահացում:

65-60 մլն. տարի (MZ/KZ). Ծածկասերմ բույսերի և կաթնասունների զանգվածային առաջացում:


35 մլն. տարի (). Ծածկոցային սաղցապատում Անտարկտիդայում:

4 մլն. տարի (). Ծածկոցային սաղցապատում Արկտիկայում:

2,8 մլն. տարի (N₂). Մարդու առաջացում, Homo habilis - հիմուն մարդ:

90 հազ. տարի (). Homo sapiens – բանական մարդ:


Օրգանիզմների մահացում: Օրգանիզմների անհայտացումը տեղի է ունենում երեք հիմնական տարրերակով: Մի դեպքում նախկին օրգանիզմների խմբերի անհետացումը պայմանավորված է նրանց կվյուցին վերափոխումներով, առաջացնելով հետնորդ ժառանգների խմբեր: Մյուս դեպքում, գոյության դադարումը պայմանավորված է հենց խմբի մահացությամբ: Երրորդ տարրերակն իրենց ներկայացնում է առաջին երկուսի գուգակցումը. մի որոշ ժամանակ տեղի են ունենում վերափոխումներ, ապա խումբը մահանում է: Բոլոր երեք տարրերակների վերջնական արդյունքը համընկնում է. նախկին խումբը մահանում է: Մահանալու գործընթացը բարդանում է խմբի ծաղկման, մարման շրջաններով և միջավայրի ձևափոխություններով: Խմբի գոյատևման երկարակեցությունը կախված է նաև տաքսոնմանական աստիճանից: Ամենաերկարակյացն են վերնայագավորությունն ու թագավորությունը (3,8 և 1,7 մլրդ տարի), ամենակարճատև՝ տիպերն ու ենթատիպերը (0,5-ից 20 մլն. տարի):



Նկ. 17. Երկիր պատմության մեջ օրգանիզմների տեսակների քանակական փակախության և զանգվածային մահացումների զծապատճեր

Ֆաներողյում ամենանկատելի զանգվածային մահացումները տեղի ունեցան միջին և վերին քեմքրիի ժամանակ, օրորվիկի-սիլուրի, սիլուրի-դևոնի, դևոնի-կարբոնի, պերմի-տրիասի, տրիասի-յուր


բայի, կավճի-պալեոգենի սահմաններում (նկ. 17): Սահացության մեծ արագության պարագայում այն դիտվում է որպես «ակնթարքային» թռիչքաձև փոփոխություն: Նմանատիպ մահացությունները դասվում են հանկարծակի արհավիրքների շարքին, այսինքն՝ աղետներին (հուն. *kata* – ներքև; *strophe* – պտույտ, շրջադարձ):



Նկ. 18. Իրիդիումային անումալիայի հորիզոն (նշված է սլաքով)
կավճի և պալեոգենի նստվածքների սահմանում
(Յուկատան թերակղզի, Կոլորադոյի նահանգ, ԱՄՆ)

Սահացումները պայմանավորված են երկու պատճառներով. ներքին (մորֆիզիոլոգիական իրավիճակ) և արտաքին (արիոտիկ և կենսական բնակության միջավայր): Երկու պատճառն ել գործում են միաժամանակ, սակայն արտաքինն ավելի վառ է արտահայտվում, այդ իսկ պատճառով այն հաճախ ընդունվում է որպես միակ դրդապատճառ: Սահացումների ներքին պատճառների շարքին են պատկանում կենսական ուժերի պաշարների սպառումը (անհատական կյանքի նմանությամբ՝ «ծերացումն և «մահե», փոփոխությունների միջակայքի կրծատումը, սեռական և անսեռ բազմացումների որակի նվազումը, մասնագիտացումը: Այստեղից բխում է կյանքի փոփոխվող պայմաններին համակերպման անհնարությունը: Սա-

հացության արտաքին պատճառներին են դասվում՝ զլոբալ տեկտոնական պայմանների փոփոխմամբ պայմանավորված ծով-մայրցամաք հարաբերակցությունը, հրաբխային գործունեության և երկրաշարժերի ակտիվացումը, կլիմայական գոտիների տեղաբաշխման փոփոխությունը, օվկիանոսների մակարդակների զլոբալ տատանումները, մինուրսի կազմի փոփոխությունը, սննդային և սննդի որակի կապերի խզումը, ռադիոակտիվության ուժեղացումը Երկրի ըներքի ճառագայթման միջացիայի պատճառվ, տիեզերական պատճառները (գերժամանակակից աստղի պայթյուն, աստերոիդի հետ բախում, երկնաքարային ուժակոծում և այլն):



Նկ. 19. Կանյոն-Դյարլո մետեորիտային խառնարանի օդալուսանկար (Արյանայի նահանգ, ԱՄՆ)



Նկ. 20. Ընկնող աստերոիդի պայթման այլը

Տիեզերական պատճառների օգտագործումը մահացությունների բացատրման համար առավել տարածված է: 20-րդ դարի վերջին քարորդում սկսեցին մշակել իրիդիումով հագեցած աստերոիդների հետ պարբերական բախումների հիմունքը (նկ.19, 20): Համաձայն վերջինիս՝ բախումը բերում է փոշու զգալի արտանետմանը ստրատոսֆերա, որը որոշ ժամանակով արգելակում է արևային լույսի ներթափանցումը Երկիր: Այս բացատրությունը թվում էր առավել գրավիչ մեզոզոյ-կայնոզոյի սահմանում՝ զանգվածային մահացությունների համար: Իսկապես, այս սահմաններում, շատ տեղերում հայտանքերվել են իրիդիումով հարուստ նստվածքներ (Իսպանիա, Կանադա, Ավստրալիա, Հունաստան) (նկ.18): Միևնույն ժամանակ Դրիմում և այլ տարածաշրջաններում տվյալ փուլում իրիդիումով հարստացումներ չեն նկատվում: Բացի այդ, դինոզավրերի և զլոբառանիների փաստացի մահացումները

սկսվել են շատ ավելի վաղ քան ենթադրյալ «իրիդիական» աստերո-իդների հետ բախումների տեղի ունենալը: Ավելին, մեզոզոյ-կայնողոյի սահմանում արևային լույսի նվազումը պետք է հանգեցներ վերերկրային բուսականության զանգվածային ոչնչացմանը:

Իրականում դիտվում է հակառակ պատկերի. բույսերի, հատկապես ծածկասերմերի, զանգվածային ծաղկում:

Սահացումները լավ բացատրվում են երկու բավականին պարզ պատճառների զուգորդմամբ. արտաքին՝ հնաշխարհագրական պայմանների փոփոխությամբ, եթե մոլորակային տրանսգրեսիան հերթափոխում է ռեգրեսիայով, և ներքին՝ օրգանիզմների մորֆոֆիզիոլոգիական իրավիճակով, որը բերում է համընդհանուր ապակայունացմանը: Գլրալ անկումները հանգեցնում են որոշ տիպի օրգանիզմների զանգվածային ոչնչացմանը և մյուսների պահպանմանը: Հաջորդող տրանսգրեսիան և կայունացումը հանգեցնում են նոր տեսակների զանգվածային առաջացմանը, որոնք գրավում են ազատված էկոլոգիական տարածքը:

ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՍԵԹՈՒ

Սեթողի հիմքում ընկած է երկրակեղեղի ապարներում քիմիական տարրերի համընդհանուր ցրման զաղափարը, որի ֆոնում առանձին տարրերի բարձրացված պարունակությունն ատոմների երկրաքիմիական միզրացիայի օրինաչափ արդյունքն է:

Ասումների միզրացիայի բնույթը, կամ երկրաքիմիական շարժունակությունը կախված է տարրերի ֆիզիկաքիմիական հատկություններից և միզրացիայի արտաքին պայմաններից: Տարրերի ֆիզիկաքիմիական հատկությունները կայուն են, այդ առումով տարրեր տիպի նստվածքների երկրաքիմիական մասնագիտացումը, որն արտահայտվում է կուտակման նկատմամբ տարրերի տարրեր միտմամբ, վերահսկվում է բացառապես միզրացիայի արտաքին պայմաններով: Համանման ֆիզիկաքիմիական պայմաններում տարրերը միզրացիոն ունակությունների շարքում գրավում են խիստ որոշակի դիրք: Արտաքին ֆիզիկաքիմիական պայմանների փոփոխությունն ուղեկցվում է տարրերի միզրացիոն ունակության փոփոխությամբ և, հետևաբար, դրանց երկրաքիմիական շարժունակության շարքի վերակառուցմամբ: Տվյալ երկրաբանական մարմնի սահման-

ներում տարրերի երկրաքիմիական շարժունակության շարքը միշտ արտահայտում է այդ մարմնի ձևավորման պայմանները: Այդ առումով հնարավոր է երկրաքիմիական ուսումնասիրությունների միջոցով բացահայտել կտրվածքում տարբեր ծագման ապարների տիպերը և դրանք հետամտել տարածության մեջ:

Երկրաքիմիական մեթոդ օժանդակ մեթոդ է: Այն ավելի արդյունավետ է համասեռ, օրգանական մնացորդներով վատ բնութագրված նստվածքային ստվարաշերտերի մասնատման ու համադրման դեպքում: Դրանց են պատկանում ծովային սուլֆատկարբոնատային, սիլիցիումային, հրաբխածին-սիլիցիումային, որոշ բեկորային և այլ ապարները:

Երկրաքիմիական ուսումնասիրությունը պետք է սկսել առավել լրիվ և շերտագրորեն լավ ուսումնասիրված հենակետային կտրվածքներից և դրանցում առանձնացված երկրաքիմիական ստորաբաժանումների հետ համարել ավելի թույլ ուսումնասիրված կտրվածքները:


ԵՐԿՐԱՔԻԶԲԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Մեթոդների հիմքում ընկած է կտրվածքում ապարների ֆիզիկական հատկանիշների փոփոխության ուսումնասիրությունը: Այդ տվյալների հիման վրա մեկ կտրվածքում ըստ ֆիզիկական հատկանիշների առանձնացվում են շերտեր, շերտատուփեր ու շերտախմբեր, դրանք համարվում են հարևան շրջանների կտրվածքների միևնույն ֆիզիկական հատկանիշներն ունեցող շերտերի ու շերտախմբերի հետ:

Լայնորեն գործածվում է էլեկտրական կարոտաժի մեթոդը. ուսումնասիրվում են հորատանցքերի կտրվածքներ՝ ապարների տեսակարար էլեկտրական դիմադրողականության և ծակոտկենության հիման վրա: Հորատանցք իջեցվում է գոնդ, հատուկ սարքով որոշվում է հաջորդաբար բացվող ապարների դիմադրողականությունը և արձանագրվում ժապավենի վրա: Ստացվում է կարոտաժային դիագրամ, կորի պիկետը (զագարը) արտահայտում է ավելի բարձր դիմադրողականությունը (նկ. 21):

Միջուկային կարոտաժի (զամմա կարոտաժ) դեպքում ուսումնասիրվում է ապարների բնական ռադիոակտիվությունը: Էլեկտրո-

կարոտաժը և զամնա կարոտաժը լայնորեն օգտագործվում են վաս մերկացած հարթավայրային շրջանների կորվածքների ուսումնա-սիրման ժամանակ (հատկապես նավթային երկրաբանությունում):



Նկ. 21. Կարոտաժային դիագրամ.


1 - ավագ, 2 - կավային ավագ, 3 - գլառկոնխտային ավագ, 4 - կավ, 5 - մերգել

Վերջին տասնամյակներում կտրվածքների մասնատման և համադրման համար սկսեցին օգտագործել հնամազնիսական մեթոդն ապարների բնական մնացորդային մազնիսացվածության ուսումնասիրությունը: Մեթոդը հիմնված է այն սկզբունքի վրա, որ երկրի պատմության ընթացքում տեղի է ունեցել մազնիսական դաշտի բազմակի շրջում (ինվերսիա), այսինքն, տեղի է ունեցել բնեռականության նշանի բազմակի փոփոխություն: Բացի այդ, աշխարհագրական բնեռների միզրացիային գուգրնաց, տեղի է ունեցել մազնիսական դաշտի դանդաղ փոփոխություն: Ուսումնասիրվում են երկրամազնիսական դաշտի փոփոխությունները տարածության մեջ և փոփոխությունը ժամանակի ընթացքում, ապարներում այդ դաշտի արտահայտման օրինաչափությունները և հետազա դրոշմահետքերը: Մեթոդի հեռանկարները տարբեր երկրաբանական խնդիրների լուծման համար առաջին հերթին կախված է հնամազնիսական (շերտագրական և ժամանակագրական) սանդղակի մշակումից:

Ստացված տվյալների մեկնաբանման հիմքում ընկած են հետևյալ վարկածները. 1. ապարներն իրենց առաջացման ընթացքում մազնիսանում են երկրամազնիսական դաշտի տվյալ ժամանակի և տեղի ուղղությամբ: 2. Զերորդ բերված առաջնային մազնիսականությունը պահպանվում է ապարում (գոնե մասսամբ) երկրաբանական ժամանակի ընթացքում:

Երկրաբանական պատմության ընթացքում երկրամազնիսական դաշտը կրել է բազմակի շրջում, որի հետ կապված նստավածքային ու հրաբխածին շերտախմբերի կտրվածքները մասնատվել են միմյանց հերթափոխող ուղիղ (N-զոնաներ) և հակադարձ, R զոնաներ, զոնաների: Մայրցամաքների դրեյֆը և երկրամազնիսական դաշտի շրջումը (ինվերսիան) նախադրյալներ են ստեղծում մազնիսաշերտագրական ուսումնասիրություններ կատարելու համար:

Մազնիսաշերտագրական ուսումնասիրությունները ներառում են՝ ապարախմբերի մասնատումն ըստ հնամազնիսական հատկանիշների, ուղղունալ և տեղական սիեմաների, հնամազնիսական համահարաբերակցում և դրանց համեմատումն ընդհանուր շերտագրական սանդղակի հետ, միասնական մազնիսաշերտագրական սանդղակի ստեղծում (նկ. 22):



Նկ. 22. Պալեոզոյան, մեզոզոյան և պալեոզոևնի հնամազնիսական սանդղակ:

(Պատմական երկրաբանություն, 1985)

Լավայի սառչելու կամ նստվածքում հատիկների ընկդմվելու ժամանակ ֆերումագնիսային մասնիկները մագնիսանում են և կողմնորոշվում են երկրի մագնիսական դաշտում: Դիագենեզի և ծալքափրման ժամանակ մասնիկների առաջնային կողմնորոշումը չի խախտվում: Դա համապատասխանում է շերտի կուտակման ժամանակ մագնիսական դաշտի կողմնորոշմանը: Կտրվածքներում չափելով խիստ կողմնորոշված նմուշների բնեղականությունը՝ հնարավոր է դառնում կտրվածքը մասնատելու առանձին հորիզոնների ուղիղ և հակառարձ մագնիսականությամբ, որը և հնարավորություն է տալիս կտրվածքում առանձնացնելու ապարների շերտատուփերը և հարեւան կտրվածքներում գտնելու հասակալից շերտերը:

ՍԵՅՍՄԱՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԵՐԿՐԱՇԱՐԺԱՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Սեյսմաշերտագրությունը սեյսմիկ պրոֆիլացման տվյալների շերտագրական մեկնաբանումն է՝ անդրադարձ կամ բեկումնային այլքների սեյսմագրերի տեսքով: Այդ ընթացքում սեյսմաշափական սահմաններում առանձնացված երկրաբանական մարմինները համարվում են սեյսմաշերտագրական ստորաբաժանումներ, որոնք կարող են ունենալ ռեգիոնալ կամ տեղական նշանակություն: Սեյսմաշերտագրական մեթոդի կարևոր առավելություններն են. 1) երկրակեղեկի ավելի մեծ խորությունները, քան այն, որ կարող են բացահայտվել հորատմամբ (ինչմա դա մոտ 5կմ է), 2) ստացված տեղեկատվության խոռոչուն ավելի մեծ է, քան եզակի հորատման արդյունքները:

Սեյսմաշերտագրական վերլուծությունը բաղկացած է հետևյալ փուլերից.

- 1) սեյսմիկ պրոֆիլի վերլուծություն և երկրաբանական մարմինների առանձնացում,
- 2) հայտնի հորատանցքների հետ համահարաբերակցում և կապակցում իրական երկրաբանական սահմանների հետ,
- 3) սեյսմիկ ֆացիաների անջատում և վերլուծություն,
- 4) լիտոֆացիաների մեկնաբանություն,
- 5) ալիքային պատկերի համակարգչային մոդելավորում,
- 6) վերջնական մեկնաբանում և շերտագրական միավորների առանձնացում:

Ուսուաստանի շերտագրական կողեքսում (2006 թ.) առաջարկվում են հետևյալ հիմնական սեյսմաշերտագրական միավորները՝ սեյսմահորդիզոն, ենթակայանային սահմաններ: Ուեգիոնալ սեյսմաշերտագրական ստորաբաժանումը սեյսմահամալիրն է:

Տեղական սեյսմաշերտագրական ստորաբաժանումների անվանումը տրվում է շերտագրական ստորաբաժանումների անուններով՝ ավելացնելով սեյսմա-նախածանցը (սեյսմապարախումբ, սեյսմաշերտատուփ):

Անցյալ դարի 2-րդ կետում նավթի ու զազի հանքավայրերի որոնման արդյունավետ մեթոդ դարձավ սեյսմահետախուզությունը: 70-ական թվականներից նավթաբեր ավագանների երկրաֆիզիկական ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին բացահայտելու մինչև 10կմ և ավելի խորություններում ոչ միայն կառուցվածքային, այլև նավթի ու զազի քարաբանական և շերտագրական ծուղակները: Հետազյում սեյսմահետախուզության տվյալների մեկնարանումը հնարավորություն տվեց որոշելու խորքում տեղադրված ապարների կազմը, շերտերի հաջորդականությունը և հասակը: Սեյսմիկ տվյալների այդպիսի բազմակողմանի մեկնարանումը ստացավ սեյսմաշերտագրություն անվանումը:

Մեթոդի հիմքում ընկած է նստվածքային ապարների շերտախմբում անդրադարձվող սահմանների բացահայտումը և հետամտումը՝ ըստ պրոֆիլի: Այդ սահմանները սովորաբար համապատասխանում են շերտավորման մակերևույթներին և ապարների ֆիզիկական հատկությունների էական փոփոխություններին:

Այս դեպքում ընդերքի երկրաբանական կառուցվածքը բացահայտվում է սեյսմիկ կամ առաձգական ալիքների օգնությամբ: Այդ ալիքներն առաջանում են երկրի մակերևույթին պայմանավորված, վիրացիոն կամ հատուկ հարվածող սարքերի միջոցով: Տարբեր խտության ապարների սահմանում սեյսմիկ ալիքներն անդրադարձում են և հասնելով երկրի մակերևույթին՝ արձանագրուիմ են հատուկ սեյսմիկ կայաններում: Վերջինները հնարավորություն են տալիս կազմելու ժամանակավոր սեյսմիկ պրոֆիլներ, որոնց սխալը, հորատման տվյալների նկատմամբ կազմում է 5-20մ՝ մինչև 3-5կմ խորությունը: Ըստ ժամանակավոր սեյսմիկ պրոֆիլների՝ կարելի է գաղափար կազմել ընդերքի երկրաբանական կառուցվածքի մասին և հատկապես աններդաշնակության մակերևույթների առկայության մասին:

Նստվածքի հավասարակշիռ կուտակման դեպքում բոլոր շերտերը գուցահեռ են, և աններդաշնակությունները պայմանավորված են տեկտոնական շարժումներով, անհավասարակշիռ դեպքում բոլոր շերտերը տեղադրվում են միմյանց նկատմամբ թեր և կտրվածքում ունեն սեպի ձև:

Աններդաշնակությունների սահմանների արձանագրումը հնարավորություն է տալիս անջատելու տարրեր չափերի մարմիններ՝ հսկա ծածկույթներից մինչև փոքր մարմիններ: Ժամանակավոր սեյսմիկ պրոֆիլներում աններդաշնակություններն արձանագրվում են անդրադարձման սահմանների մոտեցմամբ կամ դրանք սեպանում են որևէ սեյսմիկ նիշի մոտակայքում:

Սեյսմիկ պրոֆիլի վերծանումը սեյսմաշերտագրության սկզբանական փուլն է: Այդ վերլուծությունից հետո անհրաժեշտ է կազմել հատակի, առաստաղի և հաստության քարտեզներ՝ անջատված յուրաքանչյուր սեյսմաշերտագրական միավորի համար:

Անհրաժեշտ է նշել, որ շերտերի հաջորդականության, կառուցվածքատեկտոնական, քարաբանամիներալաբանական և երկրաֆիզիկական մեթոդները հիմնված են սահմանափակ մակերեսային տարածում ունեցող հատկանիշների վրա, այդ պատճառով դրանց հնարավորությունները փոքր են և ավելի հաճախ օգտագործվում են ոեզիոնալ շերտագրական սանդղակների կազմման համար: Նշված ոչ հնեաբանական մեթոդներից ոչ մեկը համընդհանուր չէ ու չի կարող օգտագործվել լայն շերտագրական համահարաբերակցությունների ժամանակ:

ՄԱԳՄԱՅԱԿԱՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՀԱՍԱԿԱՅԻՆ ՈՒ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժայթքային (Լֆուզիվ) ապարների և տուֆերի շերտագրական մասնատման ժամանակ առաջանում են մի շաքր դժվարություններ.


1. Այդ ապարներում օրգանական մնացորդները բացակայում են կամ հազվադեպ են հանդիպում:
2. Շերտախմբերի կազմը և հաստությունը բավական արագ են փոփոխվում:

- Տեղադրման պայմանների ոչ պարզությունը:
- Դայկաների, ապարազանգվածների (շտորների) փոքր ինտրուզիաների, ջրաջերմային (հիդրոբերմալ) փոփոխված ապարների առկայությունը, որոնք հաճախ դժվարությամբ են տարբերվում էֆուզիաներից:

Հրաբխածին ստվարաշերտերի մասնատման ժամանակ մեծ մասամբ օգտվում են օժանդակ տեղական ստորաբաժանումներից: Մասնատման հիմնական սկզբունքը նույնն է, ինչ նատվածքային ապարների մոտ, միայն այստեղ պետք է հաշվի առնել հրաբխային ցիկլի զարգացման առանձնահատկությունները և հրաբխային ապարների կազմի էվոլյուցիայի օրինաչափությունները:

Ինտրուզիվ ապարները, կապված տեկտոնական զարգացման փուլերի հետ, միավորվում են ինտրուզիվ համալիրներում: Սովորաբար մեկ մազմայական օշախից առաջացած համալիրները գրյանում են համեմատաբար կարճ ժամանակահատվածում, դրանք կապված են ծալքավորության որոշակի փուլի կամ տեկտոնական խախտումների որոշակի համակարգի առաջացման հետ:

Սպամայական ապարների մասնատման ժամանակ մեծ շափով օգտվում են ապարների հասակային մասնատման իզոտոպային մեթոդներից, ինչպես նաև այդ ապարների և նատվածքային ապարների փոխհարաբերությունից: Ինտրուզիվ համալիրներին առաջարկվում է տալ հասակային անվանում՝ նշելով կազմը: Ինտրուզիվ ապարները մեծամասամբ պատռում են նատվածքային ստվարաշերտերը: Դրանք կարող են տեղաբաշխված լինել շերտերի միջև կամ հատել դրանք: Այս դեպքում ինտրուզիվ ապարների հասակը երիտասարդ է ներփակող ապարներից, ըստ որում՝ այս դեպքում որոշվում է ինտրուզիվ ապարների միայն ստորին հասակային սահմանը: Հասակի ավելի միշտ որոշման համար պետք է փնտել այնպիսի տեղամասեր, որտեղ ինտրուզիայի առաստաղը ծածկվում է նատվածքային ապարներով, որոնց հասակը հայտնի է: Եթե ինտրուզիվ ապարների և ծածկող նատվածքային ապարների կոնտակտում բացակայում են կոնտակտային փոխակերպման նշանները, ապա ինտրուզիվ ապարների հասակը կորոշվի պատռվող և ծածկող նատվածքային ապարների հասակի միջակայքում: Եթեևն այդ միջակայքը լինում է բավականին լայն, և այս դեպքում պետք է օգտվել հասակի ռադիոչափական մեթոդներից (նկ. 23):



Նկ. 23. Հրաբխածին ապարների հարաբերական հասակի որոշման սխեմատիկ էրկրաբանական կտրվածքներ

Երտափոր հրաբխածին և հրաբխածին-նստվածքային ապարների հարաբերական հասակի որոշման ժամանակ օգտագործվում են շերտագրական մասնատման ու համադրման ընդհանուր սկզբունքները: Հաճախ դրանց հասակը որոշվում է տակդիր և ծածկդիր նստվածքային ապարների միջոցով, որոնք պարունակում են օրգանական մնացորդներ:

ԲԱՑԱՐՁԱԿ ԵՐԿՐԱԺԱՄԱՍՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ապարների հարաբերական հասակի որոշման մեթոդներն իրական տվյալներ չեն տալիս որևէ նստվածքային, հրաբխածին և ինտրուզիվ ապարի բացարձակ հասակի մասին, հնարավորություն չեն տալիս գնահատելու դրանց ձևավորման ժամանակի տևողությունը: Հարաբերական երկրաժամանակագրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու միայն երկրաբանական իրադարձությունների հաջորդականությունը: Դրանց գործունեության ժամանակը և տևողությունը կարելի է բացահայտել միայն ռադիոէրկրաժամանակագրական մեթոդների օգտագործմամբ, կամ ինչպես ասում են, բացարձակ հասակի որոշման մեթոդների օգնությամբ: Բայց այստեղ «բացարձակ» բառի օգտագործումը ճիշտ չէ, քանի որ ստացված արդյունքները բացարձակ ճիշտ չեն, և ստացված նշանակությունները կրում են անձշտություններ:

«Բացարձակ» հասակի որոշման մեթոդներ գիտնականները ձգուում են մշակել դեռևս 18-րդ դարում: Ումանք ձգուում են հաշվարկել համաշխարհային օվկիանոսում աղերի կուտակման ժամանակը մինչև ժամանակակից քանակի մակարդակը, մյուսները գնահատում են նստվածքների կուտակման ժամանակը սկսած մինչ-

քեմրիից՝ հաշվի առնելով ժամանակակից նատվածքակուտակման արագությունը, ումանք էլ Երկրի ջերմության կորուստն էին հաշվարկում՝ սկսած սկզբնական հալութային վիճակից. բայց որևէ արդյունք չստացվեց:

19-րդ դ. վերջում ռադիոակտիվ տրոհման հայտնագործումը հնարավորություն տվեց որոշելու մի շարք ապարների և միներալների հասակը՝ դրանց իզոտոպային կազմի անալիզի օգնությամբ, այսինքն, ըստ դրանցում ռադիոակտիվ տարրերի բնական տրոհման սկզբնական, միջանկյալ և վերջնական արդյունքների պարունակության:

Ռադիոակտիվ տարրերի տրոհումն ընթանում է ինքնարերաբար, կայուն արագությամբ՝ անկախ որևէ ֆիզիկական գործընթացից, որը տեղի է ունենում Երկրի մակերևույթին կամ ընդերքում: Ռադիոակտիվ իզոտոպների տրոհման արագությունը հիմնավորված է տեսականորեն և ապացուցված փորձնականորեն:

Այժմ լայնորեն օգտագործվում են հետևյալ ռադիոէրկրաժամանակագրական մեթոդները՝ ուրան-թորիում-կապարային, կապարային, կալիում-արգոնային, ուրիշիում-ստրոնցիումային, ռադիոածխածնային:

Ուրան-թորիում- կապարային մեթոդ. հիմքում ընկած է ուրանի ու թորիումի ռադիոակտիվ իզոտոպների տրոհման գործընթացը. $^{238}\text{U} \rightarrow ^{206}\text{Pb}$, $^{235}\text{U} \rightarrow ^{207}\text{Pb}$, $^{232}\text{Th} \rightarrow ^{208}\text{Pb}$: ^{238}U կիսատրոհման ժամանակահատվածը 4510մլն. տարի է, ^{235}U - 713 մլն. տարի, ^{232}Th -15170 մլն. տարի է: Այս մեթոդի դեպքում որոշվում է կապարի ոչ ռադիոգեն իզոտոպների փոխարաբերությունը առանձին-առանձին: Ավելի պարզ մեթոդ է հասակի որոշումն՝ ըստ ընդհանուր կապարի, այսինքն՝ ըստ $\text{Pb}/\text{U}+\text{Th}$ հարաբերության: Ավելի հեռանկարային է հասակի որոշման եղանակն՝ ըստ սովորական կապարի՝ զալենիտում, որը պարունակում է U և Th աննշան պարունակություն, ինչպես նաև ըստ U/Pb ՝ ցիրկոնում:

Կապարային մեթոդն ամենահին և լավ մշակված մեթոդն է միջուկային երկրաժամանակագրության մեջ: Առաջին անգամ կիրառել է Բ.Բոլտվուդը 1907թ.: Այժմ զգալի չափով կատարելագործվել է և օգտագործվում է մաս-սպեկտրոմետրում՝ կապարի անալիզի միջոցով: Այդ պատճառով հաճախ կոչվում է կապար-իզոտոպային մեթոդ: Այս մեթոդով հասակը որոշելու համար օգտագործվում են ուրանի և թորիումի միներալները:

Ռուբիդիում-ստրոնցիումային մեթոդ. հիմնվում է ^{87}Rb ռուբիդիումի ռադիոակտիվ իզոտոպի շատ դանդաղ տրոհման և նրա ^{87}Sr ստրոնցիումի վերափոխման վրա: Այժմ ռուբիդիումի ռադիոակտիվ իզոտոպը կազմում է միջին քնական ռուբիդիումի 27.85%: Ռուբիդիումի կիսատրոհման ժամանակահատվածը 47000 մլն տարի է: Ռուբիդիումի իզոտոպը խառնուրդի ձևով առկա է կալիումային միներալներում, ավելի հաճախ բիոտիտում, մուսկովիտում և լեպիդոլիֆում: Այս մեթոդով հասակը որոշվում է համաձայն ապարի մեջ ռուբիդիումի և ստրոնցիումի համախառն պարունակության: Տրոհման շատ ցածր արագության պատճառով այս մեթոդը հիմնականում օգտագործվում է մինչքեմքրիի ու պալեոզոյի ապարների հասակի որոշման համար:

Կալիում-արգոնային մեթոդ. հիմնվում է ^{40}K ռադիոակտիվ իզոտոպի տրոհման վրա, որի արդյունքում այդ իզոտոպի մոտ 12% վերափոխվում է արգոնի՝ ^{40}Ar , կիսատրոհման ժամանակահատվածը 1300 մլն. տարի է: Այս մեթոդն օգտագործվում է փայլարների, ամֆիբոլների, կալիումի դաշտային սպարի, գլաուկոնիտի և հրային սպարների համախառն նմուշի ուսումնասիրման դեպքում, որոնց հասակը մի քանի տասնյակ հազարից մինչև մի քանի հարյուր միլիոն տարի է: Խորհուրդ չի տրվում այս մեթոդով որոշել փոխակերպային ապարների հասակը, քանի որ 300°C ջերմաստիճանից բարձր և մեծ ձնշման դեպքում արգոնի զգալի մասը ապարից հեռանում է:

Նախնական մշակման փուլում են գտնվում մի շարք այլ մեթոդներ՝ հիմնված այնպիսի առարերի քնական ռադիոակտիվության վրա, ինչպիսիք են՝ In^{115} , Te^{130} , La^{138} , Lu^{176} , Re^{187} , Sm^{147} , Bi^{209} , V^{50} , Sb^{123} , I^{124} , Nd^{150} : Դրանց մեջ կան տարրեր կիսաքայլայման խիստ երկար ժամանակամիջոցով՝ Te^{130} ($\sim 10^{21}$ տարի), Bi^{209} (10^{17} տարի), In^{115} ($6 \cdot 10^{14}$ տարի): Այդ տարրերի քայլայման վերջնական արդյունքների կուտակումն առայժմ անհնար է հայտնաբերել քանակական վերլուծության ժամանակակից մեթոդների օգնությամբ: Վերը նշված կիսաքայլայման երկարատև ժամանակաշրջան ունեցող տարրերը հնարավոր կլինի օգտագործել ապագայում, երբ կիրառվեն ավելի մեծ զգայունություն ունեցող փորձասարքեր, քան ժամանակակիցներն են:

Ռադիոածխածնային մեթոդ. հիմքում ընկած է օրգանական մնացորդներում և օրգանական նյութի բարձր պարունակությամբ

ապարներում ^{14}C ռադիոակտիվ իզոտոպի որոշումը: Այս իզոտոպը մշտապես առաջանում է մթնոլորտում ^{14}N ազոտից՝ տիեզերական ճառագայթման ներգործության տակ և յուրացվում է կենդանի օրգանիզմների կողմից: Մահացումից հետո տեղի է ունենում ^{14}C -ի որոշում: Իմանալով այդ տրոհման արագությունը՝ կարելի է որոշել օրգանիզմի թաղման հասակը:

^{14}C -ի կիսատրոհման ժամանակահատվածը 5750 տարի է: Այդ պատճառով այս մեթոդով որոշվում է այն նստվածքների հասակը, որոնք 60-80 հազար տարվանից մեծ չեն:

Ռադիոէրկրաժամանակագրական մեթոդներն անընդհատ կատարելագործվում են. մեծանում է դրանց ճշտությունը, մշակվում են նոր մեթոդներ:

Այդ մեթոդները, բացի ռադիոածխածնային մեթոդից, առավել շատ օգտագործվում են մազմայական ապարների հասակի որոշման համար, ավելի քիչ փոխակերպային ապարների, նստվածքային ապարների մոտ այդ մեթոդները ունեն կողմնակի նշանակություն, իսկ հասակի որոշումը կատարվում է այդ ապարները պատռող կամ ծածկող ինտրուզիվ ապարների կամ դրանց հետ շերտավորվող էֆուզիվ ապարների, տուֆերի, մոխիրների միջոցով:

Փորձեր են արվում ռադիոակտիվ մեթոդներով՝ K/Ar որոշել ավազային ապարների հասակն ըստ կալիում պարունակող միներալի՝ զլատուկոնիտի, իսկ կավային ապարների հասակը՝ ըստ փայլարների:

Ռադիոչափական մեթոդներն ունեն մեծ ապագա: Նրանք հնարավորություն կտան պարզելու ոչ միայն դարաշրջանների, ժամանակաշրջանների և առանձին էպոխաների, այլև երկրաբանական ժամանակի ավելի փոքր հատվածների տևողությունը: Այդ ամենը հնարավորություն կտա զգալի չափով ճշտել երկրաբանական ժամանակագրությունը: Ըստ ռադիոչափական տվյալների՝ կազմված է երկրաբանական ժամանակագրական սանդղակ, որն անընդհատ ճշտվում է: Աղյուսակ 1-ում բերված է 2004 թ. հրատարակված երկրաբանական սանդղակը: Սանդղակը որոշ չափով փոփոխված է ու պարզեցված:

ԱՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Կտրվածքում շերտերի մասնատման հիմնական եղանակները;
2. Կենսաշերտագրական մեթոդը, որպես մասնատման և համայնական հիմնական մեթոդ. առավելությունը մյուս շերտագրական մեթոդների նկատմամբ:
3. Կենսաշերտագրական ստորաբաժանումները և նրանց առանձնացման սկզբունքները:
4. Կտրվածքի մասնատումը կենսաշերտագրական մեթոդների հիման վրա. օրգանական մնացորդները և մասնատման սկզբունքները:
5. Ժամանակը շերտագրությունում. երկրաբանական ժամանակի որոշումը՝ որպես հիմնական նպատակ:
6. Միկրոհինէարանական մեթոդի դերը շերտագրական խնդիրների լուծման գործում :
7. Բեղմնիկ-ծաղկափոշային վերլուծություն, նրա առանձնահատուկ տեղը մյուս հնէարանական մեթոդների շարքում
8. Հնաէկոլոգիական մեթոդ. ուսումնափրության օբյեկտները, բնակեցման միջավայրը, կապը ֆիֆկաշխարհագրական պայմանների հետ:
9. Շերտագրական ընդմիջում. սահմանումը, առաջացման պատճառները, աններդաշնակության հիմնական տեսակները:
10. Ֆացիա. սահմանումը և նրա տեսքի վրա ազդող հիմնական գործուները: Ֆացիաների շերտագրական նշանակությունը;
11. Լիթոշերտագրական հետազոտությունների հիմնական մեթոդները, մասնատման սկզբունքները:
12. Երկրաբիմիական մեթոդը շերտագրությունում:
13. Սեկվենտային շերտագրական մեթոդի հիմնական հասկացությունները և հիմնական տիպերը:
14. Երկրաֆիֆկական մեթոդների կիրառումը՝ շերտագրական խնդիրների լուծման համար:
15. Էլեկտրոկարոտաժը՝ որպես հորատանցքերի մասնատման և համադրման մեթոդ:
16. Մեյսմաշերտագրական մեթոդների նշանակությունը:
17. Հնամագնիսական մեթոդի կիրառման սկզբունքը:

18. Մագմայական ապարների հասակային ու շերտագրական մասնատման առանձնահատուկությունները, հասակի որոշումը:
 19. Իրադարձային շերտագրություն. մեթոդիկան, էությունը, խնդիրները և նպատակը, կարևորագույն իրադարձային սահմանները:
 20. Կիմայաշերտագրական ստորաբաժանումներ. սահմանումը և տեսակները:
 21. «Բացարձակ» հասակի որոշման մեթոդները:

**ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՈՒ ՏԻՊԱՅԻՆ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ
ԿՏՐՎԱԾՔՆԵՐ**

Խոշորամասշտաբ երկրաբանական հանույթի և նախնական թեմատիկական ուսումնասիրությունների ընթացքում ամենակարևոր աշխատանքներից մեկը շերտագրական կտրվածքների մասնագիտացված ուսումնասիրությունն է, որն ապահովում է հանույթի մասշտաբին համապատասխան շերտագրական ստվարաշերտերի մասնատման մանրակրկիտությունը, դրանց հասակի որոշումը, առանձնացված շերտագրական ստորաբաժանումների համահարաբերակցման հիմնավորումը:

Շերտագրական կտրվածքները կարող են կազմվել ըստ բնական ելքերի, արհեստական փորվածքների կամ հորատանցքերի հանուկի (կեռնի): Վերջին դեպքում անհրաժեշտ պայման է տվյալ տարածքում տեկոտնական խախտումների թույլ արտահայտությունը, հանուկի լրիվ ելքը և կարոտամի անցկացումը:

Ըստ նշանակության, բնութագրման և ուսումնասիրման անհրաժեշտ լրիվության տարբերում են հենակետային կտրվածքներ (ուեզիոնալ նշանակության և առանձին կառուցվածքաֆացիալ գոնաների) և շերտագրական ստորաբաժանումների տիպային կտրվածքներ՝ որոշակի տարածքի սահմաններում:

✓ **ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՆԵՐԻ
ԸՆՏՐՄԱՆ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

Հենակետային շերտագրական կտրվածք կոչվում է նստվածքային և հրաբխածին-նստվածքային ստվարաշերտի այն ներկայացուցչական կտրվածքը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու նստվածքների հաջորդականությունը, հիմնավորելու շերտագրական ստորաբաժանումների ծավալը ու հասակային սահմանները և

համալիր, առաջին հերթին քարաբանական և հնէաբանական, ուսումնասիրությունների հիման վրա բավարար լրիվությամբ բնութագրելու տվյալ տարածքի նստվածքները:

Հենակետային շերտագրական կտրվածքները հիմք են հանդիսանում տեղական և ոեզիոնալ շերտագրական սխեմաներ կազմելու համար, այդ նյութերի հիման վրա կազմվում են երկրաբանական քարտեզները:

Հենակետային շերտագրական կտրվածքների ուսումնասիրումը հանդիսանում է ուսումնասիրությունների հասուկ տեսակ, որն իրականացվում է երկրաբանական հանույթին նախորդող փուլում: Որպես բացառություն, այն կարող է կատարվել երկրաբանական հանույթի ընթացքում և տարածքի լրացուցիչ ուսումնասիրման կամ քարտեզը հրատարակման պատրաստելու դեպքում:

Հենակետային շերտագրական կտրվածքների նկարագրման ժամանակ պարտադիր է քարաբանական, հնէաբանական և երկրաբիմիական ուսումնասիրությունների կատարումը:

1. Որպես հենակետային շերտագրական կտրվածքներ, ընտրվում են. նստվածքային ստվարաշերտերի այն կտրվածքները, որոնք ներկայացնում են նստվածքների առավել լրիվ ու հնէաբանորեն բնութագրված հաջորդականությունը և արտացոլում են կոնկրետ երկրաբանական ոեզիոնների երկրաբանությունը:
2. Արդյունավետ նստվածքային և հրաբիսանստվածքային ստվարաշերտերի առավել լրիվ կտրվածքները, որոնք բնութագրում են նստվածքային հանքագոյացումների (նավթաբեր, գազաբեր և այլն) հասակը, կազմությունը և քարաբնաֆացիալ առանձնահատկությունները:
3. Կառուցքածքաֆացիալ գոնաների (նստվածքային հնավագանների) տիպային կտրվածքները:
4. Նոր շերտագրական ստորաբաժանումների (կամ վերանայման ենթակա) շերտատիպերը:

Հենակետային շերտագրական կտրվածքները կարող են կազմված լինել մի քանի միմյանց ծածկող կտրվածքների միավորումից:

ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՆԵՐԻ ՍԿԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հենակետային նստվածքների դաշտային նկարագրման ժամանակ նշվում են. կտրվածքի ճշգրիտ աշխարհագրական տեղադիրքը, ռեզինը, կառուցվածքաֆաջիալ զոնան, կտրվածքի սկզբի ու վերջի շերտագրական և տեղագրական կապակցումը: Տրվում է կտրվածքի ընդհանուր բնութագիրը, հարակից, տակդիր և ծածկող գոյացությունների կարծ բնութագիրը (կոնտակտների բնույթը, նյութական կազմը), շերտ առ շերտ քարարանահնեաբանական, ինչպես նաև ապարագրական (հրաբխածին-նստվածքային ապարների՝ լայն տարածման դեպքում) նկարագրությունը:

Կտրվածքի տակդիր ու ծածկող գոյացությունների ընդհանուր բնութագիրը պետք է ուղեկցվի մերկացումների պատկերմամբ (լուսանկարներ, գծապատկերներ), որոնց համախմբությունը պետք է ներկայացնի տվյալ հենակետային կտրվածքը: Գծապակտերների ու լուսանկարների վրա պետք է արտահայտվեն կտրվածքում առածնացված բոլոր ստորաբաժանումների սահմանները, փոխհարաբերությունը և տեղադրման պայմանները, ինչպես նաև տվյալ ստորաբաժանման դիրքը և փոխհարաբերության բնույթը՝ հարակից տակդիր և ծածկող ստորաբաժանումների հետ:

Շերտ առ շերտ քարարանահնեաբանական նկարագրությունը կատարվում է հետևյալ հաջորդականությամբ:

Քարարանական նկարագրությունն

- շերտի ընդհանուր բնութագիրը՝ ապարի անվանումը, գույնը, նյութական կազմը, կառուցվածքը (ստրուկտուրան) և կազմությունը (տեքստուրան):
- շերտի սահմաններում կազմի, կառուցվածքային և կազմության հատկանիշների փոփոխությունների ուղղվածությունը:
- ապարի կառուցվածքային բաղադրամասերը, այդ թվում՝ օրգանական մասնագրոները և դրանց քանակական փոխհարաբերությունը:
- կոնկրեցիաները, խառնուրդները, ներփակվածքները, երկրորդային փոփոխությունները և այլ քարարանական հատկանիշները:
- նրբաշերտերը (ենթաշերտերը), նշելով դրանց կազմը, հաստությունը, սահմանները և տեղաբաշխումը շերտում:

- շերտավորման վերին մակերևույթը և մյուս շերտերին անցման բնույթը:
- շերտի հաստությունը:

Կտրվածքի շերտ առ շերտ նկարագրությունն ուղեկցվում է օրգանական մնացորդների հավաքմամբ (ներառյալ միկրոհներանական անալիզի համար ապարի նմուշը), ապարների նմուշների վերցմամբ ֆիզմեխանիկական, երկրաքիմիական, ապարագրական, բիումալոգիական և այլ անալիզների համար:

Հնկարանական բնութագրումը ներառում է.

- օրգանական մնացորդների տաքտնոմիական կազմը և օրգանիզմների կենսագործունեության հետքերը:
- ֆառնայի և ֆլորայի տարրեր խմբերի քանակական փոխհարաբերությունը
- մնացորդների պահպանվածության աստիճանը (լավ, բավարար, վատ):
- թաղման բնույթը (ապրելակերպային դիրքը, մշակվածությունը, տեղափոխման նմուշները և այլն):
- օրգանիզմների մնացորդների կողմնորոշումը (աշխարհագրական շերտավորման հարթության նկատմամբ):

Բերվում են տվյալներ նախկինում տվյալ կտրվածքում հավաքված օրգանական մնացորդների մասին:

Կտրվածքի քարարանահնեաբանական նկարագրության ժամանակ նշվում են կտրվածքի առանձին մասերի և ամբողջ կտրվածքի գումարային հաստությունները:

Չորրորդական նստվածքների հենակետային կտրվածքների նկարագրման ժամանակ պարտադիր է նաև երկրածնաբանական և հնամագնիսական մեթոդների կիրառում:

ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԿՏՐՎԱԾՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Հենակետային կտրվածքների արդյունքների վերաբերյալ վերջնական հաշվետվություն կամ մենագրություն կազմելիս անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ տվյալները.

1. Ընդհանուր տվյալներ կտրվածքի մասին՝ կտրվածքի կարգը, ռեզիստանտի կամ կառուցվածքաֆորմացիոն զոնայի անվանումը, ձգրիտ տեղավայրը, ուսումնասիրվող նստվածքների հա-

սակային ծավալը, փոխարաքերության բնույթը տակդիր և ծածկող ապարների հետ, տարածական կայունության աստիճանը:

2. Հենակետային կտրվածքի շրջանի պիեմատիկ երկրաբանական քարտեզը կամ երկրաբանական պրոֆիլները՝ մանրամասն մասնատմամբ մինչև շերտատուփերը, որոնք ցույց են տալիս երկրաբանական կառուցվածքը և կտրվածքը կազմող կետերի տեղաբաշխումը:
3. Խոշգրամասշտար շերտ առ շերտ շերտագրական սյունակը, որը լրիվ արտացոլում է նստվածքների քարաբանական և հնէաբանական բնույթագիրը, կառուցվածքի ցիկլայնությունը, մերկացումների գծանկարները և լուսանկարները, անհրաժեշտության դեպքում կտրվածքի մասին միներալաբանական, երկրաբիմիական, երկրաֆիզիկական և հնամագնիական տվյալները: Հորատման անցքերով կազմված կտրվածքների համար պարտադիր են կարոտաժային դիագրամները, ակնարկային երկրաբանական քարտեզը, որի վրա նշված է հենակետային կտրվածքի ճիշտ տեղադիրքը:
4. Կտրվածքի շերտ առ շերտ նկարագրությունը, (ներքեւից վերև)՝ շերտագրական ստորաբաժանումների քարաբանական և հնէաբանական բնույթագրմամբ, դրանց շերտատիպերի նկարագրմամբ, ստորաբաժանումների սահմանների հիմնավորմամբ և դրանց վերագրմամբ այս կամ այն ռեզինալ միավորներին, որոնք որոշված են այլ վայրերում:
5. Ստորաբաժանումների ֆացիալ բնույթագիրը:
6. Ֆառնայի ու ֆլորայի բնույթագիրը, դրանց այն համալիրների անշատումը, որոնք բնորոշ են որոշակի շերտագրական ստորաբաժանումների համար:
7. Եզրակացություններ առանձնացված շերտագրական ստորաբաժանումների հասակի մասին և դրանց համայրումը ընդհանուր և ռեզինալ շերտագրական սանդղակի հետ:
8. Տարածքի հնաշխարհագրական զարգացման ընդհանուր օրինաչափությունները:

Քանի որ հենակետային կտրվածքներն ունեն կարևոր նշանակություն շերտագրական և մասնավորապես խոշորամասշտար երկրաբանական քարտեզագրման համար, այդ պատճառով դրանց ուսումնասիրության արդյունքների հրապարակումն անհրաժեշտություն է:

ՏԵՂԱԿԱՆ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ
ՏԻՊԱՅԻՆ ԿՏՐՎԱԾՔՆԵՐ

Տիպային կտրվածքն ուսումնասիրված տարածքում մեկ կամ մի քանի շերտագրական ստորաբաժանումների լավագույն կտրվածքն է: Այն արտահայտում է ուսումնասիրվող տարածքում տվյալ ստորաբաժանման (կամ ստորաբաժանումների) կազմի, կառուցվածքի բնորոշ առանձնահատկություններն, ինչպես նաև տարածական սահմանները (նկ. 24, 25):

Երկրաբանահանութային աշխատանքների ժամանակ, առաջին անգամ որոշված նոր ստորաբաժանման համար, տիպային է համարվում շերտատիպ կտրվածքը:


Հենակետային և տիպային կտրվածքների ուսումնասիրության հիման վրա նախապատրաստվում է շերտագրական հիմք՝ խոշորամասշտար երկրաբանական քարտեզագրման համար: Տիպային կտրվածքների ուսումնասիրությունը երկրաբանահանութային աշխատանքների բաղկացուցիչ մասն է:

Որպես տիպային կտրվածք ընտրվում է մերկացումը (կամ մերկացումների խումբը), որտեղ տվյալ շերտախմբի կտրվածքն ամբողջական և խաչաձև է ապարների տարածմանը:


Տիպային կտրվածքը (կամ մի քանի տիպային կտրվածքները) պետք է ընդգրկի տվյալ տարածքի բոլոր ստորաբաժանումները, որոնք ընդգրկված են շերտագրական սխեմայում դա հնարավորություն կուտա բացահայտելու այլ ստորաբաժանումների հաստությունը և փոխհարաբերությունը: Ցուրաքանչյուր կտրվածք կարող է լինել միասնական՝ կազմված կառուցվածքի մի հատույթում կամ նրա բաղկացուցիչ մասերից:

Գլխակոր տիպային կտրվածքի բացակայող մասերը լրացնելու համար կազմվում են մի շարք առանձին կտրվածքներ՝ առանձին մերկացումներում կամ հաստություններում, որոնք միմյանց ծածկում են լրիվ կամ մասնակիորեն (նկ. 26, 27):


Կտրվածքները հիմնականում կազմվում են ըստ բնական ելքերի. անհրաժեշտության դեպքում անցկացվում են թերթ լեռնային փորվածքներ: Ծածկված շրջաններում օգտագործում են պարամետրիկ, կառուցվածքային, որոնողական և այլ հորատանցքերը:




Նկ. 24. Շամուտի շերտախմբի
ամփոփիչ կտրվածք




1. մերգել, 2. կավ, 3. կավ կրային,
 4. ալյուրլիթ, 5. ավազաքար կրային,
 6. կոնցլումերաս, 7. կոնցլումերաս
բազալյախի՝ ափազի և կավի
պարունակությամբ 10-50%,
 8. պորֆիրիտ, 9. ածուխ և ածխային
թերթաքար



Նկ. 25. Դիլիջանի շերտախմբի
ամփոփիչ կտրվածք



1. Կոնվունցիատ միջնաբեկորային,
 2. Կոնվունցիատ մանրաբեկորային,
 3. Ավազաքար խոշորահաստիկային,
 4. Ավազաքար միջնահաստիկային,
 5. Ավազաքար մանրահաստիկային,
 6. ալերոլիթ, 7. կավ, 8. կավային թերթաքար, 9. այրվող թերթաքար,
 10. ածուխ և ածխային թերթաքար,
 11. անտեղիտ



Կրաքարեր

Հիմքային և գերիհմքային ներժայտքային ապարներ


Մուգ նումպիթային կրաքարեր

Ծերտավոր իրադիտական վախճային ապարներ

Բազալյային կոնկրումերատներ

Անդեգիտադաշտներ, դացիտներ, տրախիդացիտներ

**Նկ. 26. Երկրաբանական կտրվածք Զիլ գետի հովոսով,
Զիլ գյուղից հյուսիս**



Տոփանստվածքային ապարներ (շիրակի շերտախումբ) (P_2^3)

Ավազքարեր կրային (P_2^1 - P_2^2)

Կրաքարեր ցամաքածին կյուրի խարնուրդով (Pg_1^1)

Կրաքարեր (K_{2x-3})

Կրաքարային կոնկրումերատներ (P_1^2)

Տոփակոնքումերատներ (P_1^1)

Պորֆիրիտներ (P_1^3)

Գալրը պիրոքտիտներ

**Նկ. 27. Տեկոսոնաշերտագրական ասսիմետրիկ ծալք
Զննագետ գետի հովոտում**

Տիպային կտրվածքների փաստագրությունը նախատեսում է. 1) տեղամասի երկրաբանական պրոֆիլի կամ խոշորամասշտար հատակագծի կազմում, որոնց վրա արտացոլվում են մերկացումների և փորվածքների տեղաբաշխումը, ուսումնասիրվող ստորաբաժանումների կառուցվածքային փոխհարաբերությունը տակդիր և ծածկող ապարների հետ, ապարների տեղադրման տարրերը, օրգանական մնացորդների, քարաբանական նմուշների, հանքանմուշների հավաքման տեղերը; 2) շերտագրական սյունակի շերտ առ շերտ գծապատկերը՝ խոշոր մասշտարով և մանրամասն մշակված պայմանական նշաններով։ Նկարագրման ենթակա են բոլոր ապարները, ինչպես նաև նստվածքների տեղադրման պայմանները և օրգանական մնացորդների կազմը։

Կտրվածքի շերտ առ շերտ ուսումնասիրմանը գուգընթաց ապարների առանձին տարատեսակները միավորվում են շերտատուութերում, անշատվում են բնորոշիչ հորիզոններ և շերտեր։ Պետք է խուսափել կտրվածքի չափազանց մանրամասն մասնատումից, շերտերի նուրք հերթագայման դեպքում չպետք է նկարագրել յուրաքանչյուր շերտը կամ որիմի յուրաքանչյուր տարրը ֆլիշում։ Այստեղ ճիշտ է ապարների շերտատութերի անշատումը, ինչը բնորոշվում է որիթմերի որոշակի հավաքածուով։

Հատկապես կարևոր է կտրվածքում օրգանական մնացորդների որոնումը և հավաքումը, որոնք կտրվածքում վերցվում են շերտ առ շերտ։ Մերկացումներում հավաքվում են ֆաունայի ու ֆլորայի բոլոր խմբերը։

ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Շերտատիպային կտրվածքներ, շերտատիպային շերտագրական սահմաններ:
2. Հենակետային շերտագրական կտրվածքների ընտրման և նկարագրման կանոնները, պարտադիր պայմաններ:
3. Հենակետային կտրվածքների արդյունքների ձևավորման պահանջները և ներկայացման ենթակա անհրաժեշտ տվյալները:
4. Տեղական շերտագրական ստորաբաժանումների տիպային կտրվածքի ընտրման պարտադիր պահանջները: Տիպային կտրվածքների փաստագրության կանոնները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Бондаренко О.Б., Михайлова И.А.** Палеонтология. В 2-х т. 3-е изд. М.: Изд. центр «Академия», 2011.
2. Габдулин Р.Р. Историческая геология. М.: Изд-во МГУ, 2005. 246 с.
3. Жижченко Б.П. Методы стратиграфических исследований, М., изд. Высшая школа, 1968. 232 с.
4. Зубкович М.Е. Методы палеонтолого-стратиграфических исследований, М., изд. Высшая школа, 1968. 232 с.
5. Короновский Н.В., Ханин В.Е., Ясаманов Н.А. Историческая геология. 2-е изд. М.: Изд. центр «Академия», М.: Изд-во МГУ, 2006. 448 с.
6. Международный стратиграфический справочник. (Сокращенная версия). М. ГЕОС, 2002. 38 с.
7. Практическая стратиграфия под. Ред. **В.И.Никитина, А.И. Жамойда.** Л.: Недра, 1984. 320 с.
8. Степанов Д.И., Мессежников Т.Г. Общая стратиграфия Л.: Недра, 1979. 423 с.
9. Стратиграфический кодекс России, Л.: Изд ВСЕГЕИ. 2006. 96 с.
10. Стратиграфический кодекс СССР, Вып. 25, Л.: 1991, 63 с.
11. Стратиграфический кодекс СССР, Л.: ВСЕГЕИ, 1977, 79 с.
12. Холмовой Г.В., Ратников В.Ю., Шпуль В.Г. Теоретические основы и методы стратиграфии. Изд. – полиграф. Центр Воронежского госунта, г. Воронеж, изд-во ВГУ. 2008. 138 с.
13. Սարգսյան Հ.Հ. Հայաստանի ուղղիոնալ երկրատեկութիւնիա, Երևան, ԵՊՀ հրատ., 1989. 276 էջ:
14. Սարգսյան Հ.Հ., Սարգսյան Ռ.Հ. Երկրաբանական տերմինների եռալեզու հանրագիտարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2007. 672 էջ
15. Նեմկով Գ.Ի., Սուրատով Ս.Վ. և այլք. Պատմական երկրաբանություն. Երևան, ԵՊՀ հրատ., 1982. 512 էջ

Գլուխ 1.

Ընդհանուր դրույթներ	3
Երտագրական ստորագրությունների զարգացման համառոտ պատմությունը	3
Երտագրության զարգացման փուլերը	7
Երտագրության սկզբունքները	10
Երտագրության հիմնական խնդիրները	13
Երտագրական հիմք	16
<i>Ստուգիչ հարցեր</i>	18

Գլուխ 2.

Երտագրական ստորագրաժանումների առանձնացման շափանիշները	19
Ընդհանուր (միջազգային) և տեղական (օժանդակ)	
Հերտագրական ստորագրաժանումներ	21
Ընդհանուր (միջազգային) շերտագրական ստորագրաժանումների ծավալը և բովանդակությունը	22
<i>Միջազգային շերտագրական տեղեկատու.</i>	
Ուսուաստանի շերտագրական կողեքս	26
Տեղական շերտագրական ստորագրաժանումներ	28
Զննալ կենսաշերտագրական ստորագրաժանումներ	29
Ընդհանուր (միջազգային) շերտագրական սանդղակ	30
Նկարագրման և անվարկման կանոնները	33
Երտատիպ կտրվածքների նկարագրման կանոնները	33
Երտագրական կողեքսում ընդունված տեղական	
շերտագրական ստորագրաժանումներ	34
Օժանդակ շերտագրական ստորագրաժանումներ	35
Երտագրական ստորագրաժանումների նկարագրման սխեման	36
<i>Ստուգիչ հարցեր</i>	38

Գլուխ 3.

Կտրվածքների մասնատման և համադրման մեթոդները	39
Ընդհանուր հասկացություն շերտագրական մասնատման ու համադրման մասին	39
Կենսաշերտագրական մեթոդներ	40
<i>Նկակարող ձևերի մեթոդ</i>	42

Օրգանական համալիրների մեթոդ	43
Ֆիլոգենետիկական, էվոլյուցիոն մեթոդ	44
Միկրոհնեաբանական մեթոդ	47
Բեղմնիկ-ծաղկափշային վերլուծություն	48
Հնաէկոլոգիական մեթոդ	50
Համադրության քանակական մեթոդներ	52
Բրածո օրգանիզմների տարածումը կտրվածքում	52
Ֆառունայի ու ֆլորայի տարբեր խմբերի	
կենսաշերտագրական նշանակությունը	54
Երկրաբանաշերտագրական (ոչ հնէաբանական) մեթոդներ	62
Տեկտոնաշերտագրական մեթոդներ	63
Քարաբանամիներալարանական մեթոդ	70
Կլիմայաշերտագրական մեթոդ	75
Բնորոշիչ հորիզոնների մեթոդներ	77
Մեկվենտային շերտագրություն	78
Իրադարձային շերտագրություն	79
Երկիր պատմության կարևորագույն	
իրադարձային սահմանները	81
Երկրաբիմիական մեթոդ	87
Երկրափիզիկական մեթոդներ	88
Հնամազնիսական մեթոդ	90
Մեյսմաշերտագրություն	92
Մազմայական ապարների հասակային ու	
շերտագրական մասնատման առանձնահատուկությունները	94
Բացարձակ երկրաժամանակագրություն	96
<i>Ստուգիչ հարցեր</i>	100
Գլուխ 4.	
Հենակետային և տիպային շերտագրական կտրածքներ	102
Հենակետային շերտագրական կտրվածքների ընտրման և նկարազրման կանոնները	102
Հենակետային կտրվածքների արդյունքների ձևավորման պահանջները	105
Տեղական շերտագրական ստորաբաժանումների տիպային կտրվածքներ	107
<i>Ստուգիչ հարցեր</i>	111
Գրականություն	112

ՀՈՂՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ, ԱՐԱՅԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ուսումնական ձեռնարկ

Համակարգչային ձևավորումը՝ Ն.Օ. ԽՎԻԿՑԱՆԻ

Զափալ՝ 60x84^{1/16} : 7.25 տպագր. մամուլ:
Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 84:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

Երևանի պետական համալսարանի
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում
Երևան, Ալ. Մանուկյան 1:

17869